



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՇԻՎՆԵՐ 2010



# Չ Ե Կ ՈՒ Յ Ց

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՇՎՆԵՐ  
2010

Ե Ր Ե Վ Ա Ն 2012

2010 ԱԱՀ ՁԵԿՈՒՅՑԻ ՆՅՈՒԹԵՐԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՎԵԼ ԵՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՇԻՎՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ԿՈՂՄԻՑ: ՁԵԿՈՒՅՑԻ ՄՇԱԿՄԱՆՆ ԱՆՄԻՋԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ Է ՑՈՒՑԱԲԵՐՎԵԼ ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ Ս. ԱՎԴԱԼԲԵԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԿՈՂՄԻՑ:

ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ՝ ք.գ.դ. պրոֆեսոր Դերենիկ Դումանյան

2010 ԱԱՀ զեկույցը կազմել են՝

Ս. Խարազյան  
Ն. Դավթյան  
Ա. Դավթյան  
Ա. Աղազարյան (տ.գ.թ, դոցենտ)  
Գ. Հարությունյան  
Հ. Սայադյան (տ.գ.թ)

Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը հաշվի առնելով առողջապահական ծախսերի հաշվառման միջազգային ստանդարտացման անհրաժեշտությունը ՏԶՀԿ-ի (OECD) և Եվրոպական վիճակագրական ծառայության (Eurostat) հետ համատեղ մշակել է ԱԱՀ կազմման մեթոդական ուղեցույցը: Հիմնական սահմանումների և հասկացությունների առումով ԱԱՀ մեթոդաբանությունը խարսխվում է Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) կողմից մշակված «Առողջապահության հաշիվների համակարգի» սահմանումների և հասկացությունների վրա: ՏՀԶԿ կողմից մշակված՝ «Առողջապահության հաշիվների համակարգ» ձեռնարկը սահմանում է Առողջապահության հաշիվների միջազգային դասակարգումը, որտեղ առողջապահության ծախսերի բոլոր տեսակները տարանջատված են ըստ կատեգորիաների: Հիմնվելով վերոնշյալ մեթոդաբանության վրա 2005 թվականից Հայաստանում մշակվում են Առողջապահության ազգային հաշիվները: Առողջապահության ազգային հաշիվները (ԱԱՀ) հանդիսանում են առողջապահության համակարգի ֆինանսավորման խնդիրները հասկանալու համար հիմնական գործիքը:

2010 ԱԱՀ զեկույցը կազմված է 76 էջից:

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ .....	4
ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ .....	6
ԳԼՈՒԽ 1.ԱԱՀ-Ի ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ.....	7
1.1. Առողջապահության ազգային հաշիվները Հայաստանում .....	7
1.2. Առողջապահության ազգային հաշիվների նպատակային նշանակությունը .....	7
1.3. Առողջապահության ազգային հաշիվների մեթոդաբանությունը .....	8
1.4. Առողջապահության ազգային ծախսերի սահմանումը .....	8
1.5. Առողջապահության ազգային հաշիվների կառուցվածքը և դասակարգումը.....	9
1.6. Առողջապահության ազգային հաշիվների կազմման գործընթացը.....	10
ԳԼՈՒԽ 2. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆԿԱՐԱԳԻՐԸ.....	10
2.1. Առողջապահական համակարգի ընդհանուր նկարագիրը, կազմը, կառուցվածքը.....	10
2.1.1. Առողջապահության ոլորտի նկարագրությունը և կառավարումը .....	10
2.2. Առողջապահության ֆինանսավորումը .....	11
ԳԼՈՒԽ 3. ՄԵԹՈԴՆԵՐԸ ԵՎ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ.....	12
3.1.Ընտրանքային հետազոտություններ .....	13
ԳԼՈՒԽ 4. ԱԱՀ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ .....	15
4.1. Հիմնական հաշիվների վերլուծություն .....	15
4.1.1. «Ֆինանսավորման աղբյուրներ և ֆինանսական գործակալներ» (ՖԱxՖԳ) 15	
4.1.2. Ֆինանսական գործակալներ և Մատակարարներ (ՖԳ-xՄ) հաշիվ .....	25
4.1.3. Ֆինանսական գործակալներ և Ֆունկցիաներ (ՖԳ-xՖ) հաշիվ .....	50
4.1.4. Մատակարարներ և Ֆունկցիաներ (գործառույթներ) (ՄxՖ)հաշիվ .....	66
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.....	68
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ .....	69

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Առողջապահության ոլորտում իրականացվող շարունակական բարեփոխումների ներքո, առողջապահական համակարգի ֆինանսավորման տեսակետից ՀՀ առողջապահության նախարարության կարևորագույն խնդիրներից է հանդիսանում տարբեր աղբյուրներից առողջապահության ֆինանսավորման ծավալների և այդ ոլորտին հատկացվող միջոցների ավելացման միտումների, առողջապահության ոլորտի հիմնական ծրագրերի և բնակչության համար նախատեսված ֆինանսական միջոցների բաշխման, առողջապահության ֆինանսավորման և բժշկական օգնության մատուցման գործում կարևոր դերակատարների սահմանումը՝ որպես բարեփոխումների ազդեցության գնահատման, ռազմավարական ուղղությունների մշակման, վերջնական արդյունքի գնահատման միջոց:

Այս տեսանկյունից Առողջապահության ազգային հաշիվները (ԱԱՀ) հանդիսանում են առողջապահության համակարգի ֆինանսավորման խնդիրները հասկանալու համար հիմնական գործիքը:

Տվյալ զեկույցի վիճակագրական տվյալները հավաքագրվել են տարբեր տեղեկատվական աղբյուրներից: Տվյալների մեծ մասը հիմնված են վարչական տեղեկատվության և պաշտոնական վիճակագրության վրա, ինչպես նաև անցկացված հատուկ տարեկան և միանվագ ընտրանքային հետազոտությունների վրա, մինչև այժմ ժամանակ զուգահեռներ են տարվել հատուկ ԱԱՀ-ի կազմման նպատակով անցկացված ընտրանքային հետազոտությունների հետ:

ԱԱՀ կազմման գործընթացի առաջին երկու փուլերը (տվյալների հավաքագրում առկա տեղեկատվության աղբյուրներից և վերլուծում) իրականացվել են Համաշխարհային բանկի «Առողջապահական համակարգի արդիականացում» երկրորդ վարկային ծրագրի շրջանակներում, իսկ աշխատանքների իրականացման մյուս փուլերը (տվյալների մուտքագրում ԱԱՀ ստանդարտ չորս աղյուսակներ, տվյալների համադրումներ, վերջնական աղյուսակների տվյալների վերլուծություն, տարեկան զեկույցի կազմման աշխատանքներ) իրականացվել են ՀՀ առողջապահության նախարարության պատվերով՝ ՀՀ պետական բյուջեի ֆինանսավորմամբ:

Առաջին անգամ Առողջապահության ազգային հաշիվների զեկույցը կազմվել է ՀՀ ԱՆ <Ակադեմիկոս Մ.Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ> ՓԲԸ-ի համակարգմամբ: Առողջապահության ազգային հաշիվների զեկույցի պատրաստման գործընթացի ինստիտուցիոնալացումը իրականացվել է ԱՄՆ ՄԶԳ Հայաստանի առողջապահության համակարգի հզորացում ծրագրի (HS-STAR) աջակցությամբ: Ծրագիրը խորհրդատվական աջակցություն է ցուցաբերել նաև 2010 ԱԱՀ զեկույցի պատրաստմանը:

Առողջապահության ոլորտի գործունեությունը, որպես տնտեսության մի հատված՝ մի կողմից հանդես է գալիս եկամուտների ստացման լայն սպեկտրով՝ ՀՀ պետական բյուջե, համայնքների բյուջեներ, մասնավոր ընկերությունների գործատուների միջոցներ, ապահովագրական ընկերությունների հատուցումներ, տնային տնտեսությունների վճարումներ (և այլն) և մյուս կողմից, որպես բուժօգնության ծառայությունների պահանջարկի ստեղծողի և մատուցողի, որպես բնակչության սպառման տնտեսագիտական կատեգորիա մասամբ անմասն չի մնում տնտեսագիտության կանոններից և բնորոշվում են ներքին, էական, կայուն և կրկնվող պատճառահետևանքային կապերով: Ուստի, Առողջապահության ազգային հաշիվները հանդիսանում են միակ համապարփակ գործիքը, որ կարող է մակրո գնահատականներ տալ առողջապահության ոլորտի ֆինանսական հոսքերին, ինչպես նաև գնահատել և վերաիմաստավորել ընթացող բարեփոխումների արդյունքները, համեմատության և դինամիկ շարքերի տեսքով էական ու կարևոր ճշգրտումներ մտցնել դրանց հետագա ռազմավարությունների ընտրության ուղղությամբ ընդունվող որոշումներում:

## ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱԱՀ	Առողջապահության ազգային հաշիվներ
ԱՀՀ	Ազգային հաշիվների համակարգ
ՀԱԱՀ	Հայաստանի առողջապահության ազգային հաշիվներ
ՄՀ	Միջգերատեսչական հանձնաժողով
ԱԽ	Աշխատանքային խումբ
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՖԱ	Ֆինանսավորման աղբյուր
ՖԳ	Ֆինանսական գործակալ
Ֆ	Ֆունկցիա կամ առողջապահական գործառույթներ
Մ	Մատակարար կամ առողջապահական գործառույթներ իրականացնողներ
ՏՏ	Տնային տնտեսություն
ԱՆ	Առողջապահության նախարարություն
ՊԱԳ	Պետական առողջապահական գործակալություն
ԱՎԾ	Ազգային վիճակագրական ծառայություն
ՖՆ	Ֆինանսների նախարարություն
ԱՍՀՆ	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
ԱրդՆախ	Արդարադատության նախարարություն
ԿԳՆ	Կրթության և գիտության նախարարություն
ՄԱԿ	Միավորված ազգերի կազմակերպություն
ՄԱԶԾ	Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագիր
ԱՀԿ	Առողջապահության համաշխարհային կազմակերպություն
ՀԲ	Համաշխարհային բանկ
ԱՄՆ	Ամերիկայի Միացյալ Նահանգներ
ԱՄՆ ՄԶԳ	ԱՄՆ միջազգային զարգացման գործակալություն
ՀՍԲԾ	Հայաստանի սոցիալական բարեփոխումների ծրագիր
ԱԾԻԳ	ՀՀ ԱՆ «Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկ
ԱՀՌԾ	Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիր
ՀԶՆ	Հազարամյակի զարգացման նպատակներ
ՄԶԱԶ	Մարդկային զարգացման ազգային զեկույց
ԲԿ	Բժշկական կենտրոն

# ԳԼՈՒԽ 1.ԱԱՀ-Ի ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

## 1.1. Առողջապահության ազգային հաշիվները Հայաստանում

ԱԱՀ սույն գեկույցը և ընդհանրապես ԱԱՀ-ն առաջին հերթին նախատեսված է առողջապահական համակարգի քաղաքականությունը մշակողների և ղեկավարների համար՝ առողջապահական համակարգի գործունեության և կառավարման բարելավման նպատակով: ԱԱՀ-ներում ներառվող տեղեկատվությունն օգտակար է որոշումներ կայացնելու համար, քանի որ հնարավորություն է ընձեռում գնահատել առկա ռեսուրսների օգտագործումը (ընթացիկ պահի դրությամբ) և կարող է կիրառվել առողջապահական կոնկրետ համակարգի և այլ երկրների համակարգերի համեմատական վերլուծության նպատակով: ԱԱՀ-ների կանոնավոր կիրառման դեպքում հնարավոր է դառնում նաև բացահայտել առողջապահական ծախսերի միտումները, ինչը կարևորվում է նաև առողջապահության համակարգի մոնիտորինգի (մշտադիտարկման) և գնահատման տեսանկյունից: Բացի այդ, ԱԱՀ-ի մեթոդաբանությունը կարող է կիրառվել նաև առողջապահության համակարգի ֆինանսական կարիքների կանխատեսումներ իրականացնելիս:

ԱԱՀ-ներում առկա տեղեկատվությունը ոչ ֆինանսական տվյալների, օրինակ՝ հիվանդացության ցուցանիշների, բժշկական ծառայություններ մատուցողների կողմից ռեսուրսների օգտագործման մակարդակի հետ համադրելով, քաղաքականություն մշակողները հնարավորություն են ստանում կայացնել հիմնավոր ռազմավարական որոշումներ և խուսափել հնարավոր ոչ բարենպաստ զարգացումներից:

Կարևոր է նշել, որ ԱԱՀ-ն ոչ միայն գործիք է պաշտոնյաների համար քաղաքական որոշումների կայացման գործընթացում, այլ նաև կարևոր գործիք է հասարակության համար՝ քաղաքական պաշտոնյաների արդեն իսկ կայացրած ռազմավարական որոշումների արդյունքները գնահատելու համար:

## 1.2. Առողջապահության ազգային հաշիվների նպատակային նշանակությունը

Առողջապահության ազգային հաշիվների կազմման գլխավոր նպատակն է առողջապահության ազգային համակարգի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման կազմակերպումը, համակարգումը և ներկայացումը՝ տվյալ ոլորտում ծրագրավորման գործընթացը, քաղաքականության մշակումը և արդյունավետության գնահատումը դյուրացնելու նպատակով:

Ընդ որում, ներկա գեկույցն իր մեջ կրելով մի քանի տարիների ԱԱՀ աղյուսակների տվյալների համեմատություն՝ թույլ կտա գնահատել.

- ինչպե՞ս է փոխվում ֆինանսավորման աղբյուրների մասնակցության չափը՝ պետական բյուջեից հատկացումների աճին զուգընթաց և նվազում է արդյոք բնակչության ֆինանսական բեռը և ո՞ր ծառայությունների գծով,
- բարելավվո՞ւմ է արդյոք բնակչության համար պետության կողմից տրվող երաշխիքների իրականացումը՝ ՀՀ պետական բյուջեից հատկացումների աճին



զուգընթաց, այսինքն՝ արդյո՞ք իրապես անվճար են դառնում բժշկական օգնության կամ առողջապահական ծառայությունների որոշակի տեսակները:

ԱԱՀ-ների կառուցվածքային ճկունությունը հնարավորություն է ընձեռում ստացված արդյունքները վերլուծել նաև ըստ բնակչության նպատակային խմբերի կամ ըստ միջոցառումների, որոնք կապված են կոնկրետ ծրագրերի և հիվանդությունների տեսակների հետ, օրինակ՝ առաջնային բժշկական օգնություն, մասնագիտացված բուժօգնության տեսակներ, տուբերկուլոզի վերահսկողության ծրագիր և այլն:

### *1.3. Առողջապահության ազգային հաշիվների մեթոդաբանությունը*

Հիմնական սահմանումների և հասկացությունների առումով ԱԱՀ մեթոդաբանությունը խարսխվում է Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) կողմից մշակված «Առողջապահության հաշիվների համակարգի» սահմանումների և հասկացությունների վրա: ՏՀԶԿ կողմից մշակված՝ «Առողջապահության հաշիվների համակարգ» ձեռնարկը սահմանում է Առողջապահության հաշիվների միջազգային դասակարգումը, որտեղ առողջապահության ծախսերի բոլոր տեսակները տարանջատված են ըստ կատեգորիաների:

Չնայած այն հանգամանքին, որ ԱԱՀ-ն հիմնվում է «Առողջապահության հաշիվների համակարգի» դասակարգման վրա, սակայն պարունակում է նաև ենթակատեգորիաներ, որոնք բխում են կոնկրետ ՀՀ առողջապահական համակարգի առանձնահատկություններից: Նման ճկունությունը ԱԱՀ-ին հնարավորություն է ընձեռում հաշվի առնել մեր երկրի առողջապահության համակարգի կառուցվածքի և գործունեության բազմաձևությունը:

### *1.4. Առողջապահության ազգային ծախսերի սահմանումը*

Համաձայն ԱԱՀ սահմանման, առողջապահության ազգային ծախսերը, դրանք բոլոր այն ծախսերն են, որոնք առնչվում են տնտեսական գործունեության իրականացմանը և ուղղված են առողջության պահպանմանն ու բարելավմանը, կենսագործունեության համակարգերի փոփոխությանը կամ այդպիսի գործունեությունների ֆինանսավորմանը: Այս սահմանումը կիրառելի է բժշկական օգնություն տրամադրող կամ ֆինանսավորող բոլոր տեսակի հաստատությունների և կազմակերպությունների համար: Օրինակ՝ ԱԱՀ-ն հնարավորություն է տալիս առողջապահության ծախսերի գնահատականներում ներառել նաև ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից՝ բժշկական կադրերի պատրաստման և վերապատրաստման համար ուղղվող միջոցները: Համանման եղանակով, ՀՀ առողջապահության նախարարության կողմից իրականացվող ոչ բոլոր միջոցառումներն են, որ համապատասխանում են առողջապահության ծախսերի սահմանումներին և ներառվում են ԱԱՀ-ում: Այսպիսով, ԱԱՀ զեկույցը կազմվել է՝ հիմք ընդունելով վերը նշված տարանջատումները և բացառությունները:

ԱԱՀ կազմման ժամանակ հաշվի է առնվել ոչ թե երկրի աշխարհագրական սահմանները, այլ տվյալ երկրի քաղաքացիներին և ռեզիդենտներին առնչվող առողջապահական գործառնությունները: Այսպես, օրինակ՝ ԱԱՀ-ն ներառում է

քաղաքացիների և ժամանակավորապես արտերկրում գտնվող ռեզիդենտների բժշկական օգնության վրա կատարված ծախսերը և բացառում արտերկրի քաղաքացիների՝ երկրի ներսում կատարված բժշկական օգնության ծախսերը: Միջազգային կազմակերպությունների՝ բժշկական օգնության համար կատարված ծախսերը, ընդունող երկրի ռեզիդենտների համար նախատեսված բժշկական նշանակության ապրանքները և ծառայությունները նույնպես ընդգրկվել են առողջապահության ազգային ծախսերում:

#### *1.5. Առողջապահության ազգային հաշիվների կառուցվածքը և դասակարգումը*

ՀՀ-ում ԱԱՀ-ն իր կառուցվածքով նկարագրում է առողջապահության ծախսերը և խմբավորվում է չորս հիմնական աղյուսակներում: Բոլոր աղյուսակները երկչափ են և արտացոլում են ֆինանսական հոսքերը առողջապահության մասնակիցների մեկ կատեգորիայից մյուսը, այսինքն՝ նկարագրում են, թե որքան է ծախսվել համակարգի յուրաքանչյուր մասնակցի կողմից և ուր են ուղղորդվել այդ միջոցները:

ԱԱՀ-ն տարբերակում է առողջապահության մասնակիցների չորս հիմնական կատեգորիաներ.

1. Ֆինանսական աղբյուրներ (FS)՝ պատասխանում են հետևյալ հարցին. «Որտեղի՞ց են ստացվում միջոցները»: Օրինակ՝ ՀՀ պետական բյուջե, տնային տնտեսություններ, դոնոր կազմակերպություններ:
2. Ֆինանսական գործակալներ (HF) (անվանվում են նաև ֆինանսական միջնորդներ), որոնք միջոցներ են ստանում ֆինանսավորման աղբյուրներից և օգտագործում դրանք բժշկական ծառայությունների, բժշկական նշանակության ապրանքների (օրինակ՝ դեղամիջոցների) և միջոցառումների ֆինանսավորման համար: Այս կատեգորիան պատասխանում է հետևյալ հարցին. «Ո՞վ է վերահսկում և կազմակերպում ֆինանսական միջոցների հոսքերը»: Օրինակ, եթե ՀՀ պետական բյուջեից (ֆինանսավորման աղբյուրը) ֆինանսական միջոցներ է տրամադրվում ՀՀ առողջապահության նախարարությանը, ապա վերջինս իր հերթին որոշում է թե ինչպես բաշխել ստացված ֆինանսական միջոցները: Այդ իսկ պատճառով ՀՀ առողջապահության նախարարությունը համարվում է ֆինանսական միջնորդ: Որպես այլ օրինակներ, կարելի է նշել ապահովագրական ընկերությունները և այլ նախարարությունները (օրինակ՝ ՀՀ կրթության և գիտության):
3. Բժշկական ծառայությունների մատակարարներ (HP)՝ հանդիսանում են առողջապահության համակարգի ֆինանսական միջոցների վերջնական սպառողները: Մասնակիցների այս կատեգորիան պատասխանում է հետևյալ հարցին. «Ու՞ն են հատկացվում միջոցները»: Մատակարարներն այն կազմակերպություններն են, որոնք մատուցում են բժշկական ծառայություններ: Օրինակ՝ մասնավոր և պետական հիվանդանոցները, պոլիկլինիկաները, գյուղական բժշկական ամբուլատորիաներն ու առողջության կենտրոնները, դեղատները և այլն:
4. Առողջապահության գործառույթներն (HC) այն ծառայություններն ու միջոցառումներն են, որոնք իրականացվում են մատակարարների կողմից

ստացված միջոցների շրջանակներում: Այս կատեգորիան պատասխանում է հետևյալ հարցին. «Ի՞նչպիսի ծառայություն, արտադրանք կամ միջոցառում է փաստացի մատուցվել կամ իրականացվել»: Օրինակ կարող են ծառայել բուժսպասարկումը, երկարատև բուժբույրական խնամքը, բժշկական ապրանքները (օրինակ՝ դեղամիջոցները) պրոֆիլակտիկ միջոցառումները և առողջապահության կառավարումը:

Աղյուսակների հիմնական համախումբը նկարագրում է առողջապահության համակարգի վերը նշված կատեգորիաների միջև ֆինանսական հոսքերի շարժը: Ընդ որում, ֆինանսական հոսքերի շարժը կարող է լինել շատ բարդ և ներառել մասնակիցների ու դրանց միջև փոխառնչությունների բազմաթիվ տարատեսակներ:

### *1.6. Առողջապահության ազգային հաշիվների կազմման գործընթացը*

ԱԱՀ կազմումը բաղկացած է հետևյալ փուլերից.

- առողջապահության ծախսերի վերաբերյալ տվյալների հավաքագրում,
- ԱԱՀ աղյուսակներում ցուցանիշների մուտքագրում,
- տվյալների վերլուծություն,
- ստացված արդյունքների տարածում սպառողների շրջանում:

ԱԱՀ հաջողության գրավական է հանդիսանում համակարգող կոմիտեն, որում ներգրավված են ՀՀ առողջապահության, ՀՀ ֆինանսների նախարարությունների ղեկավարներ, ներկայացուցիչներ Ազգային վիճակագրական ծառայությունից և այլն: Համակարգող կոմիտեի դերը կայանում է նաև նրանում, որպեսզի ապահովվի տվյալների մատչելիությունը, քանզի ԱԱՀ կազմումը ենթադրում է տարբեր նախարարություններից ու գերատեսչություններից, դոնոր կազմակերպություններից և մատակարարներից տվյալների համալիր հավաքագրում:

## **ԳԼՈՒԽ 2. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆԿԱՐԱԳԻՐԸ**

### *2.1. Առողջապահական համակարգի ընդհանուր նկարագիրը, կազմը, կառուցվածքը*

#### *2.1.1. Առողջապահության ոլորտի նկարագրությունը և կառավարումը*

ՀՀ առողջապահության ոլորտն ընդգրկում է.

1. ՀՀ առողջապահության նախարարության համակարգը,
2. առողջապահական ծառայություններ իրականացնող ՀՀ պետական կառավարման այլ մարմինների համակարգերը,
3. ՀՀ մարզպետարանների ենթակայությամբ հիմնադրված և գործող առողջապահական կազմակերպությունների համակարգը,
4. ՏԻՄ-երի հիմնադրած առողջապահական կազմակերպությունները,
5. մասնավոր առողջապահական կազմակերպությունները,

6. առողջապահության ոլորտում ծրագրեր իրականացնող տեղական և այլ երկրների բարեգործական կազմակերպություններն ու ոչ կառավարական կազմակերպությունները (ՀԿ-ները),

7. առողջապահության ոլորտում ծրագրեր իրականացնող դոնոր ու միջազգային կազմակերպությունները:

ՀՀ առողջապահության նախարարությունը առողջապահական ծառայություններ իրականացնող ՀՀ պետական կառավարման այլ մարմինների՝ ՀՀ տարածքային կառավարման մարմինների և ՏԻՄ-երի կողմից հիմնադրած առողջապահական կազմակերպությունների, ինչպես նաև մասնավոր առողջապահական կազմակերպությունների պետական կառավարումը՝ բյուջետային միջոցների բաշխման առումով, իրականացնում է պետության կողմից երաշխավորված ծրագրերի (պետական պատվերի) շրջանակներում:

## *2.2. Առողջապահության ֆինանսավորումը*

Հայաստանի Հանրապետության առողջապահության համակարգը ֆինանսավորվում է ինչպես ներքին, այնպես էլ արտաքին աղբյուրներից: Ֆինանսավորման ներքին հիմնական աղբյուրներն են.

- 1. ՀՀ պետական բյուջեն,*
- 2. Քաղաքացիների ուղղակի վճարումները,*
- 3. Համավճարները,*
- 4. Բժշկական ապահովագրությունը.*

Առողջապահության ֆինանսավորման արտաքին աղբյուրն է արտաքին աշխարհից ապակենտրոնացված ձևով /ՀՀ պետական բյուջեում չարտացոլվող/ ՀՀ առողջապահության համակարգում կատարված ծախսերը.

ա. արտաքին աշխարհից ստացված և բարեգործական /մարդասիրական/ որակում ստացած բեռների ներմուծումը և բաշխումը,

բ. արտաքին աշխարհից ֆինանսավորվող բարեգործական որակված ծրագրերի շրջանակում կատարված աշխատանքները և մատուցված ծառայությունները,

գ. միջազգային հիմնական դոնոր կազմակերպությունների կողմից ՀՀ առողջապահության համակարգում կատարած ծախսերը:

### ԳԼՈՒԽ 3. ՄԵԹՈԴՆԵՐԸ ԵՎ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Տեղեկատվության աղբյուրները տարբեր երկրներում ունեն տարբեր առանձնահատկություններ, որոնցից Հայաստանի համար տարբերակվել են հետևյալ հիմնական աղբյուրները.

- *Առողջապահության համակարգի ազգային, տարածքային և տեղական մարմինների գրանցումները* - հանդիսանում են առավել ամբողջական, վստահելի և ճշգրիտ տվյալներ,

- *Ապահովագրական ընկերությունների (սոցիալական և մասնավոր ապահովագրական) կողմից վարվող հաշվառումները* - ապահովագրական ընկերությունների գրանցումները պետք է ներառեն տնային տնտեսություններին և ընկերություններին կատարված ապահովագրական վճարումները, ինչպես նաև ապահովագրողի բժշկական և վարչական ծախսերը: Մյուս կողմից, սակայն, ապահովագրական գրանցումները կարող են չպարունակել այնպիսի կարևոր տվյալներ, ինչպիսիք են օրինակ՝ տնային տնտեսությունների համավճարի կամ մասհանումների ձևով բժշկական ծառայությունների մատակարարներին կատարած ուղղակի վճարումները: Այդ տեսանկյունից ապահովագրական ընկերությունները, որպես տվյալների աղբյուրներ, բարդ է ընդգրկել: Եթե հաշվի առնենք նաև ապահովագրավճարների և ապահովագրական ընկերությունների ծախսերի տեսակարար կշիռն ընդհանուր առողջապահական ծախսերում, ապա այդ ուղղությամբ տվյալների հավաքագրման ջանքերը կարող են թերի գնահատվել: Առավել ևս, որ այսօր գործող ապահովագրական ընկերությունների ծախսերը շատ փոքր մասնաբաժին են կազմում ընդհանուր առողջապահական ծախսերում: Չնայած դրան, 2008-2009 թվականներին ապահովագրական ընկերությունների կողմից կատարված ծախսերի ուսումնասիրման նպատակով կազմվել է «Ապահովագրական ընկերությունների ծախսերի հարցաշար»:

- *Բժշկական ծառայությունների մատակարարների գրանցումները* - այդ տվյալները կարելի է ստանալ կամ անմիջականորեն մատակարարներից, կամ կարգավորող և ֆինանսավորող մարմիններից (օրինակ՝ հարկային կամ լիցենզավորող մարմնից): Այստեղ խնդիրը կայանում է նրանում, որ մատակարարները կարող են չվարել պահանջվող համապատասխան հաշվառումը, քանզի այդպիսի վարչական ռեգիստրներ չեն պահանջվել և չեն կիրառվում լիցենզավորող կամ ֆինանսավորող մարմինների կողմից: Որոշ դեպքերում էլ նման հաշվառում պահանջելը կարող է տվյալ մարմինների լիազորությունների շրջանակներից դուրս լինել: Ի լրումն դրա, խնդիրը բարդանում է նաև նրանով, որ ոչ ավանդական բժշկության վերաբերյալ տվյալները կրում են ոչ ամբողջական և ոչ հստակ բնույթ:

- *Դոնոր կազմակերպությունների կողմից տրամադրվող օգնության վերաբերյալ տվյալները*- տարբեր կազմակերպությունների (Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագիր, Առողջապահության համաշխարհային կազմակերպություն և այլն) կամ ՀՀ առողջապահության նախարարության կողմից կազմվող հաշվետվությունները շատ հաճախ պարունակում են ԱԱՀ կազմման համար անհրաժեշտ ամբողջական տեղեկատվությունը: Այնուհանդերձ, այդ

հաշվետվությունները պարունակում են որոշակի հարցադրումներ, օրինակ՝ կապված դոնոր կազմակերպությունների կողմից տրամադրված ոչ ֆինանսական աջակցության (օրինակ՝ դեղամիջոցներ, պատվաստուկներ) դրամական արժեքի գնահատականի հետ: Բացի դա, դոնոր կազմակերպությունների կողմից տեղի հասարակական կազմակերպությունների կամ այլ ոչ պետական մատակարարների միջոցով առողջապահական ծրագրերի իրականացման դեպքում մանրամասնեցված տեղեկություններ ստանալ ծախսերի վերաբերյալ գրեթե անհնար է:

Վերոնշյալ մտտեցումները և առաջացած խնդիրները լուծելու նպատակով փորձ է կատարվել.

- սահմանել տեղեկատվության այն հավելյալ անկախ աղբյուրները, որոնք կարելի է օգտագործել ստացված տեղեկատվությունը ճշգրտելու համար,
- փորձել ստանալ միանման արդյունքներ, առնվազն երկու տարբեր աղբյուրներից,
- եթե հաշվարկները տարբերվում են, որոշել տարբերությունների պատճառները,
- անտեսել աննշան տարբերությունները,
- եթե հաշվարկների տարբերությունները մեծ են, ապա այն ստուգել առավել մանրամասն, մասնավորապես՝ պարզել արդյոք դրանք նույն ծախսային հոդվածների գնահատականներն են, արդյոք նույնն են ծախսերի սահմանումները, արդյոք չեն տարբերվում ժամանակահատվածները, արդյոք այդ հաշվարկները կապված են այն հանգամանքի հետ, որ մի դեպքում հաշվարկներն իրականացվել են հաշվեգրման, իսկ մյուս դեպքում՝ փաստացի վճարման եղանակներով:

### *3.1.Ընտրանքային հետազոտություններ*

Առողջապահական ծախսերի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման աղբյուրներից էական նշանակություն ունեն հատկապես տնային տնտեսությունների շրջանում իրականացվող ընտրանքային հետազոտությունները, որոնք հնարավորություն են տալիս պատկերացում կազմել տնային տնտեսությունների կողմից առողջապահության պահպանման և/կամ վերականգնման վրա կատարված ծախսերի ծավալների և հիմնական ուղղությունների վերաբերյալ:

*2010թ. տնային տնտեսությունների կողմից առողջապահության վրա կատարված ծախսերի վերաբերյալ տեղեկատվության աղբյուր են հանդիսացել ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից պարբերաբար իրականացվող կենսամակարդակի ամբողջացված հետազոտության տվյալները: ՏՏ-ների ամբողջականացված հետազոտության նպատակը ՀՀ-ում կենսամակարդակի ուսումնասիրումն է, ինչով էլ պայմանավորված, բնակչության կողմից կատարված առողջապահական ծախսերի վերաբերյալ տվյալները հանդես են գալիս որպես ոչ տնտեսական աղբյուրների բաղադրիչ: Այս հանգամանքն էապես սահմանափակել է նշված հետազոտության արդյունքում առողջապահական ծախսերի վերաբերյալ տվյալները ԱԱՀ-ում ըստ կառուցվածքային բոլոր բաղադրիչների օգտագործելու հնարավորությունը:*

*2010թ. առողջապահության ազգային հաշիվները կազմելիս կենսամակարդակի ամբողջացված հետազոտության տվյալների օգտագործման առումով լրացուցիչ խոչընդոտ է հանդիսացել այն իրողությունը, որ տնային տնտեսությունների ծախսերի*

*հետազոտության հարցաթերթում կատարվել է փոփոխություն ծախսի արձանագրման ժամանակահատվածի մասով, ըստ որի՝ տնային տնտեսությունները ներկայացրել են տեղեկատվություն հարցմանը նախորդած վերջին երեսուն օրերի ընթացքում իրենց կողմից բուժժառայությունների և դեղերի դիմաց կատարված ծախսերի վերաբերյալ<sup>1</sup>: Այս հանգամանքը հնարավորություն չի տվել իրականացնել, ըստ առողջապահական ծառայությունների ուղղությունների տվյալների տարածումը գլխավոր համակցության կամ ՀՀ ամբողջ բնակչության մասով:*

*Այնուհանդերձ, կենսամակարդակի ամբողջացված հետազոտության տվյալների դերն ու նշանակությունը կարևորվում է այն իրողությամբ, որ տնային տնտեսությունների կողմից լրացվող օրագրում ամենօրյա ծախսերի վերաբերյալ տեղեկատվությունը թույլ է տվել հնարավորինս ամբողջական պատկերացում կազմել տնային տնտեսությունների առողջապահական ծառայությունների համար կատարված ուղղակի վճարումների և դեղերի ու այլ ապրանքների ձեռք բերման ծախսերի ընդհանուր ծավալների վերաբերյալ:*

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ կենսամակարդակի ամբողջացված հետազոտության հարցաթերթի արդյունքներով ստացված տվյալները բավարար չեն կառուցվածքային բաղադրիչների համամասնությունները գնահատելու համար 2010թ. առողջապահության ազգային հաշիվները կազմելիս օգտագործվել են 2009թ. հաշիվների հիմնական բաղադրիչների տեսակարար կշիռները՝ դրանք համադրելով տնային տնտեսությունների կենսամակարդակի, ինչպես նաև 2008թ. ԱԱՀ-ն կազմելու նպատակով ՀՀ ազգային վիճակագրական ծառայության և «Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի» կողմից իրականացված «Տնային տնտեսությունների կողմից առողջապահական ծառայությունների վրա կատարված ծախսերի» ընտրանքային հետազոտությունների արդյունքների հետ: Իրականացված գնահատականները հիմնվել են նաև բնակչության հիվանդացության մակարդակը բնութագրող ցուցանիշների վրա, կամ այլ խոսքով, ուշադրություն է դարձվել, թե խնդրո առարկա համատեքստում, հիվանդությունների կամ մատուցված առողջապահական ծառայությունների տեսակների մասով ինչպիսի փոփոխություններ են տեղի ունեցել նախորդ տարվա համեմատ: Տնային տնտեսությունների կողմից կատարված առողջապահական ծախսերի ամփոփ թիվը (ծախսերի ծավալը բոլոր տնային տնտեսությունների հաշվով) ստացվել է «տնային տնտեսությունների օրագրի» տվյալների հիման վրա հաշվարկված մեկ շնչի հաշվով ծախսի և բնակչության միջին տարեկան թվաքանակի համադրության օգնությամբ:

---

<sup>1</sup> Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, վիճակագրական վերլուծական զեկույցը, ըստ 2010թ-ի տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության արդյունքների, ՀՀ ԱՎԾ, Ե. 2011, էջ 139-151

## ԳԼՈՒԽ 4. ԱԱՀ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

### 4.1. Հիմնական հաշիվների վերլուծություն

#### 4.1.1. «Ֆինանսավորման աղբյուրներ և ֆինանսական գործակալներ» (ՖԱՖԳ)

Առողջապահական ծառայությունների դիմաց կատարված ծախսերի հոսքերն ըստ ֆինանսական գործակալների և ֆինանսավորման աղբյուրների ուսումնասիրելու նպատակով հարկ է անդրադառնալ «Ֆինանսավորման աղբյուրներ և ֆինանսական գործակալներ» (ՖԱ-ՖԳ) հաշվի աղյուսակներին, որոնք պատկերացում են տալիս այն մասին, թե կոնկրետ ծախսը ֆինանսական որ գործակալի (ինստիտուցիոնալ մարմնի կամ հատվածի) կողմից է վճարվել և ֆինանսավորման ինչպիսի աղբյուրներից:

#### 1. «Պետական հատված» ֆինանսական գործակալի ֆինանսավորումը HF.A.1

2010թ. ֆինանսավորման բոլոր աղբյուրների՝ պետական, մասնավոր և արտաքին աշխարհի, կողմից առողջապահական համակարգին տրամադրված ֆինանսական միջոցների ծավալը կազմել է 159 086.9 մլն դրամ /2009թ.՝ 145 313.3մլն դրամ/, որը բաժին է հասել որպես ֆինանսական գործակալներ հանդես եկող պետական, մասնավոր և մնացյալ աշխարհի հատվածներին:

2010թ. պետական հատվածի՝ որպես ֆինանսական գործակալի, առողջապահական ծառայությունների մատուցման ֆինանսավորման ամբողջ ծավալը ընթացիկ գներով կազմել է 62 743.9 մլն դրամ, իսկ աճը նախորդ տարվա ցուցանիշի համեմատ՝ մոտ 100.1% (2009թ.՝ 62 709 մլն դրամ և աճը նախորդ տարվա ցուցանիշի համեմատ՝ 104.7%, 2008թ.՝ 59 859.9 մլն դրամ, 2007թ.՝ 65 088.8 մլն դրամ, 2006թ.՝ 51 156.6 մլն դրամ): Նախորդ տարվա նման, 2010թ. ևս ՀՀ կառավարության կողմից սոցիալական ոլորտին ուղղված պետական միջոցների ծավալները չկրճատելու քաղաքականության շնորհիվ, «Պետական հատված» գործակալի ֆինանսավորման ընդհանուր ծավալը, թեև աննշան, բայց պահպանել է աճի միտումը, այն դեպքում, երբ 2008թ. արձանագրվել էր 8%-ով նվազում նախորդ տարվա ցուցանիշի համեմատ:

«Պետական հատված» գործակալի ֆինանսավորման աղբյուր են ծառայել պետական միջոցները 58 349.2 մլն դրամի չափով, որի աճը նախորդ տարվա ֆինանսավորման ծավալի ցուցանիշի նկատմամբ կազմել է 102.5% (2009թ.՝ 56 917.4 մլն դրամ և 107.2%): Ֆինանսավորման աղբյուրների կառուցվածքում պետական միջոցներից ֆինանսավորման ծավալի տեսակարար կշիռը կազմել է ընդամենը հատվածի ֆինանսավորման 92.3%-ը (2009թ. համապատասխանաբար՝ 56 917.4 մլն դրամ և 90.8%, 2008թ., 53 100.5 մլն դրամ և 98.7%-ը, 2007թ.՝ 50 825.7 մլն դրամ և 78.1%-ը, 2006թ.՝ 42 138.4 մլն դրամ և 80.8%):

«Մնացյալ աշխարհ» ֆինանսավորման աղբյուրի կողմից ապակենտրոնացված ֆինանսավորման ճանապարհով տրամադրված դրամական միջոցների ծավալը կազմել է 4 394.7 մլն դրամ կամ «Պետական հատված» գործակալի ընդամենը ֆինանսավորման 7%-ը, ինչն ընթացիկ գներով նախորդ տարվա ցուցանիշի համեմատ նվազել է 24.1%-ով: (2009թ. համապատասխանաբար՝ 5 791.6 մլն դրամ և 9.2%, 2008թ.՝



6 759.5 մլն դրամ և 1.3%, 2007թ.՝ 14 263.1 մլն դրամ և 21.9%, 2006թ., համապատասխանաբար՝ 9 018.4 մլն դրամ և 19.2%): Եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ 2009թ. «Մնացյալ աշխարհի» կողմից ֆինանսավորման ծավալի կրճատումը նախորդ տարվա համեմատ կազմել էր 14.3%, ապա կարող ենք արձանագրել, որ վերջին տարիներին տեղի է ունենում Ֆինանսավորման այս աղբյուրի կողմից տրամադրվող դրամական միջոցների ծավալների կրճատման տեմպերի արագացում:

Ինչպես երևում է պետական միասնական ֆոնդերից ֆինանսավորման ծավալները բնութագրող ցուցանիշների դինամիկայից, ֆինանսավորման ընդհանուր կառուցվածքում շարունակում են անշեղորեն աճել պետական միջոցների ծավալները, իսկ արտաքին ֆինանսավորումը, եթե մինչև 2007թ. ֆինանսավորման չափի տեսանկյունից զգալի տատանումներ ունեւր, ինչով պայմանավորված էլ ցիկլային տեսք էր ընդունում ընդհանուր ֆինանսավորման ծավալի ցուցանիշի դինամիկան, ապա վերջին չորս տարիներին նկատելի է ծավալների նվազող դինամիկա:

Պետական ֆինանսավորման ընդհանուր կառուցվածքում 57 991 մլն դրամը կամ ընդամենի 99.4%-ը կազմել են պետական բյուջեի միջոցները, ինչը պակաս է նախորդ տարվա ցուցանիշի համեմատ 0.1 տոկոսային կետով, չնայած աճը նախորդ տարվա ցուցանիշի համեմատ ընթացիկ գներով կազմել է՝ 102.4% (2009թ., համապատասխանաբար՝ 56 609.9 մլն դրամ և 99.5%, 2008թ.,՝ 99.9 % և 53 053.2 մլն դրամ, 2007թ՝ 99.9% և 50 776.4 մլն դրամ, 2006թ.՝ 99.7% և 42 012 մլն դրամ): Ուշարժան է, որ 2009թ.-ին նախորդած երեք տարիների նման, 2010թ. ֆինանսավորման պետական աղբյուրների կառուցվածքում միջոցներ չեն տրամադրվել տարածքային կառավարման մարմինների կողմից, 2009թ. իրականացվել էր ֆինանսավորում 163.8 մլն դրամի չափով, ինչը կազմել էր ընդամենի 0.3%-ը:

Տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեներից տրամադրված ֆինանսական միջոցների ծավալը 2010թ. կազմել է 358.2 մլն դրամ կամ ընդամենը ֆինանսավորման ծավալի 0.6%-ը (2009թ.՝ 143.7 մլն դրամ կամ ընդամենը պետական աղբյուրներից ֆինանսավորման 0.2%-ը, 2008թ., համապատասխանաբար՝ 47.3 մլն դրամ և 0.09%, 2007թ՝ 0.1% և 49.3 մլն դրամ): 2006թ. ֆինանսավորումը եղել էր համապատասխանաբար՝ 99.5 մլն դրամ տարածքային կառավարման մարմինների և 36.4 մլն դրամ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից, իսկ ամբողջ ծավալը ֆինանսավորման կառուցվածքում՝ 0.3%: 2005թ. համապատասխան ցուցանիշները և դրանց հարաբերակցությունը հետևյալ տեսքն են ունեցել՝ պետական հատվածի ֆինանսավորման ողջ ծավալը կազմել էր 39 827 մլն դրամ, որի համար որպես ֆինանսական աղբյուր էին ծառայել պետական միջոցները՝ 33 159 մլն դրամի չափով կամ այս հատվածի ֆինանսավորման 83.2% և ապակենտրոնացված ֆինանսավորման ճանապարհով «Մնացյալ աշխարհը»՝ 6 668 մլն դրամի կամ 17.8% չափով:

2008թ. ֆինանսավորման ընդհանուր ծավալի 8% կրճատման պայմաններում մեծացել էր միայն պետական միջոցների ծավալը՝ 104.5%, իսկ «Մնացյալ աշխարհի» կրճատվել էր 52.6%-ով: Սրանով պայմանավորված՝ էապես փոխվել էր ընդհանուր կառուցվածքում ֆինանսական նշված աղբյուրների տեսակարար կշիռների

հարաբերակցությունը հոգուտ պետական աղբյուրների, ի տարբերություն 2007թ.: 2007թ. պետական հատվածի, որպես գործակալի, ֆինանսավորման ծավալն ավելացել էր 27.2%-ով, ընդ որում՝ պետական միջոցների ֆինանսավորման աճը կազմել էր 120.6%, իսկ «Մնացած աշխարհի» սպակենտրոնացված ֆինանսավորման աճը՝ 158.2%: Վերջինիս կողմից ֆինանսավորման աճի առավել առաջանցիկ տեմպերի շնորհիվ ֆինանսավորման աղբյուրների կառուցվածքը ենթարկվել էր նշանակալի փոփոխության, մասնավորապես, պետական աղբյուրների տեսակարար կշիռը կրճատվել էր 2.7 տոկոսային կետով, իսկ «Մնացած աշխարհի»-ը, ընդհակառակը, աճել էր նույն չափով:

Առողջապահության ոլորտում իրականացվող պետական քաղաքականության արդյունավետության վկայությունն է այն իրողությունը, որ, նախ, անշեղորեն (թեև ոչ առաջանցիկ տեմպերով) աճում է պետական բյուջեի դերակատարությունը առողջապահական համակարգի ֆինանսավորման առումով (2009թ.՝ 99.5%, 2008թ.՝ 99.9%, 2007թ.՝ 99.9%, 2006թ.՝ 99.7%), երկրորդ, նկատելի է տարածքային կառավարման (0.3%) և տեղական ինքնակառավարման (0.2%) մարմինների կողմից տրամադրվող ֆինանսավորման ծավալների աճի միտում (2007թ.՝ 0.1%-ը, 2006թ. ֆինանսավորման կառուցվածքում 0.3% կազմել էր այլ պետական ֆոնդերի հաշվին իրականացված ֆինանսավորումը *FS 1.2*):

2008թ. նախորդ տարվա համեմատ պետական հատվածի, որպես ֆինանսական գործակալին ֆինանսավորման պետական աղբյուրների ծավալում և կառուցվածքում արձանագրվել էին հետևյալ փոփոխությունները՝ կրճատվել էր ընդհանուր ֆինանսավորման ծավալը 8%-ով, ընդ որում՝ պետական աղբյուրների կողմից տրամադրված ֆինանսական միջոցների ծավալն ավելացել էր 4.5%-ով, իսկ «Մնացած աշխարհի»՝ կրճատվել 52.6%-ով, ինչով պայմանավորված՝ պետական հատվածի ֆինանսավորման աղբյուրների կառուցվածքը ստացել էր հետևյալ տեսքը. 98.7%՝ պետական աղբյուրներ և 1.3%՝ «Մնացած աշխարհը»: 2007թ., 2006թ.-ի համեմատությամբ, պետական հատվածի կողմից իրականացված ֆինանսավորման կառուցվածքում տեղի էին ունեցել հետևյալ փոփոխությունները. չնայած բոլոր ցուցանիշների մասով արձանագրված աճին, այնուհանդերձ, կրճատվել էր պետական աղբյուրների տեսակարար կշիռը 2.7 տոկոսային կետով և նույնքան աճել էր «Մնացած աշխարհի» տեսակարար կշիռը՝ այս աղբյուրի կողմից տրամադրված ֆինանսական միջոցների ծավալի ավելի քան 1.5%-ով աճի շնորհիվ:

2007թ. ընթացքում առողջապահության ոլորտում պետական կառավարման մարմինների կողմից պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացված ֆինանսավորման ծավալը կազմել էր 50 776.4 մլն դրամ, որի աճը նախորդ տարվա ցուցանիշի համեմատ կազմել է 120.9% (2006թ. ֆինանսավորման ծավալը կազմել էր 42 002.5 մլն դրամ, ինչն, իր հերթին, աճել էր 2005թ. համեմատ 127.1%-ով): Համեմատության համար, 2005թ. ընթացքում առողջապահության ոլորտում պետական կառավարման մարմինների կողմից պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացված ֆինանսավորման ծավալը կազմել էր 33 048 մլն դրամ՝ 2004թ.-ի 26 591 մլն դրամ ցուցանիշի դիմաց, ինչը 124.3%-ով գերազանցել էր նախորդ տարվա ֆինանսավորման մակարդակը: Ֆինանսավորման ծավալների նմանօրինակ աճի

տեմպերի շնորհիվ (20-27%), դիտարկվող ժամանակաշրջանում (2004-2007թթ.) արձանագրվել է պետական աղբյուրներից ֆինանսավորման տարեկան ծավալների գրեթե կրկնակի աճ՝ 191%:

Ֆինանսավորման պետական աղբյուրների միջոցների բաշխումն ըստ ֆինանսական գործակալների (FA) դիտարկելիս, արձանագրում ենք, որ 2010թ. պետական աղբյուրներից իրականացված ֆինանսավորման ծավալի 99.4%-ը կամ 57 977.4 մլն դրամը տրամադրվել է պետական կառավարման կենտրոնական մարմիններին (2009թ.՝ 99.5% և 56 609.9 մլն դրամ, 2008թ.՝ 99.9% և 59 808.7 մլն դրամ, 2007թ.՝ 99.9% և 50 777.0 մլն. դրամ), պետական կառավարման տարածքային (մարզային) մարմինների մասով որևէ ֆինանսավորում չի իրականացվել (2009թ.՝ 163.8 մլն դրամ կամ ընդամենի 0.3%-ը, 2008թ.՝ ֆինանսավորում չի եղել, 2007թ.՝ 3.9 մլն դրամ), իսկ տեղական ինքնակառավարման մարմինների ֆինանսավորումը կազմել է 371.8 մլն դրամ կամ ընդամենի 0.7%-ը (2009թ.՝ 143.7 մլն դրամ և 0.2%, 2008թ.՝ 0.09% և 47.3 մլն դրամ):

Ֆինանսավորման բոլոր աղբյուրներից տրամադրված ֆինանսական միջոցները պետական հատվածի բաղադրիչների միջև բաշխվել են ստորև ներկայացվող համամասնություններով:

2010թ. ՀՀ առողջապահության նախարարության ընդհանուր ֆինանսավորումը կազմել է 59 336.3 մլն դրամ, իսկ աճը նախորդ տարվա ցուցանիշի համեմատ՝ 101.6% (2009թ.՝ 58421.4 մլն դրամ, 2008թ.՝ 55 507.1 մլն դրամ 2007թ.՝ 61 263.8 մլն դրամ, 2006թ.՝ 47 808 մլն դրամ), որից 54 941.7 մլն դրամը կամ ընդամենի 91.9%-ը կազմել են պետական բյուջեի միջոցները (2009թ., համապատասխանաբար՝ 56 609.9 մլն դրամ և 90.1%, 2008թ.՝ 48 747.6 մլն դրամ և 87.8%, 2007թ.՝ 47 002.4 մլն դրամ և 76.7%, 2006թ.՝ 38 789.5 մլն դրամ և 81.1%), իսկ 4 394.7 մլն դրամը կամ ընդամենը ֆինանսավորման 7.4%-ը «Մնացյալ աշխարհի» կողմից պետական հատվածին տրված ողջ ֆինանսավորումը (2009թ.՝ 5 791.6 մլն դրամ և 9.9%, 2008թ.՝ 6 759.5 մլն դրամ և 12.2%, 2007թ.՝ 14 261.4 մլն դրամ և 23.3%, 2006թ.՝ 9 018.5 մլն դրամ):

2010թ. պետական բյուջեից ՀՀ առողջապահության նախարարությանը տրամադրված ֆինանսավորման ծավալը կազմել է պետական հատվածի ամբողջ ֆինանսավորման 94.2%-ը (2009թ.՝ 92.5%, 2008թ.՝ 91.9% 2007թ.՝ 92.6%, 2006թ.՝ 92.1%), ինչը գերազանցել է նախորդ տարվա ցուցանիշը 1.7 տոկոսային կետով (2009թ.՝ աճել է 0.6 տոկոսային կետով, 2008թ. նվազել էր 0.7 տոկոսային կետով, իսկ 2007թ. նույն ցուցանիշն աճել էր 0.4 տոկոսային կետով):

2010թ., ինչպես և նախորդ տարիներին, «Պետական հատված» գործակալի ֆինանսավորման աղբյուրներից երկրորդ բաղադրիչի՝ «Մնացյալ աշխարհի» ամբողջ ֆինանսավորումը տրամադրվել է ՀՀ առողջապահության նախարարությանը 4 394.7 մլն դրամի չափով (2009թ.՝ 5 791.6 մլն դրամ, 2008թ.՝ 6 759.5 մլն դրամ), 2007թ. 1.7 մլն դրամ տրամադրվել էր ՀՀ կրթության և գիտության նախարարությանը):

Որպես կարևոր տեղեկատվություն, նշենք, որ 2005թ. ՀՀ առողջապահության նախարարության ընդհանուր ֆինանսավորումը կազմել է 37 402 մլն դրամ (2004թ.՝ 24 268.5 մլն դրամ, աճը՝ 154.1%), որի 93%՝ 30 734 մլն դրամ (2004թ.՝ 98.5%) կազմել է պետական բյուջեի միջոցներից ֆինանսավորումը, ինչը միաժամանակ կազմել է զուտ ՀՀ առողջապահության նախարարության ֆինանսավորման 82.2% և պետական հատվածի ընդհանուր ֆինանսավորման 77.2%, 6 668 մլն դրամ (2004թ.՝ 359.2 մլն դրամ և աճը՝ մոտ 18 անգամ) կամ ՀՀ առողջապահության նախարարության ֆինանսավորման 17.8% (2004թ.՝ 1.5%) տրամադրվել է «Մնացյալ աշխարհ» հատվածի կողմից՝ ապակենտրոնացված ֆինանսավորմամբ: Միաժամանակ ընդգծենք, որ եթե 2004-2007թթ. պետական հատվածի կողմից առողջապահության ֆինանսավորման տարեկան ծավալները գրեթե կրկնապատկվել էին (2004թ. 24 268.5 մլն դրամից 61 263.8 մլն դրամ 2007թ-ին), ապա 2008թ. արձանագրվել էր ՀՀ առողջապահության նախարարության ֆինանսավորման ծավալի կրճատում 9.4%-ով:

2010թ. պետական բյուջեի միջոցներից և ընդհանրապես «պետական աղբյուրներ» հատվածի ֆինանսավորման 4.5%-ը կամ 2 654.5 մլն դրամը (2009թ.՝ 4.9% և 2 794.2 մլն դրամ, 2008թ.՝ 4.8% և 2 521.8 մլն դրամ, 2007թ.՝ 4.5% և 2 303.8 մլն դրամ, 2006թ.՝ 4.7% և 1 963.5 մլն դրամ, 2005թ.՝ 4.4% և 1 462 մլն դրամ, 2004թ.՝ 5.4% և 1 438.1 մլն դրամ) բաժին է ընկել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը: Եթե 2007թ. բացարձակ ցուցանիշների առումով նախարարության ֆինանսավորման ծավալը դարձյալ աճել էր, բայց հատվածի մյուս բաղադրիչների ծավալների առավել մեծ աճը հանգեցրել էր այս մասով տրամադրված ֆինանսական միջոցների տեսակարար կշռի 0.2 տոկոսային կետով կրճատմանը, իսկ 2008թ. բացարձակ առումով շատ ավելի նվազ աճը մյուս բաղադրիչների ֆինանսավորման կրճատման ֆոնին ապահովել էր կառուցվածքում տեսակարար կշռի 0.3 տոկոսային կետով աճ, ապա 2009թ. ֆինանսավորման ծավալի 110.8% աճը նախորդ տարվա ցուցանիշի համեմատ, անգամ ֆինանսավորման մյուս բաղադրիչների աճի ֆոնին 0.1 տոկոսային կետով ավելացրել է նախարարության ստացած ֆինանսավորման տեսակարար կշիռը ընդհանուր կառուցվածքում: 2010թ. նախարարության ստացած ֆինանսավորման ծավալի աճը նախորդ տարվա ցուցանիշի համեմատ կազմել է 95% կամ կրճատվել է 5%-ով, ինչով պայմանավորված պետական աղբյուրներից ստացված ֆինանսավորման կառուցվածքում վերջինիս տեսակարար կշիռը նվազել է 0.4 տոկոսային կետով: ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ֆինանսավորումն իրականացվել է բացառապես պետական բյուջեի միջոցների հաշվին, ինչը պետական հատվածի ֆինանսավորման ընդհանուր կառուցվածքում կազմել է 4.6%-ը (2009թ.՝ 4.5%, 2008թ.՝ 4.2%):

2010թ., ի տարբերություն նախորդ տարիների, ՀՀ կրթության և գիտության նախարարությանը ֆինանսավորման որևէ աղբյուրից դրամական միջոցներ չեն տրամադրվել: 2009թ. այս նախարարությանը բաժին էր ընկել պետական հատվածի ֆինանսավորման ընդհանուր ծավալի 1.5%-ը կամ 659.7 մլն դրամ, ինչն աննշան աճել էր նախորդ տարվա ֆինանսավորման չափի համեմատ և կազմել էր պետական բյուջեից ֆինանսավորման ծավալի 1.2%-ը (2008թ.՝ 1.1% և 650.7 2007թ.՝ 0.6% և 361.8

մլն դրամ, որից 360.2 մլն դրամը կազմել են պետական բյուջեի միջոցները, 2006թ.՝ 1.2% և 518.2 մլն դրամ, 2005թ.՝ 1.9% և 615.1 մլն դրամ, 2004թ.՝ 1.7% և 452.1 մլն դրամ):

2010թ. ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությանը բաժին է ընկել 120 մլն դրամ կամ պետբյուջեից ֆինանսավորման 0.2%-ը (2009թ.՝ 87 մլն դրամ և 0.2%, 2008թ.՝ 97 մլն դրամ և 0.2%, 2007թ.՝ 82 մլն դրամ և 0.2%-ը, 2006թ.՝ 100 մլն դրամ, 2005թ.՝ 82.4 մլն դրամ և 2004թ.՝ 139.3 մլն դրամ): Ինչպես նկատելի է ներկայացված թվերից, այս նախարարության ֆինանսավորումն իրականացվում է որոշակի տատանումներով՝ ֆինանսավորման ծավալի մեծացմանն անպայմանորեն հետևում է կրճատումը հաջորդ տարում, թեև ֆինանսավորման ընդհանուր կառուցվածքում ունեցած տեսակարար կշիռը մնում է անփոփոխ:

2010թ. ՀՀ ազգային անվտանգության ծառայության ու ՀՀ ոստիկանության ֆինանսավորումը մնացել է անփոփոխ, ինչպես և 2009թ. կազմել է, համապատասխանաբար՝ 27.9 մլն դրամ և 73.7 մլն դրամ, ինչը հատկապես ՀՀ ոստիկանության մասով էապես զիջում է նախորդ տարիների ֆինանսավորման չափը կամ պետական բյուջեի ֆինանսավորման 0.05% և 0.1%-ը (2008թ.՝ 26.8 մլն դրամ և 181.9 մլն դրամ կամ 0.05% և 0.3%, 2007թ.՝ 26.8 մլն դրամ և 174.6 մլն դրամ կամ 0.1% և 0.3%, 2006թ.՝ 26.8 մլն դրամ և 81.9 մլն դրամ, 2005թ.՝ 25 մլն դրամ և 76.4 մլն դրամ): Վերջին երկու պետական մարմինների մասով տեսակարար կշիռները ընդհանուր ֆինանսավորման կառուցվածքում նախորդ տարիներին գրեթե փոփոխության չէին ենթարկվել, թեև նկատելի էր ՀՀ ոստիկանության ֆինանսավորման ծավալների աճ, մասնավորապես՝ 2007թ. գրեթե կրկնապատկվել էր ՀՀ ոստիկանության ֆինանսավորման ծավալը, իսկ 2008թ. աճել կազմել էր 104.2%: 2009թ. ՀՀ ոստիկանության ֆինանսավորման ծավալը կրճատվել է 59.5%-ով:

Պետական հատվածի *HF 1.1.1.7 TBD* բաղադրիչի մասով պետական աղբյուրներից ընդհանուր ֆինանսավորումը 2010թ. կազմել է 159.6 մլն դրամ (2009թ.՝ 337.6 մլն դրամ, 2008թ.՝ 823.4 մլն դրամ, 2007թ.՝ 826.6 մլն դրամ), որը նախորդ տարիների նման ամբողջությամբ ֆինանսավորվել է պետական բյուջեից:

Մի փոքր այլ է եղել այս ենթագործակալի ֆինանսավորման աղբյուրների կառուցվածքը 2004-2006թթ., մասնավորապես՝ 2006թ. ֆինանսավորման ծավալը կազմել է 622.1 մլն դրամ, որից՝ 522.6 մլն դրամը՝ պետական բյուջեի միջոցներից, իսկ 99.5 մլն դրամը՝ մարզային պետական կառավարման մարմինների բյուջետային միջոցներից: 2005թ.՝ 165 մլն դրամ, որից 53.6 մլն դրամը պետական բյուջեից, իսկ 111.3 մլն դրամը՝ այլ պետական աղբյուրներից: 2008թ. ֆինանսավորման ծավալի աճը նախորդ տարվա համեմատ կազմել է 99.6% (2007թ. աճը կազմել էր 132.9%):

Ի տարբերություն 2004թ., երբ «Մնացյալ աշխարհ» հատվածի կողմից 2 586.5 մլն դրամ չափով ապակենտրոնացված եղանակով ֆինանսավորվել էին տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հիմնադրված բուժհիմնարկները, 2005 և 2006թթ. արտաքին աշխարհի ողջ ֆինանսավորումը բաժին էր ընկել ՀՀ առողջապահության նախարարությանը: 2007թ. «Մնացյալ աշխարհի» կողմից պետական հատվածի 14 263.1 մլն դրամ ֆինանսավորումը տրամադրվել է ապակենտրոնացված կարգով երկու պետական մարմիններին՝ ՀՀ առողջապահության

նախարարությանը՝ 14 261.4 մլն դրամ և ՀՀ կրթության և գիտության նախարարությանը՝ 1.7 մլն դրամ:

## **2. «Մասնավոր հատված» ֆինանսական գործակալի ֆինանսավորումը HF.B.2**

Մասնավոր հատվածին, որպես առողջապահության բնագավառի ֆինանսական գործակալի, 2010թ. ֆինանսավորման բոլոր աղբյուրներից տրամադրված ֆինանսավորման ընդհանուր ծավալը կազմել է 91 373.6 մլն դրամ և աճը նախորդ տարվա համեմատ՝ 114.7% (2009թ.՝ 79 666.0 մլն դրամ և 109.6%, 2008թ.՝ 72 666.3 մլն դրամ և 104.4%, 2007թ.՝ 69 588.1 մլն դրամ և 103.8%, 2006թ.՝ 67 066 մլն դրամ և նախորդ տարվա համեմատ ֆինանսավորման ծավալը կրճատվել էր 10.7%-ով):

Ֆինանսավորման ընդհանուր կառուցվածքում 96.5%-ը կամ 88 201.7 մլն դրամը (2009թ.՝ 95.1% և 75 794.9 մլն դրամ, 2008թ.՝ 95.9% և 69 680.4 մլն դրամ, 2007թ.՝ 96.4% և 67 106.1 մլն դրամ, 2006թ.՝ 95.5% և 64 024.6 մլն դրամ) կազմել են տնային տնտեսությունների կողմից կատարված ուղղակի վճարումները, որոնց ծավալի աճը նախորդ տարվա ցուցանիշի համեմատ կազմել է 116.4% (2009թ.՝ 108.8%, 2008թ.՝ 103.8%):

Մասնավոր ֆոնդերի ընդհանուր ֆինանսական միջոցներից 620.1 մլն դրամը կամ ընդամենը մասնավոր հատվածի ստացած ֆինանսավորման 0.7%-ը (2009թ.՝ 426.4 և 0.6%, 2008թ.՝ 309.9 մլն դրամ և 0.4%, 2007թ.՝ 173.0 մլն դրամ և 0.2%, 2006թ.՝ 105.1 մլն դրամ) կազմել են մասնավոր ապահովագրական կազմակերպությունների կողմից կատարված վճարումները, ինչը ֆինանսավորվել է «Մասնավոր հատված» ֆինանսավորման աղբյուրներից «Գործատուներ/մասնավոր կազմակերպություններ» բաղադրիչի միջոցների հաշվին:

«Մնացյալ աշխարհի» կողմից իրականացված 2 551.8 մլն դրամ կազմող (2009թ.՝ 3 444.6 մլն դրամ, 2008թ.՝ 2 675.8 մլն դրամ, 2007թ.՝ 2 308.9 մլն դրամ, 2006թ.՝ 293.6 մլն դրամ) ապակենտրոնացված ֆինանսավորումը բաժին է ընկել հետևյալ գործակալներին՝ HF 2.4 «Ոչ առևտրային կազմակերպություններին» (բացի սոցիալական ապահովագրության կազմակերպությունների)՝ 1 825.1 մլն դրամ (2009թ.՝ 2 709.3 մլն դրամ, 2008թ.՝ 1 893.6 մլն դրամ, 2007թ.՝ 1 764.6 մլն դրամ) և HF 2.5.2 «Մասնավոր/պետական մասնակցությամբ ձեռնարկություններին»՝ 726.7 մլն դրամ (2009թ.՝ 735.3 մլն դրամ, 2008թ.՝ 782.2 մլն դրամ, 2007թ.՝ 544.3 մլն դրամ): Մասնավոր հատվածին «Մնացյալ աշխարհ» ֆինանսավորման աղբյուրի կողմից տրամադրված ֆինանսավորման ծավալի աճը նախորդ տարվա ցուցանիշի համեմատ կազմել է 74.1% կամ կրճատվել է 25.9%-ով (2009թ. աճը կազմել էր 128.7%): Ուշարժան է այն իրողությունը, որ եթե ֆինանսավորման այս աղբյուրի կողմից տրամադրված ֆինանսական միջոցների ծավալները վերջին տարիներին դրսևորում էին կայուն աճի միտումներ, մասնավորապես՝ 2007թ.-ին, 2006թ. համեմատ, ֆինանսավորման ծավալը աճել էր մոտ 10 անգամ, իսկ 2008թ. աճը կազմել էր 115.9%, սպա 2010թ. արձանագրվել է զգալի կրճատում:

Այսպիսով, միայն մասնավոր հատվածի կողմից (առանց արտաքին աշխարհի) իրականացված ֆինանսավորման ծավալը 2010թ. կազմել է 88 821.8 մլն դրամ, իսկ աճը նախորդ տարվա ցուցանիշի համեմատ կազմել է 116.5% -ով (2009թ.՝ 76 221.4 մլն դրամ և աճը նախորդ տարվա համեմատ 108.9%, 2008թ.՝ 69 990.3 մլն դրամ և 104%, 2007թ.՝ 67 279.1 մլն դրամ, 2006թ.՝ 64 129.7 մլն դրամ):

Ֆինանսական գործակալներից այս հատվածի կողմից իրականացված ֆինանսավորման ընդհանուր ծավալը 2005թ. կազմել էր 75 081 մլն դրամ՝ 2004թ. 75 058 մլն դրամ ցուցանիշի դիմաց, իսկ աճի տեմպը՝ 100.03 տոկոս: Եթե 2004-2005թթ. այս հատվածի կողմից իրականացված ֆինանսավորման ծավալները գրեթե մնացել էին անփոփոխ, ապա 2006թ. արձանագրվել էր էական կրճատում: 2005թ. իրականացված ֆինանսավորման 96.7% կամ 72 619 մլն դրամ (99.8% և 74 887 մլն դրամ՝ 2004թ.) տնային տնտեսությունների կողմից կատարված ուղղակի վճարումներն էին, որոնց համար ֆինանսավորման միակ աղբյուրը եղել էին տնային տնտեսությունների ֆինանսական միջոցները, 65 մլն դրամը (157.7 մլն դրամ՝ 2004թ.)՝ մասնավոր ապահովագրական կազմակերպությունների կողմից կատարված վճարումները, ինչը ֆինանսավորվել էր «մասնավոր հատված» ֆինանսավորման աղբյուրներից «գործատուներ/մասնավոր կազմակերպություններ» բաղադրիչի միջոցների հաշվին: 1 372 մլն դրամ տրամադրվել էր ոչ առևտրային կազմակերպությունների կողմից, որը ֆինանսավորվել էր «Մնացյալ աշխարհի» կողմից: Ուշագրավ է, որ այս ենթագործակալի մասով 2004թ. ֆինանսավորում չէր իրականացվել: «Մնացյալ աշխարհի» տրամադրած ֆինանսական միջոցների հաշվին 2005թ. 1 025 մլն դրամի կամ ընդամենը ֆինանսավորման 1.4% չափով (13.6 մլն դրամ՝ 2004թ.) առողջապահական ծառայությունների ֆինանսավորում էր իրականացվել մասնավոր ձեռնարկատերերի կողմից տրամադրվող ապահովագրական ծրագրերով:

2010թ. ևս, ինչպես և նախորդ չորս տարիներին, այս հատվածում արձանագրված ուշարժան իրողությունը տնային տնտեսությունների կողմից ուղղակի վճարումների ծավալի փոփոխությունն է: 2006թ., ի տարբերություն նախորդ տարվա, վերջինս կրճատվել էր մոտ 8.5 մլրդ դրամի չափով, 2007թ., 2006թ. համեմատ, ավելացել էր 3 081.5 մլն դրամով կամ աճը՝ 104.8%, ինչի հետևանքով այս հատվածի ընդհանուր ֆինանսավորման կառուցվածքում դարձյալ աճել էր տնային տնտեսությունների վճարումների տեսակարար կշիռը՝ 95.5%-ից 96.4%: 2008թ. պահպանվել էին արձանագրված միտումները՝ ուղղակի վճարումների ծավալի աճը կազմել էր 103.8%, իսկ տեսակարար կշիռը փոքր ինչ նվազելով՝ կազմել էր 95.9%: 2010թ. տնային տնտեսությունների կողմից կատարված ուղղակի վճարումների ծավալը նախորդ տարվա ցուցանիշը գերազանցել է 12 406.8 մլն դրամով կամ աճը կազմել է 116.4%, իսկ տեսակարար կշիռը աճելով 1.1 տոկոսային կետով՝ կազմել է «մասնավոր հատված» ֆինանսական գործակալի ընդհանուր ֆինանսավորման 96.2%-ը (2009թ., համապատասխանաբար՝ բացարձակ արժեքով ցուցանիշը մեծացել էր 6 114.5 մլն դրամով, աճը կազմել էր 108.8%, իսկ տեսակարար կշիռը՝ 95.1%): 2010թ. նախորդ տարվա պես նշանակալի է տնային տնտեսությունների կողմից կատարված ուղղակի վճարումների ծավալի աճը, որին կանդրադառնանք մյուս հաշիվների վերլուծության

ժամանակ, երբ տեսանելի կլինի, թե որ մատակարարներին է բաժին ընկել և ինչպիսի գործառույթների դիմաց է կատարվել այդ ֆինանսավորումը:

### **3. «Մնացյալ աշխարհ» հատված ֆինանսական գործակալի ֆինանսավորումը** **HF.3**

Ֆինանսական գործակալների այս հատվածում ֆինանսավորման ծավալը 2010թ. կազմել է 4 969.4 մլն դրամ (2009թ.՝ 2 938.3 մլն դրամ, 2008թ.՝ 4 516.4 մլն դրամ, 2007թ.՝ 4 582.9 մլն դրամ), որն ամբողջովին ֆինանսավորվել է «Մնացյալ աշխարհ» ֆինանսավորման աղբյուրի կողմից, որից 3 660 մլն դրամը տրամադրվել է «HF 3.2 Դոնորների կողմից տրամադրված նվիրատվություններ, փոխառություններ» և 1 309.4 մլն դրամը՝ «HF 3.3 Դոնորների կողմից տրամադրված տեխնիկական աջակցություն և դրամաշնորհներ» ենթաբաղադրիչներ ֆինանսական գործակալներին:

«Մնացյալ աշխարհի» որպես ֆինանսավորման աղբյուրի, կողմից 2010թ. տրամադրած ընդհանուր ֆինանսական միջոցների ծավալը կազմել է 11 915.9 մլն դրամ (2009թ.՝ 12 174.5 մլն դրամ, 2008թ.՝ 13 951.8 մլն դրամ 2007թ.՝ 21 154.9 մլն դրամ), իսկ աճը նախորդ տարվա ցուցանիշի համեմատ՝ 97.9% կամ կրճատվել է 2.1%-ով (2009թ. ֆինանսավորման ծավալը նախորդ տարվա նույն ցուցանիշի նկատմամբ կրճատվել էր 12.7%-ով, 2008թ.՝ 34%-ով, իսկ 2007թ. ցուցանիշի աճը նախորդ տարվա համեմատ կազմել էր 117.3%):

Այս աղբյուրի կողմից իրականացված ընդհանուր ֆինանսավորման 36.9%-ը կամ 4 394.7 մլն դրամը, ինչպես և նախորդ տարի, ամբողջովին բաժին է ընկել պետական հատվածի ՀՀ առողջապահության նախարարություն ենթագործակալին (2009թ.՝ 47.6% և 5 791.6 մլն դրամ, 2008թ.՝ 48.4% և 6 759.5 մլն դրամ, 2007թ.՝ պետական հատվածից 67.4%-ը բաժին էր ընկել ՀՀ առողջապահության նախարարություն և ՀՀ կրթության և գիտության նախարարություն ֆինանսական ենթագործակալներին):

2 551.8 մլն դրամը կամ ընդամենը ֆինանսավորման 21.4%-ը տրամադրվել է «Ոչ պետական/մասնավոր հատվածի» ֆինանսական գործակալին (2009թ.՝ 28.3% և 3 444.6 մլն դրամը 2008թ.՝ 19.2%-ը կամ 2 675.8 մլն դրամը 2007թ.՝ 10.9%) և մնացյալ 41.7%-ը կամ 4 969.4 մլն դրամը՝ «Մնացյալ աշխարհ» ֆինանսական գործակալին (2009թ.՝ 24.1% և 2 938.3 մլն դրամ, 2008թ.՝ 32.4 %-ը 2007թ.՝ 21.7%-ը):

2006թ. «Մնացյալ աշխարհ» ֆինանսավորման աղբյուրի կողմից տրամադրված միջոցների ծավալը կազմել էր 17 983.5 դրամ, որից 9 018.5 մլն դրամը բաժին էր ընկել ՀՀ առողջապահության նախարարությանը, իսկ 6 029.5 մլն դրամը կազմել էին դոնորների կողմից տրամադրված տեխնիկական աջակցությունն ու դրամաշնորհները:

2005թ.«Մնացյալ աշխարհի» ֆինանսավորման ծավալը կազմել էր 6 285 մլն դրամ, որից 1 888 մլն դրամը ֆինանսավորվել էր ՀՀ կառավարությանն առընթեր բարեգործական ծրագրերը համակարգող հանձնաժողովի կողմից և 4 397 մլն դրամը՝ դոնորների կողմից տրամադրված տեխնիկական աջակցության և դրամաշնորհների տեսքով: Բացի այդ, «Մնացյալ աշխարհը» 6 668 մլն դրամի չափով ֆինանսավորման աղբյուր էր հանդիսացել «Պետական հատված» և 2 397 մլն դրամի չափով «Մասնավոր



հատված» գործակալների համար: Արդյունքում, «Մնացյալ աշխարհի» ընդհանուր ֆինանսավորումը 2005թ. կազմել էր 15 350 մլն դրամ:

***Ամփոփելով Առողջապահության ազգային հաշիվների «Ֆինանսական գործակալներ և ֆինանսավորման աղբյուրներ» հաշվի կամ աղյուսակի տվյալները՝ արձանագրում ենք հետևյալը.***

2010թ. Ֆինանսավորման բոլոր աղբյուրների կողմից տրամադրված ֆինանսական միջոցների ընդհանուր ծավալը կազմել է **159 086.9 մլն դրամ**:

1. Ֆինանսական գործակալների ֆինանսավորումը 2010թ. կազմել է **159 086.9 մլն դրամ** (2009թ.՝ 145 313.3 մլն դրամ, 2008թ.՝ 137 042.6 մլն դրամ 2007թ.՝ 139 259.8 մլն դրամ, 2006թ.՝ 124 251.6 մլն դրամ, 2005թ.՝ 121 193.7 մլն դրամ), որից.

1.1 Պետական հատված՝ **62 743.9 մլն դրամ** (2009թ.՝ 62 709 մլն դրամ, 2008թ.՝ 59 859.9 մլն դրամ, 2007թ.՝ 65 088.8 մլն դրամ, 2006թ.՝ 51 156.6 մլն դրամ, 2005թ.՝ 39 767.4 մլն դրամ),

1.2 Մասնավոր հատված՝ **91 373.6 մլն դրամ** (2009թ.՝ 79 666 մլն դրամ, 2008թ.՝ 72 666.3 մլն դրամ 2007թ.՝ 69 588.1 մլն դրամ, 2006թ.՝ 67 066 մլն դրամ, 2005թ.՝ 75 158.2 մլն դրամ),

1.3 Մնացյալ աշխարհ՝ **4 969.4 մլն դրամ** (2009թ.՝ 2 938.3 մլն դրամ, 2008թ.՝ 4 516.4 մլն դրամ 2007թ.՝ 4 582.9 մլն դրամ, 2006թ.՝ 6 029 մլն դրամ, 2005թ.՝ 6 268.1 մլն դրամ):

2. Ֆինանսավորման աղբյուրների կողմից տրամադրված ֆինանսական միջոցների ընդհանուր ծավալը 2010թ. կազմել է **159 086.9 մլն դրամ** (2009թ.՝ 145 313.3 մլն դրամ, 2008թ.՝ 137 042.6 մլն դրամ, 2007թ.՝ 139 259.8 մլն դրամ, 2006թ.՝ 124 251.6 մլն դրամ, 2005թ.՝ 121 193.7 մլն դրամ), որից.

2.1 Պետական աղբյուրներից/միջոցներից ֆինանսավորում՝ **58 349.2 մլն դրամ** (2009թ.՝ 56 917.4 մլն դրամ, 2008թ.՝ 53 100.5 մլն դրամ, 2007թ.՝ 50 825.7 մլն դրամ, 2006թ.՝ 42 138.4 մլն դրամ, 2005թ.՝ 33 159.3 մլն դրամ), որից.

- պետական բյուջե՝ **57 990 մլն դրամ** (2009թ.՝ 56 609.9 մլն դրամ 2008թ.՝ 53 053.2 մլն դրամ, 2007թ.՝ 50 776.4 մլն դրամ, 2006թ.՝ 42 002.5 մլն դրամ, 2005թ.՝ 33 048 մլն դրամ),

- պետական այլ աղբյուրներ՝ **358.2 մլն դրամ** (2009թ.՝ 307.5 մլն դրամ, 2008թ.՝ 47.3 մլն դրամ 2007թ.՝ 49.3 մլն դրամ, 2006թ.՝ 135.9 մլն դրամ, 2005թ.՝ 111.3 մլն դրամ),

2.2 Մասնավոր ֆոնդերից/միջոցներից՝ **88 821.8 մլն դրամ** (2009թ.՝ 76 221.4 մլն դրամ, 2008թ.՝ 69 990.3 մլն դրամ, 2007թ.՝ 67 279.1 մլն դրամ, 2006թ.՝ 64 129.7 մլն դրամ, 2005թ.՝ 72 684.1 մլն դրամ), որից.

- գործատուների/մասնավոր ձեռնարկությունների միջոցներ և ֆոնդեր՝ **620.1 մլն դրամ** (2009թ.՝ 426.4 մլն դրամ, 2008թ.՝ 309.9 մլն դրամ 2007թ.՝ 173 մլն դրամ, 2006թ.՝ 105.1 մլն դրամ, 2005թ.՝ 65 մլն դրամ),

- *տնային տնտեսությունների ուղղակի վճարումներ*՝ 88 201.7 մլն դրամ (2009թ.՝ 75 794.9 մլն դրամ, 2008թ.՝ 69 680.4 մլն դրամ 2007թ.՝ 67 106.1 մլն դրամ, 2006թ.՝ 64 024.6 մլն դրամ, 2005թ.՝ 72 619 մլն դրամ),
- *նչ առևտրային կազմակերպություններ*՝ 0 (2009թ.՝ 0, 2008թ.՝ 0, 2007թ.՝ 1 764.6 մլն դրամ),
- *մասնավոր/պետական մասնակցությամբ ձեռնարկություններ*՝ 0 (2009թ.՝ 2008թ.՝ 0, 2007թ.՝ 544.3 մլն դրամ),

2.3. Մնացյալ աշխարհի ֆինանսավորումը կազմել է **11 915.9 մլն դրամ** (2009թ.՝ 12 174.5 մլն դրամ 2008թ.՝ 13 951.8 մլն դրամ 2007թ.՝ 21 154.9 մլն դրամ, 2006թ.՝ 17 983.5 մլն դրամ, 2005թ.՝ 15 350 մլն դրամ):

#### **4.1.2. Ֆինանսական գործակալներ և Մատակարարներ (ՖԳ՝XՄ) հաշիվ**

Առողջապահական ծախսերի հոսքերն ըստ մատակարարների և ֆինանսավորողների ուսումնասիրելու նպատակով հարկ է անդրադառնալ «Ֆինանսական գործակալներ և Մատակարարներ» (ՖԳ՝XՄ) հաշվի աղյուսակներին, որոնք պատկերացում են տալիս այն մասին, թե կոնկրետ ծախսը ինստիտուցիոնալ ո՞ր մարմնի կամ հատվածի կողմից է ֆինանսավորվել և այդ ծախսի դիմաց ո՞ր մատակարարն է առողջապահական ծառայություն մատուցել:

##### **1. Հիվանդանոցների խումբ HP.1**

Համաձայն «Ֆինանսական գործակալներ և Մատակարարներ» հաշվի տվյալների, հիվանդանոցների (HP.1 խումբ) կողմից մատուցված առողջապահական ծառայությունների ծավալը կազմել է 60 450.1 մլն դրամ, իսկ աճը նախորդ տարվա ցուցանիշի համեմատ կազմել է 102.3% (2009թ.՝ 59 060.9 մլն դրամ և աճը նախորդ տարվա համեմատ 89.2%, 2008թ.՝ 66 245.8 մլն դրամ և աճը՝ 107.4%, 2007թ.՝ 61 659.9 մլն դրամ և 109.9%, 2006թ.՝ 56 125.2 մլն դրամ և աճը՝ 84.3%):

2005թ. մատուցված ծառայությունների ծավալը կազմել էր 66 560 մլն դրամ՝ 2004թ. 64 037 միլիոն դրամ ցուցանիշի դիմաց, իսկ աճի տեմպը նախորդ տարվա նկատմամբ՝ 103.9%: Եթե 2006թ. մատուցված ծառայությունների ծավալը 2005թ. համեմատ կրճատվել էր 15.7%-ով, իսկ 2004թ. համեմատ՝ 12.4%-ով: Եթե նախորդ տարվա համեմատ 2005թ. արձանագրված աճը 2006թ. փոխարինվել էր կտրուկ նվազումով, ապա 2007թ. արձանագրված 109.9% աճը փոքր ինչ ցածր տեմպով պահպանվել էր նաև 2008թ. և ենթադրվում էր, որ հետագա տարիներին կվերականգնվի դրական աճի դինամիկան, ինչը, սակայն, 2009թ. դարձյալ փոխարինվեց բավականին զգալի կրճատումով: Առողջապահական ծառայությունների մատակարարների հատվածում «Հիվանդանոցների» խմբի տեսակարար կշիռը կազմել է ողջ ծառայությունների ծավալի 37.9%-ը (2009թ.՝ 40.6%, 2008թ.՝ 40.6%, 48.3% 2007թ.՝ 44.3%):

Նշված ծառայությունների դիմաց կատարված վճարումների 46%-ը կամ 28 320.5 մլն դրամը կատարվել է տնային տնտեսությունների կողմից (2009թ.՝ 32 818.5 մլն դրամ և 55.6%, 2008թ.՝ 38 832.9 մլն դրամ և 58.6%, 2007թ.՝ 36 239.2 մլն դրամ և 58.8%, 2006թ.՝ 38 406.7 մլն դրամ և 68.4%, 2005թ.՝ 49 530 մլն դրամ և 74.4%, 2004թ.՝ 49 750 մլն դրամ և 79.3%): Ուշադրության է արժանի այն փաստը, որ ծախսերի ընդհանուր

կառուցվածքում 2010թ. ևս շարունակվել է տնային տնտեսությունների կողմից կատարվող ուղղակի վճարումների ունեցած տեսակարար կշռի նվազման միտումը, ինչը 2010թ. կրճատվել է 27.1%-ով կամ 4 498 մլն դրամով (2009թ.՝ 15.5%-ով կամ 6 014.4 մլն դրամով) և պայմանավորված է եղել մյուս բաղադրիչների, մասնավորապես՝ պետական հատվածի ֆինանսավորման ծավալների աճով: Եթե 2004-2007թթ. ընթացքում տնային տնտեսությունների կողմից կատարված ուղղակի վճարումների տարեկան ծավալը կրճատվել է 27.2%-ով, կամ 49 750 մլն դրամից կազմել է 36 239.2 մլն դրամ, ապա 2008թ. նախորդ տարվա համեմատ արձանագրվել էր ծախսերի ծավալի աճ 107.2%-ով:

Ընդհանուր առմամբ, հիվանդանոցների խմբի կողմից մատակարարված ծառայությունների ֆինանսավորման կառուցվածքն ըստ ֆինանսավորող հատվածների և գործակալների հետևյալ տեսքն ունի.

**Պետական հատվածի** կողմից տրամադրված ֆինանսական միջոցները կազմել են 30 663.8 մլն դրամ կամ ողջ ֆինանսավորման 50.7%-ը (2009թ.՝ 26 236.3 մլն դրամ և 44.4%, 2008թ.՝ 26 093.4 մլն դրամ և 39.4%, 2007թ.՝ 24 345.4 մլն դրամ և 39.5%, 2006թ.՝ 17 036.1 մլն դրամ և 30.4%, 2005թ.՝ 15 652 մլն դրամ և 23.5%), իսկ աճի տեմպը նախորդ տարվա համեմատ՝ 116.8% (2009թ.՝ 107.2%):

Այս հատվածի ֆինանսավորման կառուցվածքն ըստ գործակալների հետևյալ տեսքն ունի՝ 99.3%-ը կամ 30 476.4 մլն դրամը (2009թ.՝ 98% և 25 706.3 մլն դրամ, 2008թ.՝ 96% և 25 059.9 մլն դրամ, 2007թ.՝ 95.9% և 23 357.7 մլն դրամ, 2006թ.՝ 96.5% և 16 448.8 մլն դրամ, 2005թ.՝ 99.5% և 15 572 մլն դրամ) կազմել են ՀՀ առողջապահության նախարարության և 0.7% կամ 187.4 մլն դրամը (2009թ.՝ 0.7% և 182.7 մլն դրամ, 2008թ.՝ 0.9% և 234.8 մլն դրամ, 2007թ.՝ 0.7% և 153.3 մլն դրամ, 2006թ.՝ 0.7% և 125.1 մլն դրամ, 2005թ.՝ 5% և 80.5 մլն դրամ)՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից հատկացված պետական միջոցները: Ի տարբերություն նախորդ տարվա, պետական կառավարման մյուս մարմինների կողմից (որպես ֆինանսական գործակալների) ֆինանսավորում չի իրականացվել: 2009թ.՝ 183.3 մլն դրամի կամ ընդամենը այս հատվածի ֆինանսավորման 0.7%-ը իրականացվել էր *HF 1.1.1.7 TDB* բաղադրիչի կողմից (2008թ.՝ 667.5 մլն դրամ, 2007թ.՝ 785.1 մլն դրամ), ՀՀ ոստիկանության կողմից իրականացված ֆինանսավորումը, ի տարբերություն նախորդ տարվա, 2009թ. բաժին էր հասել այլ մատակարարի (2008թ.՝ 80 մլն դրամ), ինչն արձանագրվել էր նաև տեղական ինքնակառավարման մարմինների կողմից կատարված ֆինանսավորման դեպքում՝ (2008թ.՝ 47.3 մլն դրամ, 2007թ.՝ 49.3 մլն դրամ): 2009թ. մատակարարների խմբում «Հիվանդանոցներին» ֆինանսավորում էր իրականացվել նաև տարածքային կառավարման մարմինների կողմից 163.8 մլն դրամի չափով (2008թ.՝ 3.9 մլն դրամ):

**Պետական հատվածի** կողմից 2010թ. իրականացված 30 663.8 մլն դրամի (2009թ.՝ 26 236.3 դրամ, 2008թ.՝ 26 093.4 մլն դրամ, 2007թ.՝ 24 345.4 մլն դրամ, 2006թ.՝ 17 036.1 մլն դրամ, 2005թ.՝ 15 652 մլն դրամ) ֆինանսավորումն ըստ «Հիվանդանոցներ» խմբի բաղադրիչների հետևյալ տեսքն ունի.

- *Բազմասյրոֆիլ հիվանդանոցներ*՝ 59.4%-ը կամ 18 224.9 մլն դրամ (2009թ.՝ 56.8% և 14 911.3 մլն դրամը, 2008թ.՝ 62% և 16 170 մլն դրամ, 2007թ.՝ 67% և 16 322.5 մլն դրամ,

2006թ.՝ 61.9% և 10 552.3 մլն դրամ, 2005թ.՝ 59.8% և 9 362 մլն դրամ), որի 99.3-ը կամ 18 107.5 մլն դրամը (2009թ.՝ 96.9% և 14 454.5 մլն դրամ, 2008թ.՝ 95%, 2007թ.՝ 93.5%) տրամադրվել է ՀՀ առողջապահության նախարարության խողովակներով, իսկ 117.4 մլն դրամը՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից (2009թ.՝ 109.6 մլն դրամը): Պետական կառավարման մյուս մարմինների կողմից բազմապրոֆիլ հիվանդանոցներ մատակարարների ենթախմբին ֆինանսավորում չի տրամադրվել (2009թ.՝ 183.3 մլն դրամ՝ TBD բաղադրիչի և 163.8 մլն դրամ՝ պետական կառավարման մարզային մարմինների կողմից):

ՀՀ առողջապահության նախարարության խողովակներով տրամադրված դրամական միջոցներից 15 966.2 մլն դրամը բաժին է հասել պետական բազմապրոֆիլ հիվանդանոցներին, իսկ 2141.4 մլն դրամը՝ մասնավոր բազմապրոֆիլ հիվանդանոցներին: ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միջոցով 117.4 մլն դրամի ֆինանսական միջոցներ տրամադրվել է մասնավոր բազմապրոֆիլ հիվանդանոցներին:

- Հոգեբուժական հիվանդանոցներ և նարկոլոգիական դիսպանսերներ՝ 2 067.9 մլն դրամ և 6.9%, որն իրականացվել է ՀՀ առողջապահության նախարարության՝ 1 997.9 մլն դրամ, (2009թ.՝ 2 106.1 մլն դրամ, 2008թ.՝ 1 796.3 մլն դրամ) և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության՝ 70.0 մլն դրամ (2009թ.՝ 73.2 մլն դրամ 2008թ.՝ 64.6 մլն դրամ) կողմից (ընդհանուր ֆինանսավորումը 2009թ.՝ 2 179.4 մլն դրամ և 8.3%, 2008թ.՝ 1 860.9 մլն դրամ և 7.1%, 2007թ.՝ 6.6 % և 1 598.4 մլն դրամ, 2006թ.՝ 8.1% և 1376.2 դրամ, 2005թ.՝ 9% և 1 413 մլն դրամ):

- Մասնագիտացված հիվանդանոցներ՝ 32.6% և 10 002.9 մլն դրամի (2009թ.՝ 34.3% և 8 986 մլն դրամ, 2008թ.՝ 30% և 7 824.9 մլն դրամ, 2007թ.՝ 25.1% և 6 099.4 մլն դրամ, 2006թ.՝ 28.1% և 4 776 մլն դրամ, 2005թ.՝ 29.5% և 4 606 մլն դրամ) ֆինանսավորումն իրականացվել է բացառապես ՀՀ առողջապահության նախարարության (2008թ.՝ 7 671.5 մլն դրամ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 73.4 մլն դրամ և 80 մլն դրամի չափով ՀՀ ոստիկանության կողմից):

Ըստ ենթամատակարարների, պետական ֆինանսավորումը բաժին է ընկել հետևյալ մասնագիտացված հիվանդանոցներին.

- ա/ տուբերկուլոզի բուժման հիվանդանոցներ (ներառյալ ամբուլատոր պոլիկլինիկական ստորաբաժանումներ)՝ 1 493.4 մլն դրամ (2009թ.՝ 1 051 մլն դրամ, 2008թ.՝ 1 450.3 մլն դրամ),
- բ/ ուռուցքաբանական հիվանդանոցներ (ներառյալ ամբուլատոր պոլիկլինիկական ստորաբաժանումներ)՝ 1 660.7 մլն դրամ (2009թ.՝ 1346.9 մլն դրամ, 2008թ.՝ 1 236.1 մլն դրամ),
- գ/ ծննդատներ (ներառյալ ամբուլատոր պոլիկլինիկական ստորաբաժանումներ)՝ 3 483.4 մլն դրամ (2009թ.՝ 3 121.3 մլն դրամ, 2008թ.՝ 1 828.6 մլն դրամ),
- դ/ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի բուժօգնություն իրականացնողներ՝ 84.6 մլն դրամ (2009թ., 2008թ.՝ 84.6 մլն դրամ),

ե/ այլ հիվանդանոցներ (ներառյալ ամբուլատոր պոլիկլինիկական ստորաբաժանումներ)՝ 3 268.4 մլն դրամ (2009թ.՝ 3 382.1 մլն դրամ, 2008թ.՝ 3 071.9 մլն դրամ),

- Առողջարաններ/սանատորիաների ֆինանսավորումը պետական հատվածի կողմից կազմել է 368.1 մլն դրամ կամ ընդամենը ֆինանսավորման 1.2%-ը (2009թ.՝ 159.7 մլն դրամ և 0.6%, 2008թ.՝ 0.9% և 237.6 մլն դրամ 2007թ.՝ 1.3% և 325.4 մլն դրամ, 2006թ.՝ 1.9% և 335.5 մլն դրամ, 2005թ.՝ 1.7% և 272.3 մլն դրամ) և ամբողջությամբ իրականացվել է ՀՀ առողջապահության նախարարության կողմից:

**Մասնավոր հատվածի** կողմից «Հիվանդանոցներ» մատակարարին տրամադրած ֆինանսական միջոցների ծավալը 2010թ. կազմել է 29 227.5 մլն դրամ, կամ ընդամենը ֆինանսավորման 48.3%-ը (2009թ. 32 818.5 մլն դրամ և 55.6%, 2008թ.՝ 40 011.6 մլն դրամ և 60.4%, 2007թ.՝ 37 129.8 մլն դրամ և 60.2%, 2006թ.՝ 38 828.2 մլն դրամ և 69.1%, 2005թ.՝ 50 412 մլն դրամ և 75.7%), որից տնային տնտեսությունների ուղղակի վճարումներին բաժին է ընկել այս հատվածի ֆինանսավորման 96.9%-ը կամ 28 320.5 մլն դրամը (2009թ.՝ 97.8% և 32 083.2 մլն դրամ, 2008թ.՝ 97.1% և 38 832.9 մլն դրամ, 2007թ.՝ 97.6% և 36 239.2 մլն դրամ, 2006թ.՝ 98.9% և 38 406.7 մլն դրամ, 2005թ.՝ 98.3% և 49 530 մլն դրամ): Ուշարժան է այն իրողությունը, որ ֆինանսավորման կառուցվածքում տնային տնտեսությունների ուղղակի վճարումների ունեցած տեսակարար կշիռը կրճատվել է, ինչը պայմանավորված է եղել ինչպես հատվածի մյուս բաղադրիչների մասով ֆինանսավորման ծավալների աճով, այնպես էլ տնային տնտեսությունների ուղղակի վճարումների ծավալի կրճատմամբ՝ 11.7%-ով կամ 3 762.7 մլն դրամով: 2009թ. տնային տնտեսությունների ուղղակի վճարումների տեսակարար կշիռն աճել էր 0.7 տոկոսային կետով, թեև բացարձակ արտահայտությամբ ֆինանսավորման ծավալը նախորդ տարվա համապատասխան ցուցանիշի նկատմամբ կրճատվել էր 6 749.7 մլն դրամով կամ 17.4%-ով (աճը կազմել է 82.6%):

Ոչ առևտրային կազմակերպությունների կողմից կատարված վճարումները կազմել են 205.9 մլն դրամ կամ այս հատվածի ֆինանսավորման 7%-ը (2009թ.՝ 500.8 մլն դրամ և 1.5%, 2008թ.՝ 776.6 մլն դրամ և 1.9%, 2007թ.՝ 346.3 մլն դրամ և 0.9%, 2006թ.՝ 0.5% և 186 մլն դրամ, 2005թ.՝ 0.02% և 13.7 մլն դրամ): Այս բաղադրիչի մասով ֆինանսավորման ծավալը շարունակվել է կրճատվել գրեթե նույն չափով, ինչ ախորդ տարի՝ 294.9 մլն դրամ կամ 58.9%-ով (2009թ. արձանագրվել էր ֆինանսավորման ծավալի կրճատում 35.5%-ով կամ 275.8 մլն դրամով, իսկ 2008թ. ցուցանիշի աճը նախորդ տարվա նկատմամբ կազմել էր մոտ 2.2 անգամ, 2007թ.՝ 186.2%):

Մասնավոր/պետական մասնակցությամբ ձեռնարկությունների կողմից կատարված վճարների ծավալը 2010թ. կազմել է 81.7 մլն դրամ կամ այս հատվածի ֆինանսավորման 0.2%-ը (2009թ. 234.5 մլն դրամ և 0.7%, 2008թ.՝ 402.1 մլն դրամ և 1%, 2007թ.՝ 544.3 մլն դրամ և 1.5%, 2006թ.՝ 0.6% և 235.5 մլն դրամ, 2005թ.՝ 1.3% և 868.2 մլն դրամ): Ֆինանսական գործակալների մասնավոր հատվածի այս ենթաբաղադրիչի մասով ևս 2010թ. արձանագրվել է ֆինանսավորման ծավալների զգալի կրճատում՝ մոտ 65.2%-ով: Հատկանշական է, որ ֆինանսատնտեսական ճգնաժամով պայմանավորված այս բաղադրիչի մասով ֆինանսավորման ծավալների կտրուկ՝ 41.4%-ով, կրճատում արձանագրվել է 2009թ.:

2010թ. տեղեկատվություն է հավաքագրվել նաև մասնավոր ապահովագրական կազմակերպությունների (HF 2.2) կողմից իրականացված 620.1 մլն դրամ չափով ֆինանսավորման ծավալների մասով:

Տնային տնտեսությունների ուղղակի վճարումների ընդհանուր ծավալի 81.7%-ը կամ 23 144.1 մլն դրամը (2009թ.՝ 87.7% և 28 151 մլն դրամ, 2008թ.՝ 96.6% և 35 969.3 մլն դրամ, 2007թ.՝ 90.3% և 32 720.6 մլն դրամ) բաժին է ընկել «Բազմապրոֆիլ հիվանդանոցներ» ենթախմբին, որից 18 913.7 մլն դրամը (2009թ.՝ 23 781 մլն դրամ, 2008թ.՝ 33 862.6 մլն դրամ)՝ պետական բազմապրոֆիլ հիվանդանոցներին և 4230.4 մլն դրամը (2009թ.՝ 4 370 մլն դրամ)՝ մասնավոր բազմապրոֆիլ հիվանդանոցներին: Տնային տնտեսությունների կողմից 3 486.6 մլն դրամի ֆինանսավորումը տրամադրվել է «Մասնագիտացված հիվանդանոցներ» ենթախմբին, որից 1 368 մլն դրամը՝ ենթախմբի ուռուցքաբանական հիվանդանոցներ մատակարարին, իսկ 2 118.6 մլն դրամը (2009թ.՝ 1 919.9 մլն դրամ, 2008թ.՝ 1 553.1 մլն դրամ, 2007թ.՝ 2 692.1 մլն դրամ) կամ ընդհանուր կառուցվածքում 7.4%-ի չափով (2009թ.՝ 6%, 2008թ.՝ 4.3%, 2007թ.՝ 7.4%) վճարումներ են կատարվել «Մասնագիտացված հիվանդանոցներ» ենթախմբի «Ծննդատներ» (ներառյալ ամբուլատոր-պոլիկլինիկական ստորաբաժանումներ) բաղադրիչի կողմից մատուցված ծառայությունների դիմաց: 2010թ. տնային տնտեսությունների կողմից 1488.5 մլն դրամ վճարվել է «Մասնագիտացված հիվանդանոցների» մատակարար ենթախմբից «ոչ արտատիկական /այլաբուժական/ բժշկության հիվանդանոցների ծառայությունների դիմաց (2009թ.՝ 1 226.5 մլն դրամ, 2008թ.՝ 524.7 մլն դրամ), որի ծավալը, եթե 2009թ. նախորդ տարվա ցուցանիշի համեմատ աճել էր 2.3 անգամ, ապա 2010թ. կրճատվել է 29.2%-ով:

2010թ. բնակչությունն իր միջոցներից 821.3 մլն դրամ (2009թ.՝ 785.8 մլն դրամ, 2008թ.՝ 1 081.3 մլն դրամ, 2007թ.՝ 826.5 մլն դրամ) վճարել է առողջարաններ/սանատորիաների կողմից մատուցված ծառայությունների դիմաց, որի աճը նախորդ տարվա ցուցանիշի համեմատ կազմել է 104%:

**Մնացյալ աշխարհի ֆինանսավորումը 2010 թ.** կազմել է 558.8 մլն դրամ կամ մատակարարների «Հիվանդանոցներ» խմբի ֆինանսավորման 0.9%-ը (2009թ.՝ 6.1 մլն դրամ և 0.01%, 2008թ.՝ 140.8 մլն դրամ և 0.2%, 2007թ.՝ 0.3% և 184.7 մլն դրամ, 2006թ.՝ 0.5% և 260.9 մլն դրամ, 2005թ.՝ 0.8% և 494.9 մլն դրամ), որից 411.6 մլն դրամը հատկացվել է «ղոնորների կողմից տրամադրված նվիրատվություններ, փոխառություններ», իսկ 147.2 մլն դրամը՝ «ղոնորների կողմից տրամադրված տեխնիկական աջակցության և դրամաշնորհների» տեսքով: Ի տարբերություն նախորդ տարիների, երբ ֆինանսական գործակալների այս խմբի կողմից իրականացվող ֆինանսավորման ծավալները տարեցտարի կրճատվում էին, 2010թ. արձանագրվել է շեշտակի աճ:

Հաշվի առնելով այն իրողությունը, որ առողջապահության ազգային հաշիվների համակարգում ֆինանսական միջոցների հոսքը ըստ հաջորդական տրամաբանության սկսվում է ֆինանսավորման աղբյուրներից և գործակալների միջոցով փոխանցվում մատակարարներին, ապա ֆինանսական միջոցների բաշխումը «Ֆինանսական

գործակալներ և մատակարարներ» հաշվում առավել ամբողջական կարելի է ներկայացնել ըստ մատակարարների ֆինանսավորման, որը հետևյալ տեսքն ունի.

**Հիվանդանոցների խմբին** որպես մատակարարների ֆինանսական բոլոր գործակալների կողմից 2010թ. տրված 60 450.1 մլն դրամի (2009թ.՝ 59 060.9 մլն դրամ, 2008թ.՝ 66 245.8 մլն դրամ 2007թ.՝ 61 659.9 մլն դրամ, 2006թ.՝ 56 125.2 մլն դրամ, 2005թ.՝ 66 560 մլն դրամ) ընդհանուր ֆինանսավորման կառուցվածքն ըստ ծառայությունների մատակարարների հետևյալ տեսքն ունի.

- **բազմապրոֆիլ հիվանդանոցներ**՝ 41 908.8 մլն դրամ կամ ընդամենը «Հիվանդանոցներ» խմբի ֆինանսավորման 69.3%-ը (2009թ.՝ 43 358.4 մլն դրամ և 73.4%, 2008թ.՝ 52 584.7 մլն դրամ և 79.4%, 2007թ.՝ 49 520 մլն դրամ և 80.3%, 2006թ.՝ 45 953.5 մլն դրամ և 81.9%, 2005թ.՝ 56 762 մլն դրամ և 85.3%), ինչը բացարձակ արտահայտությամբ կրճատվել է նախորդ տարվա ցուցանիշի համեմատ 3.7%-ով կամ 1 449.6 մլն դրամով (2009թ. ֆինանսավորման ծավալը նախորդ տարվա ցուցանիշի համեմատ կրճատվել էր 17.5%-ով կամ 9 226.3 մլն դրամով): 2008թ. նախորդ տարվա նմանությամբ, թեև ֆինանսավորման ծավալն աճել էր 106.3%-ով (2007թ. նախորդ տարվա համեմատ՝ 107.8%), այնուհանդերձ կառուցվածքում տեսակարար կշիռը շարունակել էր նվազել 0.9 տոկոսային կետով (2007թ.՝ 1.6 տոկոսային կետով),

- **հոգեբուժական հիվանդանոցներ և նարկոլոգիական դիսպանսերներ**՝ 2 067.9 մլն դրամ կամ ընդամենը ֆինանսավորման 3.4%-ը (2009թ.՝ 2 212.6 մլն դրամ և 3.7%, 2008թ.՝ 1 862.4 մլն դրամ և 2.8% 2007թ.՝ 1 598.4 մլն դրամ և 2.6%, 2006թ.՝ 1 376.2 մլն դրամ և 2.5%, 2005թ.՝ 1 413 մլն դրամ և 2.1%): Այս մատակարարի մասով, ի տարբերություն նախորդ տարիների, կրճատվել է թե՛ ֆինանսավորման բացարձակ մեծությունը (կրճատվել է 6.5%-ով), թե՛ ֆինանսավորման կառուցվածքում ունեցած տեսակարար կշիռը (կրճատվել է 0.7 տոկոսային կետով): 2007-2009թթ. շարունակաբար արձանագրվել է աճ ինչպես ֆինանսավորման բացարձակ մեծության, այնպես էլ ֆինանսավորման կառուցվածքում տեսակարար կշռի մասով, համապատասխանաբար, 2009թ.՝ 118.8% և 0.9 տոկոսային կետ, 2008թ.՝ 116.5% և 0.3 տոկոսային կետ, 2007թ.՝ 116.1% և 0.1 տոկոսային կետ:

- **մասնագիտացված հիվանդանոցներ**՝ 13 795.5 մլն դրամ կամ ընդամենը ֆինանսավորման 22.8%-ը (2009թ.՝ 11 317.9 մլն դրամ և 19.2%, 2008թ.՝ 10 192.7 մլն դրամ և 15.4% 2007թ.՝ 9 389.9 մլն դրամ և 15.2%, 2006թ.՝ 7 744.8 մլն դրամ և 13.8%, 2005թ.՝ 7 366 մլն դրամ և 11.1%): Ի տարբերություն մատակարարների նախորդ ենթախմբի, մասնագիտացված հիվանդանոցների ֆինանսավորման աճի տեմպերը պահպանել են նախորդ տարիների նույն միտումները: 2010թ. ֆինանսավորման ծավալի աճը նախորդ տարվա ցուցանիշի համեմատ կազմել է 121.9%, իսկ ֆինանսավորման կառուցվածքում տեսակարար կշռի աճը՝ 3.6 տոկոսային կետ (2009թ.՝ համապատասխանաբար՝ 111.0% և 3.8 տոկոսային կետ, 2008թ.՝ 108.5% և 0.2 տոկոսային կետ (2007թ.՝ 121.2% և 1.4 տոկոսային կետ),

- **ոչ արտատիկ /ալլաբուժական/ հիվանդանոցների** մասով 868.4 մլն դրամ ֆինանսավորում կամ ընդամենը հիվանդանոցներ խմբի ֆինանսավորման 1.4%-ը, ինչը, ի տարբերություն 2009թ., երբ ֆինանսավորման ծավալը գերազանցել էր նախորդ

տարվա մակարդակը 2.3 անգամ, կրճատվել է 29.2%-ով (2009թ.՝ 1 226.5 մլն դրամ և 2.1%, 2008թ.՝ 524.7 մլն դրամ և 0.8%), 2006-2007թթ. ֆինանսավորում չի արձանագրվել (2005թ.՝ 0.3% և 232.6 մլն դրամ):

- **առողջարաններ/սանատորիաներ**՝ ֆինանսական բոլոր գործակալների կողմից իրականացվել է 1 189.4 մլն դրամ ֆինանսավորում կամ ընդամենը ֆինանսավորման 2%-ը (2009թ.՝ 945.5 մլն դրամ և 1.6%, 2008թ.՝ 1 081.3 մլն դրամ և 1.6%, 2007թ.՝ 1 151.6 մլն դրամ և 1.9%, 2006թ.՝ 1 050.9 մլն դրամ և 1.8%, 2005թ.՝ 786.6 մլն դրամ և 1.2%):

«Հիվանդանոցներ» խմբի կառուցվածքային բաղադրիչների կողմից մատակարարված ծառայությունների տեսակարար կշիռների 2004 և 2005թթ. ցուցանիշների համեմատությունից սկզբից էր էական փոփոխությունների առկայությունը, մասնավորապես՝ ծառայությունների ընդհանուր կառուցվածքում 0.2 տոկոսային կետով կրճատվել էր բազմապրոֆիլ հիվանդանոցների և 11.3 տոկոսային կետով ավելացել էր՝ հոգեբուժարանների, 1.6 տոկոսային կետով՝ մասնագիտացված հիվանդանոցների և 0.4 տոկոսային կետով առողջարանների կողմից մատուցված ծառայությունների տեսակարար կշիռները: Հատկանշական է, որ նախորդ տարիներին միայն 2005թ.-ին 236.6 մլն դրամի ծառայություններ էր մատուցվել ոչ ալոպատիկ/ալոպատիկական հիվանդանոցների կողմից: 2006թ. արձանագրվել էր բազմապրոֆիլ հիվանդանոցների տեսակարար կշիռի կրճատման (3.4 տոկոսային կետ) և հոգեբուժարանների (0.4 տոկոսային կետ), մասնագիտացված հիվանդանոցների (2.7 տոկոսային կետ), ինչպես նաև առողջարանների (0.6 տոկոսային կետ) համապատասխան ցուցանիշների աճի միտումներ:

### **1.1 Բազմապրոֆիլ հիվանդանոցների ենթախումբ HP.1**

Բնակչությանը հիվանդանոցների կողմից մատուցված առողջապահական ծառայությունների կառուցվածքում 69.3%-ը կամ 41 908.8 մլն դրամի չափով (2009թ.՝ 73.4% և 43 358.3 մլն դրամ, 2008թ.՝ 79.4%-ը և 52 584.7 մլն դրամ, 2007թ.՝ 88.5% և 49 520 մլն դրամ, 2006թ.՝ 81.9% և 45 953.5 մլն դրամ, 2005թ.՝ 85.3% և 56 762 մլն դրամ, 2004թ.՝ 87.5% և 55 878 մլն դրամ) մատուցվել է «Բազմապրոֆիլ հիվանդանոցներ» (**HP1.1**) ենթախմբի կողմից, որից **պետական բազմապրոֆիլ հիվանդանոցների** կողմից մատուցված ծառայությունների ծավալը կազմել է 35 407.3 մլն դրամ (2009թ.՝ 33 942.2 մլն դրամ, 2008թ.՝ 45 952.3 մլն դրամ, 2007թ.՝ 43 809.8 մլն դրամ, 2006թ.՝ 41 940.6 մլն դրամ) և **մասնավոր բազմապրոֆիլ հիվանդանոցներին**՝ 6 501.5 մլն դրամ (2009թ.՝ 9 416.2 մլն դրամ, 2008թ.՝ 6 632.4 մլն դրամ, 2007թ.՝ 5 710.2 մլն դրամ, 2006թ.՝ 4012.8 մլն դրամ): Հատկանշական է, որ թեև 2010թ. «Բազմապրոֆիլ հիվանդանոցներ» մատակարարի ընդհանուր ֆինանսավորման ծավալը նախորդ տարվա ցուցանիշի համեմատ կրճատվել է 3.7%-ով, այնուհանդերձ, ի տարբերություն 2009թ., 2010թ. արձանագրվել է հակառակ իրավիճակը՝ պետական բազմապրոֆիլ հիվանդանոցների ֆինանսավորման ծավալի աճը կազմել է 104.3%, իսկ մասնավոր բազմապրոֆիլ հիվանդանոցների ֆինանսավորումը կրճատվել է 30.9%-ով: 2009թ. արձանագրվել էր ֆինանսավորման ծավալների կամ մատուցված ծառայությունների ծավալների կրճատում պետական բազմապրոֆիլ հիվանդանոցների մասով՝ 26.1%-ով (աճը կազմել էր 73.9%), և զգալի աճ՝ 142%, մասնավոր բազմապրոֆիլ հիվանդանոցների մասով: 2008թ. բազմապրոֆիլ հիվանդանոցների խմբի երկու բաղադրիչների մասով աճը



կազմել էր, համապատասխանաբար՝ 106.2% և 116.2%, 2007թ.՝ 104.5% և 142.3%: 2005թ. և, նախորդ տարվա համեմատ արձանագրվել էր 101.6% աճ, թեև 2006թ. ցուցանիշը 2005թ.-ի համեմատ նվազել էր 19%-ով:

Մատակարարների «Հիվանդանոցներ» խմբի կողմից մատուցված ծառայությունների ֆինանսավորման բաշխվածությունն ըստ ֆինանսավորող գործակալների հետևյալ տեսքն ունի.

2010թ. ֆինանսավորման ընդհանուր ծավալի 48.3%-ը կամ 29 227.6 մլն դրամը (2009թ.՝ 65.6% և 28 447.1 մլն դրամ, 2008թ.՝ 69.1% և 36 337.9 մլն դրամը 2007թ.՝ 66.8% և 33 092.8 մլն դրամ, 2006թ.՝ 77% և 35385.4 մլն դրամ, 2005թ.՝ 83.5% և 2004թ.՝ 85.4%) տրամադրվել է մասնավոր հատվածի, այդ թվում՝ տնային տնտեսությունների կողմից՝ 28 320.5 մլն դրամի չափով (2009թ.՝ 28 151 մլն դրամ, 2008թ.՝ 35 969.3 մլն դրամ, 2007թ.՝ 32 720.6 մլն դրամ, 2006թ.՝ 35 052.4 մլն դրամ, 2005թ.՝ 47 103 մլն դրամ), որոնց ուղղակի վճարումները կազմել են այս հատվածի ծախսերի մոտ 94.1%-ը (2009թ.՝ 97.8%, 2008թ.՝ 99%, 2007թ.՝ 98.9%, 2006թ.՝ 99.1%, 2005թ.՝ 99.4% և 2004թ.՝ 99.7%), իսկ մնացյալը՝ առևտրային կազմակերպությունների և մասնավոր ապահովագրական կազմակերպությունների վճարները:

Եթե Մասնավոր հատվածի ֆինանսավորումը 2005թ. ստացված աղյուսակներում ներառվել էր «Բազմապրոֆիլ հիվանդանոցներ» խմբում՝ առանց պետական և մասնավոր կարգավիճակի տարանջատման, ապա 2006թ. այն ամբողջությամբ (35 385.4 մլն դրամ) բաժին էր ընկել բազմապրոֆիլ պետական հիվանդանոցներին:

Ի տարբերություն 2004թ. ԱԱՀ աղյուսակների, 2005թ. ցուցանիշների կազմում տնային տնտեսությունների կողմից կատարված ուղղակի վճարումների մասով տեղեկատվություն էր առկա նաև «Մասնագիտացված հիվանդանոցներ» բաղադրիչի ծննդատներ ենթաբաղադրիչի մասով՝ 1680.6 մլն դրամ, «Ալոպատիկ հիվանդանոցների»՝ 232.6 մլն դրամ և 514.3 մլն դրամ՝ առողջարանների կողմից մատուցված ծառայությունների դիմաց կատարված վճարումների վերաբերյալ: 2006թ. և, տնային տնտեսությունների կողմից արձանագրվել էին ծախսեր «Ծննդատներ» ենթաբաղադրիչի մասով՝ 2636.9 մլն դրամի և առողջարաններ ենթաբաղադրիչի մասով՝ 714.8 մլն դրամի չափով: 2007թ. տնային տնտեսությունների կողմից իրականացված ուղղակի վճարումները բաշխվել են վերը նշված մատակարարների ենթախմբերով, մասնավորապես, բազմապրոֆիլ հիվանդանոցներ՝ 32 720.6 մլն դրամ, որից պետական բազմապրոֆիլ հիվանդանոցներին՝ 30 781.2 մլն դրամ, մասնագիտացված հիվանդանոցներին՝ 2 692.1 մլն դրամ, ինչն ամբողջությամբ բաժին էր ընկել ծննդատներին և 826.5 մլն դրամ՝ առողջարաններին:

«Հիվանդանոցներ» մատակարարի ֆինանսավորման ընդհանուր կառուցվածքում «Պետական հատված» գործակալի կողմից տրված դրամական միջոցները կազմել են 50.7%-ը կամ 30 663.8 մլն դրամ (2009թ.՝ 34.4% և 14 911.3 մլն դրամ, 2008թ.՝ 30.7% և 16 170 մլն դրամ, 2007թ.՝ 32.9% և 15 334.8 մլն դրամ, 2006թ.՝ մոտ 23% և 9 965 մլն դրամ, 2005թ.՝ 9 362 մլն դրամ, 2004թ.՝ 8143.2 մլն դրամ), որի հիմնական մասը՝ 99.4%-ը կամ 30 476.4 մլն դրամը (2009թ.՝ 96.9% և 14 454.5 մլն դրամ, 2008թ.՝ 94.9%, 2007թ.՝ 93.9%, 2006թ.՝ 94.4%, 2005թ.՝ 99.1%, 2004թ.՝ 97.1%) իրականացվել է ՀՀ առողջապահության

նախարարության, իսկ մնացյալ 187.4 մլն դրամի ֆինանսավորումը ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (2008թ.՝ 0.6% և 96.8 մլն դրամ, 2007թ.՝ 0.9% և 153.3 մլն դրամ, 2006թ.՝ 1.2% և 125.1 մլն դրամ, 2005թ.՝ 0.9% և 80.5 մլն դրամ) կողմից: 2009թ. ֆինանսավորման 1.2%-ը կամ 183.3 մլն դրամը (2008թ.՝ 4.1 % և 667.5 մլն դրամը 2007թ.՝ 4.8% և 785.1 մլն դրամ) իրականացվել էր *HF 1.1.1.7 TBD* բաղադրիչի, 163.8 մլն դրամ՝ (2008թ.՝ 3.9 մլն դրամ) պետական կառավարման մարզային մարմինների կողմից: 2009 և 2010թթ. տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ֆինանսավորում չի իրականացվել (2008թ.՝ 47.3 մլն դրամ, 2007թ.՝ 49.3 մլն դրամ):

ՀՀ առողջապահության նախարարության կողմից մատակարարների այս խմբի համար կատարված ֆինանսավորման 59.4%-ը կամ 18 107.5 մլն դրամը բաժին է ընկել բազմապրոֆիլ հիվանդանոցներին, որից 15 966.2 մլն դրամը կամ 88.2%-ը՝ պետական հիվանդանոցներին (2009թ.՝ 66.3% և 9 583.3 մլն դրամ, 2008թ.՝ 71.9% և 11 036.3 մլն դրամ, 2007թ.՝ 78.6% և 12 060.1 մլն դրամ, 2006թ.՝ 60.5% և 6 027.7 մլն դրամ, 2005թ.՝ 67.7% և 9 281 մլն դրամ), իսկ 11.8%-ը կամ 2 141.4 մլն դրամը (2008թ.՝ 28.1% և 4 318.3 մլն դրամ, 2007թ.՝ 21.4% և 3 274.3 մլն դրամ, 2006թ.՝ 3 937.3 մլն դրամ, 2005թ.՝ 2997 մլն դրամ)՝ բազմապրոֆիլ մասնավոր հիվանդանոցներին: 2010թ. ՀՀ առողջապահության նախարարության կողմից «Հիվանդանոցներ» խմբի մյուս բաղադրիչների ֆինանսավորումը կազմել է՝

- HP1.2 Հոգեբուժական հիվանդանոցներ և նարկոլոգիական դիսպանսերներ՝ 1997.9 մլն դրամ,
- HP1.3 Մասնագիտացված (բացի հոգեբուժական և նարկոլոգիական) հիվանդանոցներ՝ 10 002.9 մլն դրամ, որից
  - HP1.3.1 Տուբերկուլյոզի (պալարախտի) բուժման հիվանդանոցներ՝ 1491.4 մլն դրամ,
  - HP1.3.2 Ուռուցքաբանական հիվանդանոցներ՝ 1660.7 մլն դրամ,
  - HP1.3.3 Ծննդատներ՝ 3 483.4 մլն դրամ,
  - HP1.3.9 Այլ հիվանդանոցներ՝ 3365.4 մլն դրամ,
- HP1.5 Առողջարաններ՝ 368.1 մլն դրամ:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից 2010թ. իրականացվել 187.4 մլն դրամի ֆինանսավորում, որից 117.4 մլն դրամը բաժին է հասել բազմապրոֆիլ մասնավոր հիվանդանոցներին, իսկ 70 մլն դրամը՝ հոգեբուժական հիվանդանոցներին և նարկոլոգիական դիսպանսերներին: 2009թ. ֆինանսավորում չէր իրականացվել, իսկ 2008թ. իրականացված ֆինանսավորման ծավալը՝ 96.8 մլն դրամ (2007թ.՝ 153.3 մլն դրամ), ամբողջովին բաժին էր ընկել բազմապրոֆիլ մասնավոր հիվանդանոցներին: 2006թ. իրականացված 125.1 մլն դրամի ֆինանսավորումը բաշխվել էր հոգուտ մասնավոր հիվանդանոցների (49.6 մլն դրամ՝ պետական, 75.5 մլն դրամ՝ մասնավոր), 2005թ. 80.5 մլն դրամի չափով ֆինանսավորումը բաշխվել էր հետևյալ կերպ՝ 55.9%-ը (45 մլն դրամ) բաժին էր ընկել բազմապրոֆիլ պետական և 44.1%-ը (35.5 մլն դրամ)՝ բազմապրոֆիլ մասնավոր հիվանդանոցներին:

**1.2 Հոգեբուժական հիվանդանոցների և նարկոլոգիական դիսպանսերների ենթախումբ HP.1.2**

Հիվանդանոցների այս ենթախմբում 2010թ. մատուցված ծառայությունների ընդհանուր ծավալը կազմել է 2 067.9 մլն դրամ, կամ ընդամենը ֆինանսավորման 3.4%-ը (2009թ.՝ 2 212.6 մլն դրամ և 3.7%, 2008թ.՝ 1 862.4 մլն դրամ 2007թ.՝ 1 598.4 մլն դրամ, 2006թ.՝ 1 376.2 մլն դրամ, 2005թ.՝ 1 412.7 մլն դրամ և 2004թ.՝ 1 459.4 մլն դրամ): Մատուցված ծառայությունների ողջ ֆինանսավորումն իրականացվել է պետական հատվածի կողմից (ՀՀ առողջապահության ու աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություններ), իսկ 2009թ. ֆինանսավորման 98.5%-ը կամ 2 106.1 մլն դրամը իրականացվել էր պետական հատվածի (ՀՀ առողջապահության նախարարության) կողմից, իսկ 33.0 մլն դրամը կամ 1.5%-ը՝ մասնավոր հատվածի «Ոչ առևտրային կազմակերպություններ և «Մասնավոր/պետական մասնակցությամբ/ ձեռնարկություններ» ենթագործակալների կողմից:

**1.3 Մասնագիտացված հիվանդանոցների ենթախումբ HP.1.3**

Հիվանդանոցների այս ենթախմբում 2010թ. մատուցված ծառայությունների ծավալը կազմել է 13 795.5 մլն դրամ կամ ընդամենը ֆինանսավորման 22.8%-ը (2009թ.՝ 11 317.9 մլն դրամ և 19.2%, 2008թ.՝ 10 192.7 մլն դրամ 2007թ.՝ 9 389.9 մլն դրամ, 2006թ.՝ 7744.7 մլն դրամ, 2005թ.՝ 7365.9 մլն դրամ և 2004թ.՝ 6218.8 մլն դրամ), որից 10 002.9 մլն դրամը կամ 72.5%-ը ֆինանսավորվել է պետական հատվածի կողմից (ՀՀ առողջապահության նախարարություն) (2009թ.՝ 8 986 մլն դրամ և 79.4%, 2008թ.՝ 76.8% և 7 824.9 մլն դրամը 2007թ.՝ 65% և 6 099.4 մլն դրամ, 2006թ.՝ 61.7% և 4 776.0 մլն. դրամ, 2005թ.՝ 62.5% և 4 606.2 մլն դրամ):

Մասնավոր հատվածի կողմից ֆինանսավորումը կազմել է այս ենթախմբի ծառայությունների ֆինանսավորման ընդհանուր ծավալի 26%-ը կամ 3 590.4 մլն դրամը (2009թ.՝ 20.6% և 2 331.9 մլն դրամ, 2008թ.՝ 23.2% և 2 361.7 մլն դրամը 2007թ.՝ 34.2% և 3 210.5 մլն դրամ): Մասնավոր հատվածի ֆինանսավորման ծավալի 97.1%-ը կամ 3 486.6 մլն դրամը կազմել են տնային տնտեսությունների ուղղակի վճարումները (2009թ.՝ 82.3%-ը կամ 1 919.9 մլն դրամ, 2008թ.՝ 65.8% և 1 553.1 մլն դրամ, 2007թ.՝ 83.9% և 2 692.1 մլն դրամ), ոչ առևտրային կազմակերպությունների վճարումները կազմել են 2.1% կամ 74.3 մլն դրամ (2009թ.՝ 14.1% և 329.5 մլն դրամ, 2008թ.՝ 32.9% և 776.6 մլն դրամ, 2007թ.՝ 257.1 մլն դրամ, 2006թ.՝ 31.5 մլն դրամ, 2005թ.՝ 13.7 մլն դրամ), իսկ մասնավոր /պետական մասնակցությամբ/ կազմակերպությունների ֆինանսավորումը՝ 0.8% կամ 29.6 մլն դրամ (2009թ.՝ 3.6% և 76.4 մլն դրամ, 2008թ.՝ 1.3% և 32 մլն դրամը 2007թ.՝ 261.2 մլն դրամ, 2006թ.՝ 57 մլն դրամ, 2005թ.՝ 570.4 մլն դրամ):

Մնացյալ աշխարհի տրամադրած ֆինանսական միջոցները կազմել են 202.2 մլն դրամ, որից 148.9 մլն դրամը դոնորների կողմից տրամադրված նվիրատվությունների և փոխառությունների տեսքով, իսկ 53.3 մլն դրամը, որպես դոնորների կողմից տրամադրված տեխնիկական աջակցություն (2009թ.՝ 6.1 մլն դրամ, 2008թ.՝ 6.2 մլն դրամ, 2007թ.՝ 80.1 մլն դրամ, 2006թ.՝ 240.7 մլն դրամ, 2005թ.՝ 494.9 մլն դրամ): 2006թ. մասնավոր հատվածի ընդհանուր ֆինանսավորման կառուցվածքում 34.1% կամ 2 639.5 մլն դրամ կազմած վճարումները (2005թ.՝ 22.8% և 1 680.6 մլն դրամ) իրականացվել էին տնային տնտեսությունների ուղղակի վճարումների հաշվին:

Մասնագիտացված հիվանդանոցների խմբում ներառված են հիվանդանոցների հետևյալ ենթախմբերը.

**ա/ Տուբերկուլոզի (պալարախտի) բուժման հիվանդանոցներ (HP.1.3.1)** – մատուցված ծառայությունների ծավալը 2010թ. կազմել է 1 497.0 մլն դրամ (2009թ.՝ 1 051 մլն դրամ, 2008թ.՝ 1 450.3 մլն դրամ 2007թ.՝ 996.7 մլն դրամ, 2006թ.՝ 901.5 մլն դրամ, 2005թ.՝ 1 260.3 մլն դրամ), որը ֆինանսավորվել է պետական հատվածի կողմից 1493.4 մլն դրամի չափով (ՀՀ առողջապահության նախարարություն) և մնացյալ աշխարհի երկու ենթազործակալների կողմից, համապատասխանաբար, դոնորների կողմից տրամադրված նվիրատվություններ և փոխառություններ 1.8 մլն դրամի չափով ու 0.6 մլն դրամ դոնորների կողմից տրամադրված տեխնիկական աջակցության տեսքով: Ըստ էության, երկրում տուբերկուլոզով հիվանդացության մակարդակի բացասական փոփոխության պատճառով և/կամ, պետական հակատուբերկուլոզային ծրագրերի ֆինանսավորման ծավալների ավելացման շնորհիվ ֆինանսավորման աճը կազմել է 143.8%-ով: 2009թ., ինչպես և նախորդ տարի, այս մատակարարի ծառայություններն ամբողջովին ֆինանսավորվել էին ՀՀ առողջապահության նախարարության կողմից, թեև ֆինանսական միջոցների ծավալը կրճատվել էր 27.5%-ով (աճը նախորդ տարվա ցուցանիշի համեմատ կազմել է 75.5%): 2007թ. մատուցված ծառայությունների ծավալը կազմել էր 919.8 մլն դրամ (2006թ.՝ 780.9 մլն դրամ, 2005թ.՝ 901.9 մլն դրամ) և ֆինանսավորվել էր պետական հատվածի (ՀՀ առողջապահության նախարարության) և 76.9 մլն դրամ (2006թ.՝ 120.7 մլն դրամ, 2005թ.՝ 358.4 մլն դրամ) մնացյալ աշխարհի կողմից: Եթե 2006թ. այս ենթախմբում ֆինանսավորման ծավալը նախորդ տարվա համեմատ նվազել էր, ապա 2007թ. դարձյալ արձանագրվել է աճ՝ 110.6%: 2008թ. արձանագրվել է ֆինանսավորման ծավալի աճ 145.5%-ով:

**բ/ Ուռուցքաբանական հիվանդանոցներ (HP.1.3.2)** – մատուցված ծառայությունների ծավալը 2010թ. կազմել է 3 085.1 մլն դրամ և աճը նախորդ տարվա ցուցանիշի համեմատ՝ 2.2 անգամ (2009թ.՝ 1 417.9 մլն դրամ և աճը՝ 113.3%, 2008թ.՝ 1 251.1 մլն դրամ 2007թ.՝ 1 674.1 մլն դրամ, 2006թ.՝ 1 036.2 մլն դրամ, 2005թ.՝ 906.9 մլն դրամ), որից 1 660.7 մլն դրամը ֆինանսավորվել է **ՀՀ առողջապահության նախարարության** կողմից (2009թ.՝ 1 346.9 մլն դրամ, 2008թ.՝ 1 236.1 մլն դրամ, 2007թ.՝ 1 495.5 մլն դրամ, 2006թ.՝ 1034.9 մլն դրամ, 2005թ.՝ 776.3 մլն դրամ), 5.4 մլն դրամը ֆինանսավորվել է մասնավոր /պետական մասնակցությամբ/ ձեռնարկությունների կողմից (2009թ.՝ 71 մլն դրամ, 2008թ.՝ 15 մլն դրամ, 2007թ.՝ 174.2 մլն դրամ, 2006թ.՝ 1.4 մլն դրամ, 2005թ.՝ 130.6 մլն դրամ), տնային տնտեսությունների ուղղակի վճարումները կազմել են 1 368 մլն դրամ: 2010թ. 13.9 մլն դրամի չափով ֆինանսավորում տրամադրվել է ոչ առևտրային կազմակերպությունների կողմից (2007թ.՝ 4.4 մլն դրամ):

**գ/ Ծննդատներ (HP.1.3.3)** – մատուցված ընդհանուր ծառայությունների ծավալը կազմել է 5 682.1 մլն դրամ կամ «Մասնագիտացված հիվանդանոցներ» մատակարարի ֆինանսավորման 41.2%-ը (2009թ.՝ 5 044.6 մլն դրամ, 2008թ.՝ 3 383.3 մլն դրամ, 2007թ.՝ 3 953.3 մլն դրամ, 2006թ.՝ 3616.7 մլն դրամ, 2005թ.՝ 3182.3 մլն դրամ):

Ըւշագրավ է, որ եթե մինչև 2007թ. ներառյալ ֆինանսավորման ընդհանուր կառուցվածքում գերակշռում էին տնային տնտեսությունների ուղղակի վճարումները՝ 2 692.1 կամ 68.1%, 2006թ.՝ 2 639.5 մլն դրամ և 73%, 2005թ.՝ 1 680.6 մլն դրամ և 52.8%), ապա 2008թ. տնային տնտեսությունների ուղղակի վճարումների ծավալը նախորդ տարվա ցուցանիշի համեմատ կրճատվեց 42.3%-ով և կազմեց մատակարարների այս ենթախմբի ընդհանուր ֆինանսավորման 45.9%-ը: 2009թ. տնային տնտեսությունների կողմից ուղղակի վճարումների ծավալը եղել է 1 919.9 մլն դրամ, իսկ 2010թ.՝ 2 118.6 մլն դրամ, որի աճը նախորդ տարվա ցուցանիշի համեմատ կազմել է 110.4%: 2010թ. .4 մլն դրամի չափով ֆինանսավորում է իրականացվել նաև մասնավոր/պետական մասնակցությամբ/ կազմակերպությունների կողմից: Տնային տնտեսությունների կողմից կատարվող ուղղակի վճարումների փոքր իչ ավելացումը բացատրվում է նաև ծնունդների թվի ավելացմամբ”

2010թ. ՀՀ առողջապահության նախարարության կողմից իրականացվել է 3 483.4 մլն դրամ ֆինանսավորում, որի աճը նախորդ տարվա ցուցանիշի համեմատ կազմել է 111.6% (2009թ. 3 121.3 մլն դրամ, 2008թ.՝ 1 828.6 մլն դրամ, 2007թ.՝ 1 260.7 մլն դրամ, 2006թ.՝ 977.2 մլն դրամ):

«Մնացյալ աշխարհի» կողմից 2010թ. իրականացված ֆինանսավորումը դոնորների կողմից տրամադրված նվիրատվությունների տեսքով կազմել է 39 մլն դրամ, իսկ տեխնիկական աջակցության և դրամաշնորհների տեսքով՝ 13.9 մլն դրամ (2009թ.՝ 0, 2008թ.՝ 1.6 մլն դրամ, 2007թ.՝ մոտ 0.5 մլն դրամ, 2006թ.՝ 0, 2005թ.՝ 66 մլն դրամ):

**դ/ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի հիվանդանոցային բուժօգնություն իրականացնողների (HP.1.3.4)** կողմից մատուցված 1148.8 մլն դրամի ծառայություններն ամբողջովին ֆինանսավորվել են ՀՀ առողջապահության նախարարության կողմից (2009թ.՝ 84.6 մլն դրամ, 2008թ.՝ 84.6 մլն դրամ, 2007թ.՝ 84.8 մլն դրամ, 2006թ.՝ 63 մլն դրամ, 2005թ.՝ 54 մլն դրամ):

**ե/ Այլ հիվանդանոցների (HP.1.3.9)** կողմից բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալը 2010թ. կազմել է 3 382.4 մլն դրամ (2009թ.՝ 3 719.7 մլն դրամ, 2008թ.՝ 4 023.4 մլն դրամ, 2007թ.՝ 2 681 մլն դրամ, 2006թ.՝ 2 127 մլն դրամ, 2005թ.՝ 1 962.3 մլն դրամ), ինչը նախորդ տարվա ցուցանիշի համեմատ կրճատվել է 9.1%-ով (2009թ. կրճատվել էր 7.5%-ով, իսկ 2008թ. արձանագրվել էր 150.1% աճ): Ֆինանսավորման ընդհանուր ծավալից 3 216.5 մլն դրամը (2009թ.՝ 3 382.1 մլն դրամ, 2008թ.՝ 3 225.3 մլն դրամ, 2007թ.՝ 2 338.6 մլն դրամ, 2006թ.՝ 1 920.2 մլն դրամ, 2005թ.՝ 1 438.4 մլն դրամ) կազմել է պետական հատվածի ֆինանսավորումը ՀՀ առողջապահության նախարարության խողովակներով և 56.3 մլն դրամը (2009թ.՝ 331.5 մլն դրամ, 2008թ.՝ 793.6 մլն դրամ, 2007թ.՝ 339.7 մլն դրամ, 2006թ.՝ 87.1 մլն դրամ, 2005թ.՝ 453.6 մլն դրամ)՝ մասնավոր հատվածի ֆինանսավորումը, որն իրականացվել է ոչ առևտրային կազմակերպությունների կողմից 40.3 մլն դրամի չափով (2009թ.՝ 329.5 մլն դրամ, 2008թ.՝ 776.6 մլն դրամ, 2007թ.՝ 252.7 մլն դրամ, 2006թ.՝ 31.5 մլն դրամ, 2005թ.՝ 13.7 մլն դրամ) և 16 մլն դրամը մասնավոր /պետական

մասնակցությամբ/ կազմակերպությունների կողմից (2009թ.՝ 2 մլն դրամը, 2008թ.՝ 17 մլն դրամ, 2007թ.՝ մոտ 87 մլն դրամ, 2006թ.՝ 55.6 մլն դրամ, 2005թ.՝ 439.9 մլն դրամ):

«Մնացյալ աշխարհը» 2010թ. հիվանդանոցների այս խմբի կողմից մատուցված ծառայությունները ֆինանսավորել է 109.6 մլն դրամի չափով (2009թ.՝ 6.1 մլն դրամ, 2008թ.՝ 4.5 մլն դրամ, 2007թ.՝ 2.6 մլն դրամ, 2006թ.՝ 120 մլն դրամ, 2005թ.՝ 70.4 մլն դրամ)՝ տեխնիկական աջակցության և դրամաշնորհների տեսքով:

**1.4 Ոչ այրուցային /այլարժանի/ հիվանդանոցների խումբ HP.1.4** 2010թ. մատակարարների այս ենթախմբի կողմից մատուցվել է 868.4 մլն դրամի (2009թ.՝ 1226.5 մլն դրամ, 2008թ.՝ 524.7 մլն դրամ) ծառայություն, որն ամբողջովին ֆինանսավորվել է մասնավոր հատվածի կողմից: Ուշարժան է, որ այս մատակարարին տրամադրված ֆինանսավորման ծավալը 2009թ. նախորդ տարվա համեմատ աճել էր մոտ 2.3 անգամ, ապա 2010թ. կրճատվել է: 2006 և 2007թթ. այս մատակարարի մասով որևէ ֆինանսավորում չէր արձանագրվել:

**1.5 Առողջարանների/սանատորիաների ենթախումբ HP.1.5** մատուցված ծառայությունների ծավալը 2010թ. կազմել է 1189.4 մլն դրամ, իսկ աճը նախորդ տարվա ցուցանիշի համեմատ 125.8% (2009թ.՝ 945.5 մլն դրամ, 2008թ.՝ 1 081.3 մլն դրամ, 2007թ.՝ 1 156.1 մլն դրամ, 2006թ.՝ 1 050.9 մլն դրամ, 2005թ.՝ 786.6 մլն դրամ): 2009թ. այս մատակարարի մասով իրականացված ֆինանսավորման ծավալի աճը կազմել էր նախորդ տարվա ֆինանսավորման 87.4%-ը: Ֆինանսավորման գերակշիռ մասը՝ 821.3 մլն դրամ կամ ընդամենի 69.1%-ը կազմել են տնային տնտեսությունների ուղղակի վճարումները (785.8մլն դրամ և 83.1%, 2008թ.՝ 785.8 մլն դրամ, 2007թ.՝ 826.5 մլն դրամ, 2006թ.՝ 714.8 մլն դրամ, 2005թ.՝ 514.3 մլն դրամ): ՀՀ առողջապահության նախարարության կողմից 2010թ.՝ իրականացվել է ֆինանսավորում 368.1 մլն դրամի չափով (2009թ.՝ 159.7 մլն դրամ, 2008թ.՝ 237.6 մլն դրամ, 2007թ.՝ 325.1 մլն դրամ, 2006թ.՝ 331.5 մլն դրամ, 2005թ.՝ 272.3 մլն դրամ), իսկ «Մնացյալ աշխարհի» կողմից ինչպես և 2009թ. ֆինանսավորում չի իրականացվել (2008թ.՝ 57.9 մլն դրամ):

## **2. Բուժքույրական և քստ քնակության վայրի խնամատար կազմակերպությունների խումբ HP.2**

Մատակարարների այս խմբի կողմից մատուցված ծառայությունների ծավալը 2010թ. կազմել է 1376.7 մլն դրամ, որը ֆինանսավորվել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից և բաշխվել է հետևյալ ենթամատակարարներին. HP2.2 «Մտավոր հապաղում ունեցողների համար նախատեսված հաստատություններին» 16.5 մլն դրամի չափով և «Ծերանոցներ» ենթամատակարարին՝ 1360.2 մլն դրամի չափով: 2009թ. բացառապես «Ծերանոցներ» ենթախմբի կողմից քնակչությանը մատուցվել է 1 323.8 մլն դրամի (2008թ.՝ 1 351.9 մլն դրամ, 2007թ.՝ 1 217.5 մլն դրամ, 2006թ.՝ 1 035.1 մլն դրամ, 2005թ.՝ 830.7 մլն դրամ և 2004թ.՝ 967.9 մլն դրամ) առողջապահական ծառայություններ, որն ամբողջությամբ ֆինանսավորվել է պետական հատվածի կողմից (ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն):

### **3. Ամբուլատոր բժշկական ծառայություններ մատուցողների խումբ HP.3**

Խմբում ներառված են հետևյալ ենթախմբերն ըստ տարատեսակների. բժիշկների կաբինետներ, ատամնաբուժական կաբինետներ, առողջապահական այլ մասնագետների կաբինետներ, պոլիկլինիկաներ, բժշկական և ախտորոշիչ կենտրոններ, տնային պայմաններում բժշկական օգնություն մատուցողներ, ամբուլատոր ծառայություններ մատուցող այլ մատակարարներ: Խմբերից յուրաքանչյուրն իր հերթին բաժանվում է այլ ենթախմբերի:

Առողջապահական ծառայությունների մատակարարների այս խմբում 2010թ. բնակչությանը մատուցված ծառայությունների ընդհանուր ծավալը կազմել է 37 883.4 մլն դրամ (2009թ. 32 804.8 մլն դրամ, 2008թ.՝ 32 625.2 մլն դրամ, 2007թ.՝ 30 005.7 մլն դրամ, 2006թ.՝ 30 190.7 մլն դրամ, 2005թ.՝ 22 951.2 մլն դրամ և 2004թ.՝ 15807.3 մլն դրամ), որի ֆիզիկական ծավալի աճը նախորդ տարվա համեմատ կազմել է 115.5% (2009թ.՝ 100.5%, 2008թ.՝ 108.7%):

Մատակարարների կողմից իրականացված ծառայությունների ֆինանսավորումն իրականացվել է բոլոր հատվածների կողմից:

**Պետական հատվածի** ֆինանսավորումը կազմել է 20 071.7 մլն դրամ կամ ընդամենը մատակարարների այս խմբի ֆինանսավորման 53%-ը, իսկ աճը նախորդ տարվա ցուցանիշի համեմատ՝ 116.5% (2009թ.՝ 52.5% և 17 216.3 մլն դրամ, 2008թ.՝ 59.8% և 19 510.7 մլն դրամ, 2007թ.՝ 60.8% և 18 244.1 մլն դրամ, 2006թ.՝ 61.9% և 18 675.3 մլն դրամ, 2005թ.՝ 51.6% և 11 836 մլն դրամ, 2004թ.՝ 49.6% և 7 845.3 մլն դրամ): Հատկանշական է, որ 2009թ. պետական ֆինանսավորման ծավալը կրճատվել էր նախորդ տարվա ցուցանիշի համեմատ 11.7%-ով, իսկ 2008թ. նախորդ տարվա ցուցանիշի համեմատ ֆինանսավորման ծավալի աճը կազմել էր 106.9%:

Պետական հատվածի մասով, պահպանվել է վերջին տարիներին նկատվող ընդհանրական միտումը՝ մեծացել է ընդհանուր ֆինանսավորման ծավալը, ինչպես նաև էական փոփոխություններ են տեղի ունեցել թե՛ ֆինանսավորման ծավալների, թե՛ ֆինանսավորող գործակալներից յուրաքանչյուրի ունեցած տեսակարար կշիռների և թե՛ հենց գործակալների երեք հատվածների կառուցվածքներում առանձին բաղադրիչների մասով ֆինանսավորման տեսակարար կշիռների փոփոխությունների առումով: 2010թ. ՀՀ առողջապահության նախարարության կողմից տրված դրամական միջոցների ծավալը կազմել է 19 405.9 մլն դրամ՝ կազմելով պետական հատվածի ֆինանսավորման 96.7%-ը: 2009թ. արձանագրվել էր հակառակ պատկերը՝ ՀՀ առողջապահության նախարարության կողմից իրականացված ֆինանսավորումը կազմել էր 16 962.9 մլն դրամ՝ նախորդ տարվա ցուցանիշի համեմատ կրճատվելով 11.8%-ով, սակայն, միևնույն ժամանակ, այս հատվածի ֆինանսավորման ծավալների ընդհանուր կրճատման ֆոնին, կառուցվածքում պահպանել էր գերակշռող դիրքը՝ 98.5%:

2008թ. պահպանվել էր նախորդ տարիների միտումը՝ մեծացել էր ՀՀ առողջապահության նախարարության կողմից իրականացված ֆինանսավորման ծավալը, կազմելով՝ 19 229.1 մլն դրամ կամ պետական հատվածի ընդամենը ֆինանսավորման 98.5% (2007թ.՝ 98.2% և 17 919.2 մլն դրամ, 2006թ.՝ 99.1% և 18503.2 մլն դրամ, 2005թ.՝ 98.8% և 11 700 մլն դրամ, 2004թ.՝ 98.2% և 7702.8 մլն դրամ):

ՀՀ առողջապահության նախարարության կողմից 2010թ. տրամադրված ֆինանսավորումը մատակարարների այս խմբի ծախսերի ընդհանուր կառուցվածքում կազմել է 51.2%-ը (2009թ.՝ 51.7%, 2008թ.՝ 58.9%, 2007թ.՝ 59.7%, 2006թ.՝ 61.3%, 2005թ.՝ 51% և 2004թ.՝ 48.7%):

2010թ. պետական հատվածի ֆինանսավորման կառուցվածքում մյուս բաղադրիչների կողմից տրամադրված միջոցների ծավալների դինամիկ պատկերը հետևյալն է.

ՀՀ առողջապահության նախարարության կողմից իրականացված ֆինանսավորումն ըստ գործառույթների այս խմբի բաղադրիչների բաժին է ընկել գլխավորապես Ստացիոնար վերականգնողական բուժօգնությանը՝ 755.5 մլն դրամ (2009թ.՝ 529.7 մլն դրամ, 2008թ.՝ 529.8 մլն դրամ, 2007թ.՝ 753.9 մլն դրամ, 2006թ.՝ 774.2 մլն դրամ, 2005թ.՝ 727.7 մլն դրամ) և ցերեկային ստացիոնարում իրականացվող վերականգնողական բուժօգնությանը՝ 17.3 մլն դրամ (2009թ.՝ 39.3 մլն դրամ, 2008թ.՝ 39.3 մլն դրամ, 2007թ.՝ 22.2 մլն դրամ, 2006թ.՝ 19.4 մլն դրամ, 2005թ.՝ 74.7 մլն դրամ):

### **3. Բուժքույրական երկարաժամկետ խնամքի ծառայություններ HC.3**

2010թ. ծառայությունների ծավալը կազմել է 11.8 մլն դրամ, որից 4.4 մլն դրամը տրամադրվել է ՀՀ առողջապահության կողմից, 2.5 մլն դրամը մասնավոր հատվածի կողմից (ոչ առևտրային կազմակերպություններ՝ 1.8 մլն դրամ և մասնավոր/պետական մասնակցությամբ կազմակերպություններ՝ 0.7 մլն դրամ), 4.9 մլն դրամը, դրամաշնորհների և տեխնիկական օժանդակության տեսքով՝ արտաքին աշխարհի կողմից: 2009թ. գործառույթների այս խմբի մասով կատարված ֆինանսավորումը կազմել էր 296 մլն դրամ, որից ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից կատարվել են 274.4 մլն դրամի չափով վճարումներ՝ «Ցերեկային ստացիոնարի պայմաններում իրականացվող բուժքույրական երկարաժամկետ խնամքի ծառայությունների» դիմաց (2009թ.՝ 2008թ.՝ 51.3 մլն դրամ) և մնացյալ աշխարհի կողմից կատարված ֆինանսավորումը 21.5 մլն դրամի չափով «Ստացիոնար պայմաններում իրականացվող բուժքույրական երկարաժամկետ խնամքի ծառայությունների» դիմաց: 2007թ. մասնավոր հատվածի ոչ առևտրային կազմակերպություններ գործակալի կողմից 5.1 մլն դրամի չափով վճարումներ էր կատարվել՝ «Տնային պայաններում իրականացվող բուժքույրական երկարաժամկետ խնամքի ծառայությունների» դիմաց: 2006թ. գործառույթների այս բաղադրիչի մասով թե՛ մատուցված ծառայությունների և թե՛ ֆինանսավորման վերաբերյալ տեղեկատվություն չի արձանագրվել: Այս կատեգորիայի մասով ծախսերի տարանջատումը և տվյալների աղբյուրների բաղադրման ու հստակեցման



**հնարավորությունների բացակայությունը հիմնականում խոչընդոտում են ամբողջական և տարիների դինամիկ շարքերով տվյալներ ունենալուն: Ինչու չէ, կարևորագույն պատճառ է նաև ներկայիս առողջապահական համակարգում նման «ինատիստոսի» կամ մեխանիզմի բացակայությունը:**

**4. Բուժօգնության օժանդակ ծառայություններ HC.4**

Այս գործառույթային խմբում մատուցված ծառայությունների ծավալը 2010թ. կազմել է 11 946.4 մլն դրամ (2009թ.՝ 9 949.1 մլն դրամ, 2008թ.՝ 8 919.6 մլն դրամ, 2007թ.՝ 6 201.8 մլն դրամ և աճը նախորդ տարվա համեմատ գրեթե կրկնակի, 2006թ.՝ 3 102 մլն դրամ, 2005թ.՝ 3 814.7 մլն դրամ, 2004թ. 3 731.7 մլն դրամ), իսկ աճը նախորդ տարվա ցուցանիշի նկատմամբ՝ 120% (2009թ.՝ 115.4%, 2008թ.՝ 143.8%):

Գործառույթները ֆինանսավորվել են *պետական հատվածի* կողմից՝ 5 122 մլն դրամ (2009թ.՝ 4 926.1 մլն դրամ, 2008թ.՝ 5 022.4 մլն դրամ, 2007թ.՝ 3 427.1 մլն դրամ, 2006թ.՝ 1 450 մլն դրամ, 2005թ.՝ 1 158.9 մլն դրամ), *մասնավոր հատվածի* կողմից՝ 6 821.3 մլն դրամ (2009թ.՝ 5 015.3 մլն դրամ, 2008թ.՝ 3 873.9 մլն դրամ, 2007թ.՝ 2 773.2 մլն դրամ, 2006թ.՝ 1652.1 մլն դրամ, 2005թ.՝ 2 655.8 մլն դրամ), որից 6819.8 մլն դրամը տնային տնտեսությունների կողմից կատարված ուղղակի վճարումները (2008թ.՝ 3 862.9 մլն դրամ, 2007թ.՝ 2 765.8 մլն դրամ, 2006թ.՝ 1602.4 մլն դրամ, 2005թ.՝ 2 644.8 մլն դրամ) և *մնացյալ աշխարհի* կողմից՝ 2.2 մլն դրամ (2009թ.՝ 7.8 մլն դրամ, 2008թ.՝ 23.3 մլն դրամ, 2007թ.՝ 1.6 մլն դրամ):

Գործառույթների այս խմբի ենթաբաղադրիչների ֆինանսավորումը բաշխվել է հետևյալ կերպ.

- ***Կլինիկական լաբորատորիաների*** կողմից իրականացված գործառույթների դիմաց ֆինանսավորման ծավալը կազմել է 2198.3 մլն դրամ կամ ընդամենը ֆինանսավորման 18.4%-ը (2009թ.՝ 1420.3 մլն դրամ և 14.3%), ինչն ամբողջովին իրականացվել է տնային տնտեսությունների ուղղակի վճարումների հաշվին:

- ***Ախտորոշիչ ծառայությունների*** ամբողջական ֆինանսավորումը կազմել է 6177.4 մլն դրամ կամ այս խմբի ֆինանսավորման 51.7% (2009թ.՝ 4989.7 մլն դրամ և 50.2%, 2008թ.՝ 4 574.4 մլն դրամ և 51.3 %, 2007թ.՝ 2 987.3 մլն դրամ կամ 55.5%, 2007թ.՝ 4 515.9 մլն դրամ կամ 72.8%): Ի տարբերություն 2005թ. գրոյական ֆինանսավորման, 2006թ. իրականացված գործառույթների և ֆինանսավորման ծավալը կազմել էր 1487 մլն դրամ, որից 1285.8 մլն դրամը տնային տնտեսությունների ուղղակի վճարումներն էին, իսկ 151.8 մլն դրամը՝ ՀՀ առողջապահության նախարարության ֆինանսավորումը (2004թ.՝ 165.6 մլն դրամ):

Այս ենթագործառույթի մասով իրականացված ամբողջական ֆինանսավորման 49.9%-ը կամ 3086.2 մլն դրամը տրամադրվել է պետական հատվածի կողմից (2009թ.՝ 65.2% և 3 251.1 մլն դրամ, 2008թ.՝ 65.3% և 2 987.3 մլն դրամ, 2007թ.՝ 42.6% և 1 923.8 մլն դրամ), մասնավոր հատվածի ֆինանսավորումը կազմել է 3088.2 մլն դրամ, որից տնային տնտեսությունների ուղղակի վճարումները կազմել են ընդամենի մոտ 50%-ը կամ 3086.6 մլն դրամ (2009թ.՝ 34.7% և 1 730.8 մլն դրամ, 2008թ.՝ 34.2% և 1 563.8 մլն դրամ, 2007թ.՝ 57.4% և 2 590.5 մլն դրամ), իսկ 6.6 մլն դրամը տրամադրվել է արտաքին աշխարհի կողմից (2009թ.՝ 7.7 մլն դրամ, 2008թ.՝ 23.3 մլն դրամ):

- **Պագինտների շտապ բուժօգնություն և տեղափոխում գործառույթների** ֆինանսավորում՝ 2122.4 մլն դրամ, (2009թ.՝ 2113.2 մլն դրամ, 2008թ.՝ 1909.7 մլն դրամ, 2007թ.՝ 1 515 մլն դրամ, 2006թ.՝ 14167.5 մլն դրամ, 2005թ.՝ 1048.9 մլն դրամ, 2004թ.՝ 920.5 մլն դրամ), որից 1456 մլն դրամը (2009թ.՝ 1475.5 մլն դրամ, 2008թ.՝ 1 482.9 մլն դրամ, 2007թ.՝ 1 332.3 մլն դրամ) կազմել է պետական ֆինանսավորումը, իսկ մնացած 666.5 մլն դրամը (2009թ.՝ 637.7 մլն դրամ, 2008թ.՝ 426.8 մլն դրամ)՝ տնային տնտեսությունների ուղղակի վճարումները:

- **Բոլոր այլ լրացուցիչ ծառայությունների** ֆինանսավորումը կազմել է 1448.3 մլն դրամ (2009թ.՝ 1425.9 մլն դրամ, 2008թ.՝ 1 088 մլն դրամ, 2007թ.՝ 170.9 մլն դրամ, 2006թ.՝ 147 մլն դրամ, 2005թ.՝ 110 մլն դրամ, 2004թ.՝ 261 մլն դրամ), որից պետական ֆինանսավորում՝ 579.9 մլն դրամ (2009թ.՝ 199.4 մլն դրամ, 2008թ.՝ 552.3 մլն դրամ) և տնային տնտեսությունների ուղղակի վճարումներ՝ 868.4 մլն դրամ (2009թ.՝ 1226.5 մլն դրամ, 2008թ.՝ 524.7 մլն դրամ):

### **5. Անբույստոր պագինտներիև բաշխվող բժշկական ապրանքներ HC.5**

Այս խմբում ներառված գործառույթների մասով 2010թ. մատուցված ծառայությունների ծավալը կազմել է 58 191.1 մլն դրամ կամ բոլոր գործառույթների մասով իրականացված ֆինանսավորման 36.6%-ը (2009թ.՝ 33 129.1 մլն դրամ և 22.8%-ը, 2008թ.՝ 24 131.3 մլն դրամ, 2007թ.՝ 24 784.8 մլն դրամ, 2006թ.՝ 20 935.8 մլն դրամ, 2005թ.՝ 18 187.3 մլն դրամ, 2004թ.՝ 20 006.8 մլն դրամ) և աճը նախորդ տարվա ցուցանիշի համեմատ 175.6% (2009թ.՝ 137.3%): Ուշարժան է, որ 2008թ. գործառույթների այս խմբի մասով արձանագրվել էր ֆինանսավորման ծավալի կրճատում 2.6%-ով (2007թ.-ին նախորդ տարվա համեմատ աճը 118.8%):

Ըստ գործակալների, մատուցված ծառայությունների ողջ ծավալի ֆինանսավորման բաշխվածությունը հետևյալ տեսքն ունի.

**Պետական հատվածի** կողմից ֆինանսավորվել է՝ 9 220.2 մլն դրամի չափով կամ ընդամենը այս խմբի ֆինանսավորման 15.8%-ը, որի աճը նախորդ տարվա ցուցանիշի նկատմամբ ընթացիկ գներով կազմել է 2.1 անգամ, այն դեպքում, երբ 2009թ. ֆինանսավորման ծավալը կրճատվել էր նախորդ տարվա ցուցանիշի համեմատ 13.6%-ով, իսկ 2008թ. աճը կազմել էր 119.9% (2009թ.՝ 4 376 մլն դրամ և 13.2%, 2008թ.՝ 5 066.7 մլն դրամ և 21%, 2007թ.՝ 4 226.4 մլն դրամ, 2006թ.՝ 3 464.7 մլն դրամ, 2005թ.՝ 3189.6 մլն դրամ, 2004թ.՝ 2395.7 մլն դրամ): Պետական հատվածում ՀՀ առողջապահության նախարարության ֆինանսավորումը կազմել է 8 028.2 մլն դրամ կամ պետական ֆինանսավորման 87%-ը (2009թ.՝ 3 286.8 մլն դրամ և 75.1%, 2008թ.՝ 4 090.7 մլն դրամ և 80.7%, 2007թ.՝ 3 184.7 մլն դրամ և 75.4%, 2006թ.՝ 2 471 մլն դրամ և 73%, 2005թ.՝ 2537.8 մլն դրամ և 79.6%), ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը՝ 1 090.4 մլն դրամ կամ 13.5 %-ը (2009թ.՝ 987.6 մլն դրամ և 22.6%, 2008թ.՝ 867.3 մլն դրամ և 17.1%, 2007թ.՝ 933 մլն դրամ և 24.6%, 2006թ.՝ 803 մլն դրամ և 23.7%, 2005թ.՝ 550.4 մլն դրամ և 17.3%): ՀՀ ազգային անվտանգության ծառայության և ՀՀ ոստիկանության կողմից իրականացված ֆինանսավորումը կազմել է, համապատասխանաբար՝ 27.9 մլն դրամ և 73.7 մլն դրամ, (2009թ.՝ 27.9 մլն դրամ և 73.7 մլն դրամ, 2008թ.՝ 26.8 և 81.9 մլն

դրամ, 2007թ.՝ 26.8 և 81.9 մլն դրամ, 2006թ.՝ 27 և 82 մլն դրամ, 2005թ.՝ 25 և 76.4 մլն դրամ):

Պետական ֆինանսավորումն իրականացվել է գործառույթների այս խմբի «Գեղորայք և ոչ երկարատև օգտագործման այլ ապրանքներ» խմբի «Գեղատոմսով բաց թողնվող դեղորայք» գործառույթի մասով՝ 4 854.6 մլն դրամ, «Առանց դեղատոմսի բաց թողնվող դեղորայք»՝ 1814.7 մլն դրամ, «Թերապևտիկ հարմարանքներ և բժշկական նշանակության երկարատև օգտագործման այլ ապրանքներ» բաղադրիչի մասով՝ 2550.8 մլն դրամ, որից «Օրթոպեդիկ հարմարանքներ և այլ պրոթեզներ» ենթաբաղադրիչ՝ 81.8 մլն դրամ, «Ակնոցներ և ակնաբուժական այլ ապրանքներ»՝ 1.4 մլն դրամ, «Լսողական հարմարանքներ»՝ 103.7 մլն դրամ, «Բժշկատեխնիկական հարմարանքներ՝ ներառյալ հաշմանդամի սալյակներ» ենթաբաղադրիչ՝ 998.4 մլն դրամ և «Բոլոր այլ բժշկական ապրանքներ»՝ 1 365.4 մլն դրամ:

**Մասնավոր հատվածի** ֆինանսավորումը կազմել է 45 208.9 մլն դրամ, որից տնային տնտեսությունների ենթախմբի կողմից 43 277.1 մլն դրամ (2009թ.՝ 28 752.8 մլն դրամ, 2008թ.՝ 19 007 մլն դրամ, 2007թ.՝ 20 558.4 մլն դրամ, 2006թ.՝ 17 471.1 մլն դրամ, 2005թ.՝ 14962 մլն դրամ) վճարվել է «Առանց դեղատոմսի բաց թողնվող դեղորայք» բաղադրիչի մասով, որի աճը նախորդ տարվա ցուցանիշի համեմատ կազմել է 150.5% (2009թ. աճը նախորդ տարվա ցուցանիշի համեմատ կազմել էր 151.3%): Ոչ առևտրային կազմակերպությունների կողմից տրամադրված 25.9 մլն ֆինանսավորումից 1.2 մլն դրամը վճարվել է ՀԿ5.1.1 «Գեղատոմսով բաց թողնվող դեղորայքի» դիմաց, իսկ 24.7 մլն դրամը՝ բաշխվել է «Թերապևտիկ հարմարանքներ և բժշկական նշանակության երկարատև օգտագործման այլ ապրանքներ» բաղադրիչի ՀԿ5.2.4 «Բժշկա-տեխնիկական հարմարանքներ, ներառյալ հաշմանդամի սալյակներ»՝ 12.7 մլն դրամ և «Բոլոր այլ բժշկական ապրանքներ»՝ 12 մլն դրամ, ենթագործառույթների միջև: Ինչպես նկատելի է վերջին երկու տարիների ցուցանիշների դինամիկայից, տնային տնտեսությունների ծախսերի կառուցվածքում յուրաքանչյուր տարի առավել նշանակալի՝ 1.5 անգամից ավել, աճ արձանագրվում է «Առանց դեղատոմսի բաց թողնվող դեղորայք» բաղադրիչի մասով: 2009թ. առաջին անգամ արձանագրված նման շեշտակի աճը, նախ, մի կողմից, պայմանավորված էր մի շարք վարակիչ հիվանդությունների բուժման տարածմամբ (2009թ. ԱՀԿ կողմից H1N1 վիրուսի մասով անգամ հայտարարվել էր պանդեմիա), որի արդյունքում աճեցին դեղորայքի օգտագործման ծավալները, մյուս կողմից, հիվանդությունների տարածման ռիսկն ու պահանջարկի մեծացումը հանգեցրին մանրածախ գների աճի: Այսպես, նախորդ տարվա համեմատ ըստ 10 խոշորացված ապրանքների (ծառայությունների) խմբերի սպառողական գների ինդեքսի կառուցվածքում «բուժսպասարկում և դեղորայք» խմբի մասով գների աճը 2009թ. հունվարին կազմել էր 121.2%, իսկ տարվա վերջին՝ 112.5%<sup>2</sup>: Ընդ որում, հատկանշական է, որ 12 ամսվա կտրվածքով ցուցանիշների փոփոխությունը երևան է հանում գների աճի արագացող տեմպը, մասնավորապես՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ միայն դեղամիջոցների գների աճը 2009թ. հունվարի 100.3%-ից դեկտեմբերին հասել է

<sup>2</sup> Սպառողական գների ինդեքսը (գները) ՀՀ-ում 2009թ. հունվար դեկտեմբերին, վիճակագրական տեղեկագիր, ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Ե. 2010, էջ 25, 28-29, 130-131:

119.5%-ի, իսկ 2009թ. յուրաքանչյուր ամիսը նախորդ ամսվա նկատմամբ դիտարկելիս՝ հունվարի 100.3%-ից աճել է 129.1% դեկտեմբերին:

Ըստ պաշտոնական վիճակագրական տեղեկատվության, նախորդ տարվա համեմատ ըստ 10 խոշորացված ապրանքների (ծառայությունների) խմբերի սպառողական գների ինդեքսի կառուցվածքում «բուժսպասարկում և դեղորայք» խմբի մասով գների աճը 2010թ. հունվարին կազմել է 109.1%, իսկ տարվա վերջին՝ 106.6%, որից, սակայն, միայն դեղամիջոցների գների աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ 2010թ. հունվարին կազմել է 129.1%, իսկ դեկտեմբերին 108.5%<sup>3</sup>: 2010թ. տնային տնտեսությունների կողմից դեղորայքի ձեռք բերման նպատակով կատարված ծախսերի նման կտրուկ աճը գների փոփոխությամբ պայմանավորելը լրացուցիչ անգամ հիմնավորվում է նաև տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության տվյալների օգնությամբ, մասնավորապես՝ համաձայն հետազոտության ընտրանքում ներառված տնային տնտեսությունների կողմից լրացված «Օրագրի» տվյալների, 2009թ. նկատմամբ 2010թ. դեղորայքի տարբեր տեսակների վրա մեկ շնչի հաշվով կատարված ծախսերի աճը կազմել է 1.8-ից 3.9 անգամ: Տնային տնտեսությունների կողմից դեղորայքի և այլ բժշկական ապրանքների վրա կատարված ծախսերի փոփոխությունն առավել տեսանելի է ստորև ներկայացվող աղյուսակի թվերից.

*Աղյուսակ. Տնային տնտեսությունների կողմից դեղորայքի և այլ բժշկական ապրանքների վրա կատարված ծախսը մեկ շնչի հաշվով, դրամ<sup>4</sup>*

Ցուցանիշի անվանումը	Բոլոր տնային տնտեսությունները	այդ թվում		Մինչև 16 տարեկան երեխա ունեցող տնային տնտեսություններ
		Քաղաքաբնակ	Գյուղաբնակ	
2009թ.				
<b>Դեղորայք և այլ բժշկական ապրանքներ</b>	<b>646</b>	<b>754</b>	<b>440</b>	<b>436</b>
2010թ.				
<b>Դեղորայք և այլ բժշկական ապրանքներ</b>	<b>1143</b>	<b>1207</b>	<b>1028</b>	<b>873</b>

*Աղբյուրը՝ Տնային տնտեսությունների կենսամակարդակ ամբողջացված հետազոտության տվյալների բազա*

Մնացած աշխարհի կողմից իրականացվել է 3762 մլն դրամի (2009թ.՝ 0.6 մլն դրամ, 2008թ.՝ 57.6 մլն դրամ) ֆինանսավորում՝ «Դեղատոմսով բաց թողնվող դոզորայք» ենթագործառույթի մասով՝ 151.1 մլն դրամի չափով (2007 և 2006թթ. ֆինանսավորում չի իրականացվել, իսկ 2005թ. իրականացվել է բարեգործական

<sup>3</sup> Սպառողական գների ինդեքսը (գները) ՀՀ-ում 2010թ. հունվար դեկտեմբերին, վիճակագրական տեղեկագիր, ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Ե. 2011, էջ 25,28-29, 126-127:

<sup>4</sup> Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, վիճակագրական վերլուծական զեկույց, ըստ 2010թ-ի տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության արդյունքների, ՀՀ ԱՎԾ, Ե. 2011, էջ 139-151:

ծրագրերի միջոցների հաշվին և կազմել 12.8 մլն դրամ) և 2 052.1 մլն դրամ «Առանց դեղատոմսի բաց թողնվող դեղորայք» ենթաբաղադրիչի մասով: Մնացյալ աշխարհի կողմից 1558.9 մլն դրամի չափով ֆինանսավորում իրականացվել է «Թերապևտիկ հարմարանքներ և բժշկական նշանակության երկարատև օգտագործման այլ սարքավորումներ» գործառույթի մասով:

**6. Հիվանդությունների կանխարգելում և հասարակական առողջապահության ծառայություններ HC.6**

Այս խմբում ներառված գործառույթների մասով մատուցված ծառայությունների ծավալը 2010թ. կազմել է 5 738 մլն դրամ (2009թ.՝ 6 762.8 մլն դրամ, 2008թ.՝ 6 007.4 մլն դրամ, 2007թ.՝ 4 350.8 մլն դրամ, 2006թ.՝ 5 713.7 մլն դրամ, 2005թ.՝ 4210.7 մլն դրամ, 2004թ.՝ 946.5 մլն դրամ), որը ֆինանսավորվել է պետական հատվածի կողմից՝ 4 212.6 մլն դրամ կամ ընդամենը ֆինանսավորման 73.4%-ը (2009թ.՝ 4 175.7 մլն դրամ և 61.7%, 2008թ.՝ 4 150.7 մլն դրամ և 69.1%, 2007թ.՝ 4 007.1 մլն դրամ և 92.1%, 2006թ.՝ 3 571.2 մլն դրամ և 64.5%, 2005թ.՝ 2 826.6 մլն դրամ և 67.1%), որից ՀՀ առողջապահության նախարարության կողմից իրականացված ֆինանսավորումը՝ 4 092.6 մլն դրամ (2009թ.՝ 4 088.7 մլն դրամ, 2008թ.՝ 3 953.7 մլն դրամ, 2007թ.՝ 3 925.1 մլն դրամ, 2006թ.՝ 3 346.5 մլն դրամ, 2005թ.՝ 2744.2 մլն դրամ), ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության կողմից իրականացված ֆինանսավորումը՝ 120 մլն դրամ (2009թ.՝ 87 մլն դրամ, 2008թ.՝ 97 մլն դրամ, 2007թ.՝ 82 մլն դրամ, 2006թ.՝ 100 մլն դրամ, 2005թ.՝ 82.4 մլն դրամ):

Մասնավոր հատվածի կողմից ֆինանսավորվել է 26.6% կամ 1 525.4 մլն դրամ, որն ամբողջությամբ ֆինանսավորվել է տնային տնտեսությունների կողմից: 2009թ. ֆինանսավորումը կազմել էր 2 356.1 մլն դրամ կամ ընդամենի 34.8%, որից 1 382.3 մլն դրամը կազմել են տնային տնտեսությունների ուղղակի վճարումները, իսկ 973.8 մլն դրամը՝ ոչ առևտրային կազմակերպությունների կողմից տրամադրված ֆինանսական միջոցները: Մասնավոր հատվածի կողմից 2008թ. այս խմբի գործառույթների մասով իրականացված ֆինանսավորումը կազմել է 1 105.6 մլն դրամ, որից 1 099.2 մլն դրամը տնային տնտեսությունների ուղղակի վճարումների հաշվին և 6.4 մլն դրամը ոչ առևտրային կազմակերպությունների միջոցների հաշվին: 2007թ. մասնավոր հատվածի կողմից ֆինանսավորում կամ որևէ վճարում չի իրականացվել (2006թ.՝ 51.5 մլն դրամ, 2005թ.՝ 115.8 մլն դրամ):

«Մնացյալ աշխարհի» կողմից 2010թ. գործառույթների այս խմբի մասով ֆինանսավորում չի իրականացվել (2009թ.՝ 3.5% և 231 մլն դրամ, 2008թ.՝ 751.1 մլն դրամ և 12.5%, 2007թ.՝ 343.7 մլն դրամ, 2006թ.՝ 2 091 մլն դրամ, 2005թ.՝ 1228.2 մլն դրամ), որից 1 125.7 մլն դրամը՝ «Դոնորների կողմից տրամադրված նվիրատվություններն ու փոխառությունները», իսկ 93 մլն դրամը՝ «Դոնորների կողմից տրամադրված տեխնիկական աջակցությունն ու դրամաշնորհները»:

Գործառույթների ֆինանսավորման ու մատուցված ծառայությունների բաշխումն ըստ ենթաբաղադրիչների հետևյալ պատկերն է ներկայացնում.

*Մոր և մանկան առողջություն* – ՀՀ առողջապահության նախարարություն՝ 1 105.8 մլն դրամ (2009թ.՝ 1 040.2 մլն դրամ, 2008թ.՝ 946.1 մլն դրամ, 2007թ.՝ 1 110.5 մլն

դրամ, 2006թ.՝ 966.5 մլն դրամ, 2005թ.՝ 642 մլն դրամ), մասնավոր հատվածից տնային տնտեսություններ (կատարված վճարումների ողջ ծավալը)՝ 1 525.4 մլն դրամ (2009թ.՝ 1 382.3 մլն դրամ, 2008թ.՝ 1 105.6 մլն դրամ) և «Մնացած աշխարհ»՝ 0 մլն դրամ (2009թ.՝ 42 մլն դրամ, 2008թ.՝ 207.7 մլն դրամ, 2007թ.՝ 0, 2006թ.՝ 1650.5 մլն դրամ, 2005թ.՝ 803.8 մլն դրամ):

*Բժշկական ծառայություններ դպրոցներում* - ՀՀ առողջապահության նախարարություն՝ 410.4 մլն դրամ (2009թ.՝ 393.4 մլն դրամ, 2008թ.՝ 481.2 մլն դրամ, 2007թ.՝ 466.6 մլն դրամ, 2006թ.՝ 437.4 մլն դրամ, 2005թ.՝ 345.9 մլն դրամ):

*Տարափոխիկ հիվանդությունների կանխարգելում* - ՀՀ առողջապահության նախարարություն՝ 2 576.4 մլն դրամ (2009թ.՝ 2 655 մլն դրամ, 2008թ.՝ 2 526.5 մլն դրամ, 2007թ.՝ 2 248 մլն դրամ, 2006թ.՝ 1 942.6 մլն դրամ, 2005թ.՝ 1756.4 մլն դրամ) և «Մնացած աշխարհ»՝ 1 132.7 մլն դրամ (2009թ.՝ 114.2 մլն դրամ, 2008թ.՝ 11.4 մլն դրամ, 2007թ.՝ 178.5 մլն դրամ, 2006թ.՝ 401 մլն դրամ, 2005թ.՝ 424.4 մլն դրամ):

*Առողջության պահպանումը արտադրությունում* – ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն՝ 120 մլն դրամ (2009թ.՝ 87 մլն դրամ, 2008թ.՝ 97 մլն դրամ, 2007թ.՝ 82 մլն դրամ, 2006թ.՝ 100 մլն դրամ, 2005թ.՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն՝ 82.4 մլն դրամ և Մնացած աշխարհ՝ 803.8 մլն դրամ):

*Ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելում*- ՀՀ առողջապահության նախարարություն՝ ֆինանսավորում չի իրականացվել (2009թ.՝ 0, 2008թ.՝ 0, 2007թ.՝ 100 մլն դրամ և «Մնացած աշխարհ»՝ 2008թ.՝ 11.4 մլն դրամ, 2007թ.՝ 2.5 մլն դրամ, 2006թ.՝ 8.4 մլն դրամ, 2005թ.՝ մասնավոր ձեռնարկությունների ֆինանսական միջոցներ՝ 155.8 մլն դրամ):

*Հասարակական առողջապահության մնացած բոլոր այլ ծառայություններ* – ֆինանսավորում չի իրականացվել որևէ գործակալի կողմից (2009թ.՝ «Մնացյալ աշխարհ»՝ 74.8 մլն դրամ):

## **7. Առողջապահության և բժշկական ապահովագրության կառավարում ՀՀ**

Այս խմբում ներառված գործառույթների մասով մատուցված ծառայությունների ծավալն ու համապատասխան ֆինանսավորումը կազմել է 2293.5 մլն դրամ (2009թ.՝ 1 225.8 մլն դրամ, 2008թ.՝ 1 271.8 մլն դրամ, 2007թ.՝ 1 500.4 մլն դրամ, 2006թ.՝ 1784.6 մլն դրամ, 2005թ.՝ 1374.6 մլն դրամ, 2004թ.՝ 517.7 մլն դրամ), որի ընդհանուր ծավալի գերակշիռ մասը՝ 89.2%-ը կամ 2 047.2 մլն դրամը (2009թ.՝ 99% և 1 213.9 մլն դրամ, 2008թ.՝ 91% և 1 156.9 մլն դրամ, 2007թ.՝ 62.1% և 932 մլն դրամ, 2006թ.՝ 1139.8 մլն դրամ, 2005թ.՝ 925.7 մլն դրամ) ֆինանսավորվել է պետական հատվածի (ՀՀ առողջապահության նախարարություն) կողմից և ուղղվել է «Առողջապահության ընդհանուր պետական կառավարում» գործառույթին:

Մասնավոր հատված գործակալի (ոչ առևտրային կազմակերպություններ՝ 58.8 մլն դրամ և մասնավոր ձեռնարկություններ՝ 23.8 մլն դրամ) կողմից իրականացված ֆինանսավորումը կազմել է 83.6 մլն դրամ և ուղղվել «Առողջապահություն ընդհանուր պետական կառավարում» գործառույթին:

162.7 մլն դրամը կամ 7.1%-ը (2009թ.՝ 11.9 մլն դրամ և 1%, 2008թ.՝ 114.9 մլն դրամ և 9%, 2007թ.՝ 568.2 մլն դրամ և 37.9%, 2006թ.՝ 644.8 մլն դրամ, 2005թ.՝ 448.8 մլն դրամ)՝ ֆինանսավորվել «Մնացյալ աշխարհի» կողմից՝ նույն գործառույթի մասով: 2004թ. ողջ ֆինանսավորումն իրականացվել էր բացառապես պետական հատվածի կողմից:

**8. Ըստ տեսակի չղասակարգված առողջապահական այլ ծախսեր HC.nsk**

Այս խմբում ներառված գործառույթների մասով մատուցված ծառայությունների ծավալը 2010թ. կազմել է 1 360.2 մլն դրամ (2009թ.՝ 415.7 մլն դրամ, 2008թ.՝ 1 635.9 մլն դրամ, 2007թ.՝ 1 234.3 մլն դրամ, 2006թ.՝ 1 478.6 մլն դրամ, 2005թ.՝ 1429.3 մլն դրամ, 2004թ.՝ 2231.8 մլն դրամ), որը ֆինանսավորվել է պետական հատվածի չՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից: 2009թ. ֆինանսավորման հիմնական մասը կատարվել էր չՀ առողջապահության նախարարության կողմից՝ 379.5 մլն դրամ, (2008թ.՝ 284 մլն դրամ և չՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից՝ 1 351.9 մլն դրամ, 2007թ.՝ 1 035.1 մլն դրամ):2006թ.-ին պետական հատվածի ֆինանսավորումը կազմել էր 1 035.1 մլն դրամ, 2005թ.-ին՝ 1 429.3 մլն դրամ, իսկ մասնավոր հատվածինը՝ 2006թ.-ին՝ 443.5 մլն դրամ, 2005թ.-ին՝ 0:

**9.Առողջապահության հետ կապված գործառույթներ HC.R.1-5**

**Առողջապահական ծառայություններ մատուցող հաստատությունների կապիտալի ձևավորում HC.R.1**

Այս խմբում ներառված գործառույթների մասով մատուցված ծառայությունների և համապատասխան ֆինանսավորման ծավալը 2010թ. կազմել է 7 342.6 մլն դրամ (2009թ.՝ 16 987.7 մլն դրամ, 2008թ.՝ 15 453.2 մլն դրամ, 2007թ.՝ 26 923 մլն դրամ, 2006թ.՝ 18 201.6 մլն դրամ, 2005թ.՝ 10 940 մլն դրամ), իսկ ծավալը կրճատվել է նախորդ տարվա ցուցանիշի համեմատ մոտ 57%-ով: 2009թ. ֆինանսավորման ծավալի աճը ընթացիկ գներով նախորդ տարվա ցուցանիշի համեմատ կազմել էր 109.9%, այն դեպքում, երբ 2008թ. արձանագրվել էր ցուցանիշի նվազում 42.6%-ով:

Ըստ գործակալների, **պետական հատվածի** կողմից ֆինանսավորվել է ՝ 6476.7 մլն դրամ կամ ընդամենի 88.2%-ը (2009թ.՝ 12 318.4 մլն դրամ և 72.5%, 2008թ.՝ 9 911.6 մլն դրամ և 64.1%, 2007թ.՝ 21 911.3 մլն դրամ և 81.4%, 2006թ.՝ 14 458.6 մլն դրամ, 2005թ.՝ 7 966.5 մլն դրամ, 2004թ.՝ 1 917.7 մլն դրամ), որից չՀ Առողջապահության նախարարության կողմից իրականացված ֆինանսավորումը՝ 5 075.8 մլն դրամ (2009թ.՝ 11 052.9 մլն դրամ, 2008թ.՝ 8 484.5 մլն դրամ, 2007թ.՝ 20 619.4 մլն դրամ, 2006թ.՝ 13 436.8 մլն դրամ, 2005թ.՝ 7 240.1 մլն դրամ), չՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության՝ 0, (2009թ.՝ 25.5 մլն դրամ), չՀ կրթության և գիտության նախարարության՝ 935.8 մլն դրամ (2009թ.՝ 659.7 մլն դրամ, 2008թ.՝ 650.7 մլն դրամ, 2007թ.՝ 361.8 մլն դրամ, 2006թ.՝ 518.2 մլն դրամ, 2005թ.՝ 615.1 մլն դրամ), պետական հատվածի այլ ֆինանսավորումը՝ 93.4 մլն դրամ (2009թ.՝ 272.8 մլն դրամ, 2008թ.՝ 672.5 մլն դրամ, 2007թ.՝ 788 մլն դրամ, 2006թ.՝ 392.3 մլն դրամ, 2005թ.՝ 111.3 մլն դրամ), չՀ ոստիկանության՝ 0, (2009թ.՝ 0, 2008թ.՝ 100 մլն դրամ, 2007թ.՝ 92.7 մլն դրամ), պետական կառավարման մարզային մարմինների՝ 0, (2009թ.՝ 163.8 մլն դրամ, 2008թ.՝ 3.9 մլն դրամ, 2007թ.՝ ֆինանսավորում չի իրականացվել, 2006թ.՝ 74.9 մլն դրամ), տեղական ինքնակառավարման մարմինների՝ 371.8 մլն դրամ (2009թ.՝ 143.7 մլն դրամ, 2008թ.՝ 0, 2007թ.՝ 49.3 մլն դրամ, 2006թ.՝ 36.4 մլն դրամ):

Եթե գործառույթների այս խմբի մասով, հիմնականում շնորհիվ պետական ֆինանսավորման ծավալների շեշտակի մեծացման, 2007թ. արձանագրվել էր զգալի աճ՝ 147.9%, սակայն 2008թ. արձանագրվել է գրեթե նույնքան կրճատում՝ 42.6%՝ դարձյալ

պետական ֆինանսավորման կրճատմամբ պայմանավորված: Չնայած 2009թ. պետական ֆինանսավորման ծավալների ավելացմանը, այնուհանդերձ այն դեռևս հեռու է 2007թ. մակարդակը վերականգնելուց:

**Մասնավոր հատվածի** ֆինանսավորումը կազմել է 293.8 մլն դրամ կամ ընդամենի 4%-ը (2009թ.՝ 2 069.9 մլն դրամ և 12.2%, 2008թ.՝ 2 207.7 մլն դրամ և 14.3%, 2007թ.՝ 1 858.7 մլն դրամ, 2006թ.՝ 2 202 մլն դրամ, 2005թ.՝ 2127.6 մլն դրամ), որի ծավալը նախորդ տրվա ցուցանիշի համեմատ կրճատվել է 85.9%-ով: 2009թ. ֆինանսավորման ծավալը նվազել էր 2008թ. ցուցանիշի համեմատ 6.2%-ով (2008թ. աճը կազմել էր 118.8%, իսկ 2007թ. արձանագրվել էր 15.6% նվազում):

**Մնացյալ աշխարհի** կողմից ֆինանսավորումն իրականացվել է 572.1 մլն դրամի չափով (2009թ.՝ 2 599.7 մլն դրամ, 2008թ.՝ 3 333.8 մլն դրամ, 2007թ.՝ 3 152.9 մլն դրամ, 2006թ.՝ 1 550 մլն դրամ, 2005թ.՝ 845.8 մլն դրամ, 2004թ.՝ 256.7 մլն դրամ), որի ծավալը նախորդ տրվա ցուցանիշի համեմատ կրճատվել է 78%-ով: 2009թ. ֆինանսավորման ծավալը նախորդ տարվա ցուցանիշի համեմատ կրճատվել էր 22%-ով (2008թ. աճը՝ 105.7%, 2007թ. աճը՝ մոտ 2 անգամ):

Գործառույթների այս խմբում իրականացված ֆինանսավորման 6 119.1 մլն դրամը կամ ընդամենի 83.3%-ը (2009թ.՝ 16 023.5 մլն դրամ և 94.3%, 2008թ.՝ 90.8% և 14 039.7 մլն դրամ, 2007թ.՝ 92.8% և 24 994.5 մլն դրամ) բաժին է ընկել **«Առողջապահական ծառայություններ մատուցող հաստատությունների կապիտալի ձևավորում/ներգրավում» HC.R.1** բաղադրիչին, որի 87.8%-ը կամ 5 371 մլն դրամը (2009թ.՝ 72.8% և 11 658.7 մլն դրամ, 2008թ.՝ 65.1% և 9 147.3 մլն դրամ, 2007թ.՝ 84.7% և 21 175.4 մլն դրամ) կազմել է պետական հատվածի կողմից ֆինանսավորումը, այդ թվում՝ ՀՀ առողջապահության նախարարության բաժինը կազմել է 4 905.9 մլն դրամ (2009թ.՝ 11 052.9 մլն դրամ, 2008թ.՝ 8 484.5 մլն դրամ, 2007թ.՝ 20 245.4 մլն դրամ), այլ պետական մարմինների բաժինը՝ 93.4 մլն դրամ և տեղական ինքնակառավարման մարմինների ողջ ֆինանսավորումը, համապատասխանաբար՝ 371.8 մլն դրամ (2009թ.՝ 143.7 մլն դրամ):

Մասնավոր հատվածի կողմից ֆինանսավորումը կազմել է 253.8 մլն դրամ կամ ընդամենի 4.1%-ը (2009թ.՝ 2 054.4 մլն դրամ և 12.2%, 2008թ.՝ 2 199.6 մլն դրամ և 15.7%), որից ոչ առևտրային կազմակերպությունների 181.5 մլն դրամ (2009թ.՝ 1 334.4 մլն դրամ) և մասնավոր ձեռնարկությունների 72.3 մլն դրամ (2009թ.՝ 735.3 մլն դրամ) ֆինանսական միջոցները դարձյալ ուղղվել են առողջապահական ծառայություններ մատուցող հաստատությունների կապիտալի ձևավորման գործառույթին:

«Մնացյալ աշխարհի» կողմից տրամադրված ֆինանսական միջոցների ծավալը կազմել է 494.2 մլն դրամ կամ ընդամենի 8.1%-ը (2009թ.՝ 2 310.4 մլն դրամ և 14.4%, 2008թ.՝ 2 692.7 մլն դրամ և 19.2%):

**HC.R.2 «Առողջապահական անձնակազմի կրթություն և ուսուցում»** գործառույթների մասով իրականացված ֆինանսավորման ծավալը կազմել է 1 108.1 մլն դրամ (2009թ.՝ 756.6 մլն դրամ, 2008թ.՝ 1 068.9 մլն դրամ, 2007թ.՝ 1 441.6 մլն դրամ),



որը ֆինանսավորվել է ՀՀ առողջապահության նախարարության կողմից 76.8 մլն դրամի չափով, ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից 935.8 մլն դրամի չափով (2009թ.՝ 659.7 մլն դրամ), 32.4 Մլն դրամ՝ մասնավոր հատվածի կազմակերպությունների կողմից և մնացած աշխարհի կողմից 63.1 մլն դրամի չափով (2009թ.՝ 96.9 մլն դրամ):

*HC.R.3* գործառույթների «Առողջապահության համակարգում իրականացվող հետազոտությունների և մշակումների ծախսեր» բաղադրիչի մասով իրականացված ֆինանսավորման ծավալը կազմել է 115.4 մլն դրամ (2009թ.՝ 207.6 մլն դրամ, 2008թ.՝ 344.6 մլն դրամ, 2007թ.՝ 490 մլն դրամ), որից 93.1 մլն դրամը ՀՀ առողջապահության նախարարության կողմից, մոտ 8 մլն դրամը մասնավոր հատվածի ոչ առևտրային կազմակերպությունների և մասնավոր ձեռնարկությունների կողմից (2009թ.՝ 15.2 մլն դրամ), իսկ 14.8 մլն դրամը «Մնացյալ աշխարհի» գործակալի կողմից (2009թ.՝ 192.4 մլն դրամ):

**10.Ըստ տեսակի չդասակարգված ծախսեր HC.R nsk**

Ըստ տեսակի չդասակարգված ծախսերի մասով 2010թ. ֆինանսավորում չի իրականացվել (2009թ.՝ 1 550.9 մլն դրամ, 2008թ.՝ 60.2 մլն դրամ, 2007թ.՝ 1 631 մլն դրամ, 2006թ.՝ 3 654.3 մլն դրամ, 2005թ.՝ 2 498.7 մլն դրամ): 2009թ. ֆինանսավորումն ամբողջովին իրականացվել էր պետական հատվածի ՀՀ առողջապահության նախարարություն (227.1 մլն դրամ) և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն (1 323.8 մլն դրամ) ենթագործակալների կողմից: 2008թ. ողջ ֆինանսավորումը բաժին էր ընկել մասնավոր հատվածի «Ոչ առևտրային կազմակերպություններ» ենթագործակալին: 2007թ. ողջ ֆինանսավորումն իրականացվել էր ՀՀ առողջապահության նախարարության կողմից՝ 1 631 մլն դրամ և 2006թ.՝ 610.5 մլն դրամ իսկ «Մնացած աշխարհի» կողմից՝ 1 155.6 մլն դրամ, 2005թ.-ին Առողջապահության նախարարության կողմից՝ 610.7 մլն դրամ և «Մնացյալ աշխարհի» կողմից՝ 1888 մլն դրամ):

***Ամփոփելով Առողջապահության ազգային հաշիվների «Ֆինանսական գործակալներ և գործառույթներ» հաշվի տվյալները՝ արձանագրում ենք հետևյալը.***

1. Ֆինանսական գործակալների կողմից ընդհանուր ֆինանսավորումը 2010թ. կազմել է **159 086.9 մլն դրամ** (2009թ.՝ 145 313.3 մլն դրամ, 2008թ.՝ 137 042.6 մլն դրամ 2007թ.՝ 139 259.8 մլն դրամ, 2006թ.՝ 124 251.6 մլն դրամ, 2005թ.՝ 121 193.7 մլն դրամ), որից.

1.1 Պետական հատված՝ **62 743.9** մլն դրամ (2009թ.՝ 62 709 մլն դրամ, 2008թ.՝ 59 859.9 մլն դրամ, 2007թ.՝ 65 088.8 մլն դրամ, 2006թ.՝ 51 156.6 մլն դրամ, 2005թ.՝ 39 767.4 մլն դրամ),

1.2 Մասնավոր հատված՝ **91 373.6** մլն դրամ (2009թ.՝ 79 666 մլն դրամ, 2008թ.՝ 72 666.3 մլն դրամ 2007թ.՝ 69 588.1 մլն դրամ, 2006թ.՝ 67 066 մլն դրամ, 2005թ.՝ 75 158.2 մլն դրամ),

1.3 Մնացյալ աշխարհ՝ **4 969.4** մլն դրամ (2009թ.՝ 2 938.3 մլն դրամ, 2008թ.՝ 4 516.4 մլն դրամ 2007թ.՝ 4 582.9 մլն դրամ, 2006թ.՝ 6 029 մլն դրամ, 2005թ.՝ 6 268.1 մլն դրամ):

2. Իրականացված գործառույթների ընդհանուր ծավալը 2010թ. կազմել է **159 086.9 մլն դրամ** (2009թ.՝ 145 313.3 մլն դրամ, 2008թ.՝ 137 042.6 մլն դրամ, 2007թ.՝ 139 259.8 մլն դրամ, 2006թ.՝ 124 251.6 մլն դրամ, 2005թ.՝ 121 193.6 մլն դրամ), որից.

2.1 **Բժշկական օգնության ծառայություններ՝ 70 475.3 մլն դրամ** (2009թ.՝ 73 524.9 մլն դրամ, 2008թ.՝ 77 967.7 մլն դրամ 2007թ.՝ 70 872.8 մլն դրամ, 2006թ.՝ 69 717.5 մլն դրամ, 2005թ.՝ 77 421.7 մլն դրամ),

2.2 **Վերականգնողական օգնության ծառայություններ՝ 1 728 մլն դրամ** (2009թ.՝ 1 471.2 մլն դրամ, 2008թ.՝ 1 546.1 մլն դրամ, 2007թ.՝ 1 755.9 մլն դրամ, 2006թ.՝ 1633.5 մլն դրամ, 2005թ.՝ 1316.8 մլն դրամ),

2.3 **Բուժքույրական երկարաժամկետ խնամքի ծառայություններ՝ 11.8 մլն դրամ** (2009թ.՝ 296 մլն դրամ, 2008թ.՝ 51.3 մլն դրամ, 2007թ.՝ 5.1 մլն դրամ),

2.4 **Բուժօգնության օժանդակ ծառայություններ՝ 11 946.4 մլն դրամ** (2009թ.՝ 9 949.1 մլն դրամ, 2008թ.՝ 8 919.6 մլն դրամ, 2007թ.՝ 6 201.8 մլն դրամ, 2006թ.՝ 3102 մլն դրամ, 2005թ.՝ 3814.7մլն դրամ),

2.5 **Ամբուլատոր պացիենտներին բաշխվող բժշկական օգնություն՝ 58 191.1 մլն դրամ** (2009թ.՝ 33 129.1 մլն դրամ, 2008թ.՝ 24 131.3 մլն դրամ, 2007թ.՝ 24 935.8 մլն դրամ, 2006թ.՝ 20854 մլն դրամ, 2005թ.՝ 18187.3 մլն դրամ),

2.6 **Հիվանդությունների կանխարգելում և հասարակական առողջապահության ծառայություններ՝ 5 738 մլն դրամ** (2009թ.՝ 6 762.8 մլն դրամ, 2008թ.՝ 6 008.9 մլն դրամ, 2007թ.՝ 4 350.8 մլն դրամ, 2006թ.՝ 5 713.7 մլն դրամ, 2005թ.՝ 4210.7 մլն դրամ),

2.7 **Առողջապահության և բժշկական ապահովագրության կառավարում՝ 2 293.5 մլն դրամ** (2009թ.՝ 1 225.8 մլն դրամ, 2008թ.՝ 1 274.2 մլն դրամ, 2007թ.՝ 1 500.4 մլն դրամ, 2006թ.՝ 1 784.6 մլն դրամ, 2005թ.՝ 1374.6 մլն դրամ),

2.8 **Ըստ տեսակի չդասակարգված առողջապահական այլ ծախսեր՝ 1 360.2 մլն դրամ** (2009թ.՝ 415.7 մլն դրամ, 2008թ.՝ 1 635.9 մլն դրամ, 2007թ.՝ 1 234.3 մլն դրամ, 2006թ.՝ 1478.6 մլն դրամ, 2005թ.՝ 1429.3 մլն դրամ),

2.9 **Առողջապահության հետ կապված գործառույթներ, HCR 1-5՝ 7 342.6 մլն դրամ** (2009թ.՝ 16 987.8 մլն դրամ, 2008թ.՝ 15 453.2 մլն դրամ, 2007թ.՝ 26 923 մլն դրամ, 2006թ.՝ 18 201.6 մլն դրամ, 2005թ.՝ 10 940 մլն դրամ),

2.9.1 *Առողջապահական ծառայություններ մատուցող հաստատությունների կապիտալի ձևավորում՝ 6 119.1 մլն դրամ* (2009թ.՝ 16 023.5 մլն դրամ, 2008թ.՝ 14 039.7 մլն դրամ, 2007թ.՝ 24 994.5 մլն դրամ, 2006թ.՝ 17409.3 մլն դրամ),

2.9.2 *Անձնակազմի կրթություն և ուսուցում՝ 1 108.1 մլն դրամ* (2009թ.՝ 756.6 մլն դրամ, 2008թ.՝ 1 068.9 մլն դրամ, 2007թ.՝ 1 441.6 մլն դրամ, 2006թ.՝ 619.5 մլն դրամ),

2.9.3 *Առողջապահության համակարգում իրականացվող հետազոտությունների և մշակումների ծախսեր՝ 115.4 մլն դրամ* (2009թ.՝ 207.6 մլն դրամ, 2008թ.՝ 344.6 մլն դրամ),

2.10 Ըստ տեսակի չդասակարգված ծախսեր՝ 0 (2009թ.՝ 1 550.9 մլն դրամ, 2008թ.՝ 60.2 մլն դրամ, 2007թ.՝ 1 631 մլն դրամ, 2006թ.՝ 3654.3 մլն դրամ, 2005թ.՝ 2498.7 մլն դրամ):

#### **4.1.4. Մատակարարներ և Ֆունկցիաներ (գործառնություններ) (ՄxՖ)հաշիվ**

Գիտարկելով Առողջապահության ազգային հաշիվների Մատակարարներ և Ֆունկցիաներ հաշվի տվյալները՝ արձանագրում ենք հետևյալը.

1. Ֆինանսական գործակալների ֆինանսավորած և Մատակարարների կողմից մատուցված ծառայությունների ընդհանուր ծավալը 2010թ. կազմել է **159 086.9 մլն դրամ** (2009թ.՝ 145 313.3 մլն դրամ, 2008թ.՝ 137 042.6 մլն դրամ, 2007թ.՝ 139 259.8 մլն դրամ, 2006թ.՝ 124 251.6 մլն դրամ, 2005թ.՝ 121 193.6 մլն դրամ), որից.

1.1 **Հիվանդանոցների խումբ՝ 60 450.1 մլն դրամ** (2009թ.՝ **59 060.9 մլն դրամ**, 2008թ.՝ 66 245.8 մլն դրամ, 2007թ.՝ 61 659.9 մլն դրամ, 2006թ.՝ 56 125.2 մլն դրամ, 2005թ.՝ 66 559.9 մլն դրամ), որից.

1.2 **Բուժքույրական երկարաժամկետ խնամքի ծառայություններ՝ 1 376.7 մլն դրամ** (2009թ.՝ 1 345.3 մլն դրամ, 2008թ.՝ 1 351.9 մլն դրամ, 2007թ.՝ 1 217.5 մլն դրամ, 2006թ.՝ 1035.1 մլն դրամ, 2005թ.՝ 830.7 մլն դրամ),

1.3 **Ամբուլատոր բժշկական ծառայությունների մատակարարների խումբ՝ 37 883.4 մլն դրամ** (2009թ.՝ 32 804.8 մլն դրամ, 2008թ.՝ 32 625.2 մլն դրամ, 2007թ.՝ 30 005.7 մլն դրամ, 2006թ.՝ 30 190.7 մլն դրամ, 2005թ.՝ 22 951.2 մլն դրամ),

1.4 **Դեղագործական և բժշկական նշանակության ապրանքների մատակարարների խումբ՝ 43 277.1 մլն դրամ** (2009թ.՝ 28 752.8 մլն դրամ, 2008թ.՝ 18 985.6 մլն դրամ, 2007թ.՝ 20 520.6 մլն դրամ, 2006թ.՝ 17 571.4 մլն դրամ, 2005թ.՝ 15 063.4 մլն դրամ),

1.5 **Հասարակական առողջության ծրագրերի իրականացում՝ 11 517.2 մլն դրամ** (2009թ.՝ 5 084.2 մլն դրամ, 2008թ.՝ 3 453.5 մլն դրամ, 2007թ.՝ 3 904.2 մլն դրամ, 2006թ.՝ 2 944.2 մլն դրամ, 2005թ.՝ 2 513.3 մլն դրամ),

1.6 **Առողջապահության կառավարում և ապահովագրություն՝ 2 067.8 մլն դրամ** (2009թ.՝ 7 839.6 մլն դրամ, 2008թ.՝ 8 332.5 մլն դրամ, 2007թ.՝ 15 474.9 մլն դրամ, 2006թ.՝ 10893.5 մլն դրամ, 2005թ.՝ 7 721.1 մլն դրամ),

1.7 **Առողջապահության բնագավառի բոլոր այլ կառավարողներ՝ 0** (2009թ.՝ 0, 2008թ.՝ 23.6 մլն դրամ),

1.8 **Առողջապահության հետ կապված ծառայություններ մատակարարների խումբ՝ 2 488.1 մլն դրամ** (2009թ.՝ 3 101.5 մլն դրամ, 2008թ.՝ 2 075.7 մլն դրամ, 2007թ.՝ 1 477.7 մլն դրամ, 2006թ.՝ 831.8 մլն դրամ, 2005թ.՝ 1 459. 8 մլն դրամ),

1.9 **Մնացյալ աշխարհ՝ 26.6 մլն դրամ** (2009թ.՝ 4 772.5 մլն դրամ, 2008թ.՝ 1 782.2 մլն դրամ, 2007թ.՝ 2 752. 6 մլն դրամ, 2006թ.՝ 859.4 մլն դրամ, 2005թ.՝ 1 281.3 մլն դրամ),

1.10 **Ըստ տեսակների չդասակարգված մատակարարներ՝ 0 մլն դրամ** (2009թ.՝ 2 551.7 մլն դրամ, 2008թ.՝ 2 166.6 մլն դրամ, 2007թ.՝ 2 246.8 մլն դրամ, 2006թ.՝ 3 800.2 մլն դրամ, 2005թ.՝ 2 812.8 մլն դրամ):


2. Իրականացված գործառնությունների ընդհանուր ծավալը 2010թ. կազմել է **159 086.9 մլն դրամ** (2009թ.՝ 145 313.3 մլն դրամ, 2008թ.՝ 137 042.6 մլն դրամ, 2007թ.՝ 139 259.8 մլն դրամ, 2006թ.՝ 124 251.6 մլն դրամ, 2005թ.՝ 121 193.6 մլն դրամ), որից.
- 2.1 **Բժշկական օգնության ծառայություններ՝ 70 475.3 մլն դրամ** (2009թ.՝ 73 524.9 մլն դրամ, 2008թ.՝ 77 967.7 մլն դրամ, 2007թ.՝ 70 872.8 մլն դրամ, 2006թ.՝ 69 717.5 մլն դրամ, 2005թ.՝ 77 421.7 մլն դրամ),
- 2.2 **Վերականգնողական օգնության ծառայություններ՝ 1 728 մլն դրամ** (2009թ.՝ 1 471.2 մլն դրամ, 2008թ.՝ 1 546.1 մլն դրամ, 2007թ.՝ 1 755.9 մլն դրամ, 2006թ.՝ 1633.5 մլն դրամ, 2005թ.՝ 1316.8 մլն դրամ),
- 2.3 **Բուժքույրական երկարաժամկետ խնամքի ծառայություններ՝ 11.8 մլն դրամ** (2009թ.՝ 296 մլն դրամ, 2008թ.՝ 51.3 մլն դրամ, 2007թ.՝ 5.1 մլն դրամ),
- 2.4 **Բուժօգնության օժանդակ ծառայություններ՝ 11 946.4 մլն դրամ** (2009թ.՝ 9 949.1 մլն դրամ, 2008թ.՝ 8 919.6 մլն դրամ, 2007թ.՝ 6 201.8 մլն դրամ, 2006թ.՝ 3102 մլն դրամ, 2005թ.՝ 3814.7 մլն դրամ),
- 2.5 **Ամբուլատոր պացիենտներին բաշխվող բժշկական օգնություն՝ 58 191.1 մլն դրամ** (2009թ.՝ 33 129.1 մլն դրամ, 2008թ.՝ 24 131.3 մլն դրամ, 2007թ.՝ 24 935.8 մլն դրամ, 2006թ.՝ 20854 մլն դրամ, 2005թ.՝ 18187.3 մլն դրամ),
- 2.6 **Հիվանդությունների կանխարգելում և հասարակական առողջապահության ծառայություններ՝ 5 738 մլն դրամ** (2009թ.՝ 6 762.8 մլն դրամ, 2008թ.՝ 6 008.9 մլն դրամ, 2007թ.՝ 4 350.8 մլն դրամ, 2006թ.՝ 5 713.7 մլն դրամ, 2005թ.՝ 4210.7 մլն դրամ),
- 2.7 **Առողջապահության և բժշկական ապահովագրության կառավարում՝ 2 293.5 մլն դրամ** (2009թ.՝ 1 225.8 մլն դրամ, 2008թ.՝ 1 274.2 մլն դրամ, 2007թ.՝ 1 500.4 մլն դրամ, 2006թ.՝ 1 784.6 մլն դրամ, 2005թ.՝ 1374.6 մլն դրամ),
- 2.8 **Ըստ տեսակի չդասակարգված առողջապահական այլ ծախսեր՝ 1 360.2 մլն դրամ** (2009թ.՝ 415.7 մլն դրամ, 2008թ.՝ 1 635.9 մլն դրամ, 2007թ.՝ 1 234.3 մլն դրամ, 2006թ.՝ 1478.6 մլն դրամ, 2005թ.՝ 1429.3 մլն դրամ),
- 2.9 **Առողջապահության հետ կապված գործառնություններ, HCR 1-5՝ 7 342.6 մլն դրամ** (2009թ.՝ 16 987.8 մլն դրամ, 2008թ.՝ 15 453.2 մլն դրամ, 2007թ.՝ 26 923 մլն դրամ, 2006թ.՝ 18 201.6 մլն դրամ, 2005թ.՝ 10 940 մլն դրամ),
- 2.9.1 *Առողջապահական ծառայություններ մատուցող հաստատությունների կապիտալի ձևավորում՝ 6 119.1 մլն դրամ* (2009թ.՝ 16 023.5 մլն դրամ, 2008թ.՝ 14 039.7 մլն դրամ, 2007թ.՝ 24 994.5 մլն դրամ, 2006թ.՝ 17409.3 մլն դրամ),
- 2.9.2 *Անձնակազմի կրթություն և ուսուցում՝ 1 108.1 մլն դրամ* (2009թ.՝ 756.6 մլն դրամ, 2008թ.՝ 1 068.9 մլն դրամ, 2007թ.՝ 1 441.6 մլն դրամ, 2006թ.՝ 619.5 մլն դրամ),
- 2.9.3 *Առողջապահության համակարգում իրականացվող հետազոտությունների և մշակումների ծախսեր՝ 115.4 մլն դրամ* (2009թ.՝ 207.6 մլն դրամ, 2008թ.՝ 344.6 մլն դրամ),
- 2.10 **Ըստ տեսակի չդասակարգված ծախսեր՝ 0** (2009թ.՝ 1 550.9 մլն դրամ, 2008թ.՝ 60.2 մլն դրամ, 2007թ.՝ 1 631 մլն դրամ, 2006թ.՝ 3654.3 մլն դրամ, 2005թ.՝ 2498.7 մլն դրամ):

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ


1. Guide to producing National Health Accounts, WB, WHO, USAID
2. Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, վիճակագրական վերլուծական զեկույց, ըստ 2010թ-ի տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության արդյունքների, ՀՀ ԱՎԾ, Ե. 2011, էջ 139-151
3. Սպառողական գների ինդեքսը (գները) ՀՀ-ում 2009թ. հունվար դեկտեմբերին, վիճակագրական տեղեկագիր, ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Ե. 2010, էջ 25, 28-29, 130-131:
4. Սպառողական գների ինդեքսը (գները) ՀՀ-ում 2010թ. հունվար դեկտեմբերին, վիճակագրական տեղեկագիր, ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Ե. 2011, էջ 25,28-29, 126-127:

## ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ


### Գծապատկեր 1




### Գծապատկեր 2




**Գծապատկեր 3** Ամբողջական ֆինանսավորմամբ մատուցված ծառայությունների կառուցվածքն ըստ «Հիվանդանոցներ» խմբի բաղադրիչների 2005-2010թ.




**Գծապատկեր 4.** Ամբողջական ֆինանսավորմամբ մատուցված ծառայությունների կառուցվածքն ըստ «Հիվանդանոցներ» խմբի բաղադրիչների 2010թ.



**Գծապատկեր 5. Մատակարարների կողմից մատուցված ծառայությունների կառուցվածքը 2005-2010թթ. տոկոսով**



**Գծապատկեր 6. HCl Բժշկական օգնության ծառայությունների կառուցվածքը 2010թթ., տոկոսով**





Աղյուսակ 1. ԱՀՀ Ֆինանսավորման աղբյուրներ և ֆինանսական գործակալներ հաշիվը (մլրդ դրամ)

HF Ֆինանսական գործակալներ	FS Ֆինանսավորման աղբյուրներ																			
	FS 1 Պետական աղբյուրներ					FS 2 Մասնավոր ֆոնդեր/ միջոցներ					FS 3 Արտաքին աղբյուրներ/ միջոցներ («Մնացյալ աշխարհ»)					Ընդամենը				
	2006	2007	2008	2009	2010	2006	2007	2008	2009	2010	2006	2007	2008	2009	2010	2006	2007	2008	2009	2010
HF.A Պետական հատված	42.1	50.8	53.1	56.9	58.3	0	0	0	0	0	9.02	14.3	6.7	5.8	4.4	51.2	65.1	59.8	62.7	62.7
HF.B Մասնավոր հատված	0	0	0	0	0	64.1	67.3	70	76.2	88.8	2.9	2.3	2.7	3.5	2.6	67.1	69.6	72.7	79.7	91.4
HF.3 Մնացյալ աշխարհ	0	0	0	0	0	0	0	0	0	0	6.0	4.6	4.5	2.9	5	6.0	4.6	4.5	2.9	5
Ընդամենը	42.1	50.8	53.1	56.9	58.3	64.1	67.3	70	76.2	88.8	17.92	21.2	13.9	12.2	12	124.3	139.3	137.0	145.3	159.1

**Աղյուսակ 2. ԱՀՀ ֆինանսական գործակալներ և մատակարարներ հաշիվը (մլրդ դրամ)**

FP Մատակարարներ	FA Ֆինանսական գործակալներ																			
	HF.A Պետական հատված					HF.B Մասնավոր հատված					HF 3 «Մնացած աշխարհ» հատված					Ընդամենը				
	2006	2007	2008	2009	2010	2006	2007	2008	2009	2010	2006	2007	2008	2009	2010	2006	2007	2008	2009	2010
<b>HP.1 Հիվանդանոցներ</b>	17	24.3	26.1	6.3	30.7	38.8	37.1	40	32.8	29.2	0.3	0.2	0.1	0.006	0.5	<b>56.1</b>	<b>61.6</b>	<b>66.2</b>	<b>59.1</b>	<b>60.4</b>
<b>HP.2 Բուժքույրական և ըստ բնակության վայրի խնամքի կազմակերպություններ</b>	1	1.2	1.3	1.3	1.4	0	0	0	0	0	0	0	0	0	0	<b>1</b>	<b>1.2</b>	<b>1.3</b>	<b>1.3</b>	<b>1.4</b>
<b>HP.3 Ամբուլատոր բժշկական ծառայություններ մատակարարողներ</b>	18.7	18.2	19.5	17.2	20.1	9.3	11.1	12.3	15.5	17.1	2.2	0.7	0.8	0.1	0.7	<b>30.2</b>	<b>30</b>	<b>32.6</b>	<b>32.8</b>	<b>37.9</b>
<b>HP.4 Դեղագործական և բժշկական նշանակության ապրանքների մանրածախ և այլ մատակարարներ</b>	0.1	0	0	0	0	17.5	20.5	18.9	28.7	43.3	0	0	0	0	0	<b>17.6</b>	<b>20.5</b>	<b>19</b>	<b>28.7</b>	<b>43.3</b>
<b>HP.5 Հասարակական առողջապահության ծրագրերի իրականացում և կառավարում</b>	2.1	3.2	2.7	3.4	6.2	0.5	0.5	0.5	1.6	1.8	0.4	0.2	0.2	0.1	3.5	<b>2.9</b>	<b>3.9</b>	<b>3.4</b>	<b>5.1</b>	<b>11.5</b>
<b>HP.6 Առողջապահության կառավարում և ապահովագրություն</b>	10.1	14.8	7.9	7.3	1.8	0.1	0.2	0.3	0.4	0.1	0.6	0.5	0.1	0.1	0.2	<b>10.9</b>	<b>15.5</b>	<b>8.3</b>	<b>7.8</b>	<b>2.1</b>

HP.7 Առողջապահության բնագավառի (բացառությամբ տնտեսության) բոլոր այլ կառավարողները	0	0	0.02	0	0	0	0	0	0	0.0	0	0	0	0	0	0	0	0.02	0.02	0
HP.8 Առողջապահության հետ կապված ծառայություններ մատուցող հաստատություններ	0.7	0.5	1.1	2.4	2.5	0.03	0.2	0.5	0.6	0.0	0.1	0.5	0.5	0.1	0.0	0.8	1.5	2.1	3.1	2.5
HP. 9 Մնացյալ աշխարհը	0.8	0.9	1.2	4.6	0.03	0	0	0	0	0	0	0.9	0.6	0.2	0	0.8	2.7	1.8	4.8	0.03
HP.nskԸստ տեսակի չդասա-կարգված մատակարարներ	0.6	0.7	0.02	0.2	0	0.8	0.2	0	0.1	0	2.4	1.5	2.1	2.3	0	3.8	2.4	2.2	2.6	0
<b>Ընդամենը</b>	<b>51.1</b>	<b>63.8</b>	<b>59.8</b>	<b>42.7</b>	<b>62.7</b>	<b>67.0</b>	<b>69.8</b>	<b>72.5</b>	<b>79.7</b>	<b>91.5</b>	<b>6.0</b>	<b>4.5</b>	<b>4.4</b>	<b>2.9</b>	<b>4.9</b>	<b>124.1</b>	<b>139.3</b>	<b>136.9</b>	<b>145.3</b>	<b>159.1</b>

Աղյուսակ 3. ԱՀՀ ֆինանսական գործակալներ և գործառույթներ /ֆունկցիաներ (մյոդ դրամ) FA Ֆինանսական գործակալներ

F Գործառույթներ	FA Ֆինանսական գործակալներ																			
	HF.A Պետական հատված					HF.B Մասնավոր հատված					HF 3 Սնացյալ աշխարհ					Ընդամենը				
	2006	2007	2008	2009	2010	2006	2007	2008	2009	2010	2006	2007	2008	2009	2010	2006	2007	2008	2009	2010
HC.1 Բժշկական օգնության ծառայություններ	24.6	26.8	32.1	33.4	33.0	44.5	43.6	45.6	40.6	36.6	0.6	0.5	0.3	0.1	0.5	<b>69.7</b>	<b>70.9</b>	<b>77.9</b>	<b>73.5</b>	<b>70.5</b>
HC.2 Վերականգնողական օգնության ծառայություններ	0.9	0.9	0.7	0.9	0.9	0.7	0.8	0.8	0.8	0.8	0	0	0	0	0	1.6	1.7	1.5	1.5	1.7
HC.3 Բուժքույրական երկարաժամկետ խնամքի ծառայություններ	0	0	0.0	0.0	0.0	0	0.0	0	0	0	0	0	0	0.1	0	0	0.0	0.0	0.3	0.0
HC.4 Բուժօգնության օժանդակ ծառայություններ	1.4	3.5	5	5.1	5.1	1.7	2.8	3.9	5	6.8	0	0	0	0.0	0.0	3.1	6.3	8.9	9.9	11.9
HC.5 Ամբուլատոր պացիենտներին բաշխվող բժշկական ապրանքներ	3.4	4.3	5.1	9.2	5.9	17.5	20.6	19	28.7	45.2	0	0	0.1	0.0	3.8	20.9	24.9	24.2	33.1	58.2
HC.6 Հիվանդությունների կանխարգելում և հասարակական առողջապահության ծառայություններ	3.6	4	4.2	4.2	4.2	0.2	0	1.1	2.4	1.5	2	0.3	0.8	0.2	0	5.8	4.3	6.1	6.8	5.7
HC.7 Առողջապահության և բժշկական ապահովագրության կառավարում	1.1	0.9	1.2	2	1.9	0	0	0.1	0.1	0.1	0.7	0.6	0	0.0	0.2	1.8	1.5	1.3	1.3	2.3

HC.nsk Ըստ տեսակի չդասակարգված առողջապահական այլ ծախսեր	1.2	1.2	1.6	1.4	1.4	0.3	0	0	0.0	0.0	0	0	0	0	0	1.5	1.2	1.6	0.4	1.4
HCR.1-5 Առողջապահության հետ կապված գործառնություններ	14.4	21.9	9.9	6.5	10.8	2.2	1.8	2.2	2.1	0.4	1.6	3.2	3.3	2.5	0.5	18.2	26.9	15.4	17	7.4
HC.R.nskԸստ տեսակի չդասակարգված ծախսեր	0.6	1.6	0	0	0	0	0	0.0	0	0	1.1	0	0	0	0	1.7	1.6	0.0	1.5	0
Ընդամենը	51.2	65.1	59.8	62.7	63.2	67.1	69.6	72.7	79.7	91.4	6	4.6	4.5	2.9	5	124.3	139.3	136.9	145.3	159.1